

24280

891.99-192

U-91

0  
W. D

20 03

4342

Երկր  
1888

ՀՐԱՏԱՐԱԿ. Ս. ՄԵԼԻՔ-ՍՊՆՍՈՒՆԵՐՆԵՐ

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆՔ

ՅԱՅՏՆԻ ՅԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԹՈՅԼՏԻՈՒԹ.



ԱՐԵՎ ԴՊՅՆԵՐ

ՉՈՐՄՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՆՆ

Թող արևան ճախը, զրեմը ֆիզայի  
Արձագանք զանի հարսիկան սրտում.  
Բազմը ճշտածի կաշի մեզ կոնչի  
Որ ազատ շնչեր մեր սիրուն երկրում  
Արե՛ր.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելևրարաչարժ ապարան ԵՂ Օ և Ա. Վանուխայա N 3.  
1908

Arm.  
3-4766a

AM-315

3-4766a

ՀՐԵՏՈՐԿՈՒԹԻՒՆ Ս. ՄԵԼԻՔ-ՍՈՂՍՈՒՆԵՆԻ

891.99-192

Ա-91



ԱՐԵՎԷՂԱՅԵՆ

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թող արեան ծայնը, վրէժը ֆիղայի,  
Արձագանք գտնի հայուժեան սրտում.  
Բողոքը ծնշւածի կուի մեզ կանչի,  
Որ աղառ շնչենք մեր սիրուն երկրում.  
ՍԻՆԻԲ

Թ Ի Յ Լ Ի Ս

Էլէքտրաշարժ տպարան «Է Պ Օ Խ Ա» Գանսովսկայա № 3.  
1908

№ 21193

2119

7342

## ԵՐԿՈՒ ԽՕՍ-Ք

Իզուր չէ ասուում, թէ ըւրաքանչիւր երկրի ժողովրդական  
ճրգը ընթացիկ կեանքի հայելին է:

Այդ երգի ելեէջների մէջ անդրադառնում են ժողովրդի վիշ-  
տըն ու թախիծը, դառնութիւնն ու երջանկութիւնը:

Ինչպիսի պատկեր ներկայացնում է ընթացիկ կեանքը, նոյն  
պիսի շեշտեր էլ հնչեցնում է ժողովրդական երգը:

Այդպէս է ամեն տեղ, այդպէս է և մեզանում— հայերիս մէջ:

Վերջին տարիներում հայկական կեանքը՝ թէ թիւրքիայում  
և թէ Ռուսաստանում անվերջ արիւնհեղութեան ու աւերածու-  
թեան առարկայ է դարձել, ուստի և հայի ժողովրդական վերջին  
երգերն էլ շարունակ «արիւնոտ ձայներ» են հնչեցնում, միևնոյն  
ժամանակ գովելով ու փառաբանելով այն յեղափոխական հերոս-  
ներին, որոնք իրանց կեանքի գնով աշխատել են բռնակալութեան  
ու դաժանութեան հարւածները պիմագրաւել, սեփական արիւնով  
մեղմացնել ու ոչնչացնել:

Ահա այդ երգերը, գաղափարական հերոսների այդ գովքն ու  
փառաբանութիւնն է, որ հաւաքագրելով «Արեան Ձայներ» խո-  
րագրի տակ, առաջարկում ենք ընթերցողներին:

Առաջարկելով «Արեան Ձայներ» չորրորդ տպագրութիւնը,  
փոփոխւած և ընդարձակւած, աւելացնելով հայ հեղինակների ըն-  
տիր բանաստեղծութիւնները, իրենց թոյլտուութեամբ, վերջում կը-  
ցելով մի շարք ժողովրդական երգեր ու խաղեր, յոյսով ենք, որ  
այս անգամին բաւարարութիւն տւած կ'լինենք հայ հասարակու-  
թեան պահանջներին:

Ս. Մելիք-Սողոմոնեան



(1502-63)

92656-ԱԷ

631-2002



Խ Ա Ղ Ա Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Չ Ե Ձ

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,  
Որ կռուի դաշտում ընկար անվեհեր,  
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,  
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք,  
Դուք սուր առնելով՝ սրով կամեցար  
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.  
Քայց աւանդ ձեզ հետ մեռան ձեր իղձեր...  
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութիւն ձեզ ազգի քաջ որդիք,  
Սև հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.  
Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում  
Մհա խնդալից նոր կեանք է հռում.  
Փթթել է դարձեալ դարուն ծաղկաւէտ,  
Քայց աւանդ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...  
Յուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,  
Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,  
Թող չը վրդովին ձեր սուրբ ոսկորներ,  
Ձեր վերջին կամբը՝ «անէծքը թշնամուն» —  
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն,  
Անէծք ու վրէժ — դորա մեր միակ  
Կը լինեն կեանքի հղօր նպատակ...  
Քնեցէք խաղաղ, հերոս եղբայրներ,  
Թող չը վրդովեն ձեր սուրբ ոսկորներ:

Ա. Մատուրեան

# Մ Ե Ր Մ Ա Յ Ր Ե Ր Ո Ւ Ն

Աչերնիդ պղտոր, շորերնիդ կարմիր,  
 Խանձլած մագերնիդ մրրրկին տւած,  
 Որոն կ'աղօթէր ցաւատանջ մայրեր,  
 Միթէ դեռ կապրի հայու կոյր Աստուած ..

Ալ վերջ աղօթքին, Խունկի՛ն ու Խաչին,  
 Սուրբի, արիւնի այս որբ օրերուն,  
 Չեր շրթները թող տարփանքով փակչին,  
 Աստուածաանարգ Պողպատին փայլուն:

Աղապակեցէր ձեր գաւակներուն  
 Թէ—Աստուածն հայու մտաւ հողի գոգ  
 «Ահա ձեզ Կապար ու Պողպատ շողուն  
 «Մեռցնել—մեռնիլ, ալ մի ընէր հոգ:»

Վ. Կարապետի



# Ա Ջ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ջ Ա Ն Գ

Ազատութեան Ձանգ, դու վեհ զօղանջէ  
 Կովկասեան վսեմ, վէս բարձրունքներից,  
 Ինչպէս մրրիկ, շաչէ, շառաչէ,  
 Մինչև սիգապանձ Ազատն-Մասիս:

Ընհուն վրէժի եւ ըմբոստացման,  
 Ե՛ւ բուռն ցասման բառբառը հնչէ,  
 Ժողովուրդների անկախ, ինքնիշխան՝  
 Դաշն ազատական՝ խրոխտ զօղանջէ:

Լեռներից խրճիթ, և ձորերից ձոր,  
 Եւ սրտերից սիրտ ձայնդ թող թուչի  
 Եւ ընդվզումի պատգամդ հզօր.  
 Յաւիտեան անլուռ երբէք չը հանգչի:

Ըմբոստ ոգիներ, թե առէր, հասէր  
 Եւ զանգահարներ ամուր, միահամուռ.  
 Ձանգն ազատութեան զանգահարեցէր  
 Կովկասի համար հանուր, ընդհանուր,

Եւ որոտա՛, Ձանգ, և դու արթնացրու  
 Դարառը նիրհից Մասիսն ու Կազբէկ,  
 Թափ տուր թևերդ, արծիւ լեռներու  
 Քնած առիւծներ, բաշերնիդ թօթէք:

Եւ բաւական է՝ անարդ լծի տակ  
Մենք ստրուկ մ'նանք՝ ձեռներս շղթայ.  
Կապանք փշրելու մեզ թոյն ու կրակ,  
Մեզ ուժ և կորով, վրէժ սրօտան.

Եւ մեզ ամենքիս մոռնան, կոչէ  
Մահւան ու փառքի դաշտը պայքարի.  
Սրբազան ռազմիկ շեփորը գոչէ  
Ընդդէմ բռնութեան, ամբարիշտ Չարի:

Հրաբուխների դու վսեմ երկիր,  
Եւ ծովերից—ծով հուժկու մրրկէ՝  
Քո սուրբ ոտքերով և գարկ,—և ժայթքի՛ր  
Բռնութեան գլխին, աշխարհը փրկէ,

Եւ ազատութեան—նորոգ արևի  
Ոսկի ներբողոյ, Չանգ, գլարթ հնչէ.  
Բիւր գազաթներից ազատ Կովկասի  
Սուրբ եղբայրութեան տօնին մեզ կանչէ:

Ա. Խաչատրյան



### ԱԶԻՋ ՄԷՐԻԿ

Ազիզ Մէրիկ, բեզի թողի,  
Դարդ ունէի, դուրս ընկայ,  
Սուրբ վաթանիս ժողովրդի  
Ձէնը կանչեց դուրս ընկայ:

Դու՛ման սարեր, դարդլու սրտեր,  
Դարդ ու դարման մեր վաթան,  
Ա՛խ, գլուխս քու ուղուրին  
Ա՛խ, մեր անո՛ւշ մէր-վաթան...

Էյ, Սիս-Մասիս, ձեզի մեռնիմ,  
Իմ Սիս-Մասիս, ջան տղերք.  
Դուք տասի չափ—հազարի չափ,  
Ձեզի մեռնիմ, ջան տղերք:

Առիւծի պէս առուն կուգայ  
Բաշը տւած բարերին,  
Առիւծի պէս, հայ-աղպրտանք,  
Վճռ, վրայ տանք դուշմրնին:

Մէկ սիրտ դառնանք, բիւր սուր դառնանք,  
Ջարդենք, փշրենք դուշմրնին:  
Ջան, տղերք ջան, գարկենք—գարկիւնք,  
Մեր-վաթանի ուղուրին.

Յայ—Դուստն





### ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գուլթան, վարի, գուլթան,  
 Օրն եկել է, ճաշ դառել,  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Օրհնեալ է Աստուած, հօրօւէլ:

Քաշի՛ր, եզր, ուսիդ մատաղ,  
 Քաշի՛ր՝ քաշենք, վար անենք.  
 Ճիպտին արա, քըշիք, հօտաղ,  
 Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,  
 Քեօխէն կըզայ, կը ծեծի.  
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց.  
 Կը բարկանայ, կանիծի:

Էն օրն եկան թուջի արին,  
 Հարկ են ուզում տէրութեան.  
 Ինչ տամ կոռին ու բէգեարին...  
 Վարի, վարի, իմ գուլթան:

Չեռս պակաս, ուժըս հատած,  
 Հագար ու մի ցաւի տէր,  
 Ինձ են նայում մերկ ու սոված  
 Մի տուն լիքը մանուկներ:

Արի, գուլթան, վարի, գուլթան,  
 Օրն եկել է, ճաշ դառել.  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Օրհնեալ է Աստուած, հօրօւէլ:

Յ. Թումանեան

### Ը Ն Կ Ե Ր Ի Ն

Ձայնդ գերի, անունդ բանտարկուած,  
 Մինչ երբ պիտ մնաս ալդպէս մոլորուած.  
 Մանկական ազգանունդ շատերին յայտնի,  
 Ափոս քաջութիւնդ է ուրիշ անուանի:

Արդեօք մինչ երբ քո միակ ջանքով,  
 Դու պիտի փայլես օտար անունով.  
 Խորամիտ համբաւդ արդէն նա վաղուց  
 Քաջաբար հասաւ ամեն մի շրջան:

Հայրենիքդ ամբողջ քո միակ անունով,  
 Ղազախ գաւառը կըպարծենայ քեզնով.  
 Ինքդ պարտաճանաչ ուղղութեան հետևող,  
 Վստահ եմ, թշնամուդ կը լինես յաղթող:

Տասնեակ տարի է թողած հայրենիքդ,  
 Օտար երկիրներ կը շրջես անդադար.  
 Ազատութեան սիրոյ անունդ կը զոհես,  
 Ինչպէս դու լինիս միակ սիրահար:

Այստեղ էլ դու ազատ Դաշնակին յարդող,  
 Պատիւ անուանը անվերջ հետևող.  
 Նպատակդ բարի, բաջ ես ազատութեան  
 Ապագայի սիրելի ընդմիջտ, յաւիտեան:



(ՊԱՏԻՆ)

Դու ուզում ես, որ քո գրքում մի բան գրեմ աննման,  
 Որ, իբր թէ, դու իմ անուն չըմոռանաս յաւիտեան:  
 Քան գրքոյկիդ թերթիկներում դու իմ անուն պիտ պահես,  
 Չէ որ մատաղ սրտիդ խորքում աւելի մեծ տեղ ունես:

### Ս Ա Ք Ո Յ Ի Ե Ր Ք Ը

Այն օրը, որ ես բեզ անսայ էլ ուրիշին չըսիրեցի  
 Ի՞նչեր ցերեկ աղաչելով՝ քաջիդ կեանք արև խնդրեցի  
 Այդ պատճառով շատ սիրեցի, որտեղ տեսայ Սևբարեցի.  
 Սև-բարիդ զուրբան Սագօյ ջան, ջան ջիւան ջան:

Բոքիկ ոտով ուխտ գնացի, փառք Աստուծոյ մուրա-  
 գիս հասայ,

Այն ինչ երջանիկ օր էր, որ բեզ սկզբում Դերիկ տեսայ,  
 Դերիկիդ զուրբան Սաքօ ջան, ջան, հոգի ջան:

Հարց արեցի վարդապետին, ասի՝ ո՞վ է այդ արեղան  
 — Արեղայ չէ հոգիս, գինւոր է այդ սիրուն տղան,  
 Զինւորիդ զուրբան Սագօ ջան, ջան ասլան ջան:

Պատարագ վերջացրին, գնացին գարկելու նշան,  
 Մէկդին Պետօ մէկդին Կարօ, ինչ սիրելի ընկերներ կան  
 Ընկերիդ զուրբան Սագօ ջան, ջան ասլան ջան:

Երկար յաղթութիւնից յետոյ, տանջանքների գէմ  
 կուելով  
 Անյաղթ ջան-ֆիդայ մեծ մարդ կոչման արժանացար  
 Այդ դէպքումն էլ պատմութեան մէջ անյաղթելի փառք  
 ստացար,  
 Անյաղթիդ զուրբան Սագօ ջան, ջան հայդուկ ջան:

### Կ Ռ Ո Ի Ն Կ Ի Ն

Կանչէ, կուունկ, կանչէ  
 Քանի գարուն է.

Դարիբներու սիրտը  
 Դունտ—գունտ արուն է:

Կուունկ - ջան, կուունկ - ջան, գարուն է  
 Կուունկ—ջան, կուունկ—ջան, գարուն է  
 Ա՛խ, սիրտս արուն է:

Կանչէ, կոունկ, կանչէ  
 Քանի արօտ է,  
 Աշխարհն արեգակ  
 Միրտս կարօտ է:  
 Կոունկ—ջան, կոունկ—ջան, արօտ է  
 Կոունկ—ջան, կոունկ—ջան, արօտ է  
 Ա՛խ, սիրտս կարօտ է:

Կանչէ, կոունկ, կանչէ  
 Քանի արև է.  
 Աշուն կերթաս երկիր  
 Եարիս բարևէ:  
 Կոունկ—ջան, կոունկ—ջան, արև է  
 Կոունկ—ջան, կոունկ—ջան, արև է  
 Ա՛խ, եարիս բարևէ:

**ՎԱՆԵՅԻ ՄՕՐ ԵՐԳԸ**

Պզտի տղայ չեմ օրօրիլ, օրօրանքդ, որ բուն ըլլաս,  
 Հայ ախպրբարիբդ ոտքի ելան, մենակ դո՛ւ ետ պիտ մնաս.  
 Զարթէ, հոգիս, անուշ բունէդ թո՛ղ աչերդ լոյս տեսնեն,  
 Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց հայ ազգին:

Չար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վալը ընկաւ,  
 Թախտի տակին հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.  
 Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,  
 Միրուն որդիս միթէ մենակ շար լուծի տակ պիտ մտնէ:

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողացինք ու լացինք,  
 Աղի, աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուացինք.  
 Բայց նա չանսաց պաղատանքին ողորմել հայերուն.  
 Այժմ, հայ ենք, նա կը լսէ շառաչիւնը սուրերուն:

Տուր, սիրական, քանզեմ ձեռքիդ, պալուլները,  
 Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ,  
 Մտրուկ գնան արեան դաշտը, վերադարձիր ազատուած,  
 Արդեօք մի օր պիտի լսես մեր խնդիրը, ո՞վ Աստուած:

**Յ Ո Ր Պ Ո Ր Հ Ա Յ Ի Ն**

Կենաց և մահու փողերն հնչեցին,  
 Հայ բաջի սրտում հուր բորբոքեցին,  
 Մեր եղբարց արեան հոտն ենք հոտոտում,  
 Եւ դարձեալ լուում, դարձեալ համբերում:

Երբ մեր դարևոր գազան թշնամին,  
 Բացած բերանը վարշ դժոխային,  
 Ուզում է իսպառ ճնշել, կլանել,—  
 Այդ ճգնաժամին էլ ի՞նչ համբերել:

Ով որ կը ցանկանայ միշտ անմահ լինել,  
 Ահա, ասպարէզ պէտք է շտապել,  
 Սուր ու հրացան իւր ձեռքում բռնած  
 Թող փութայ այնտեղ վրէժով լցուած:

Ժլատ վաշխառուն անգոյն, անզգայ,  
Դեռ ծիծաղում է սուրբ գործի վրայ,  
Հեշտասէր, մօլի տուփանքի որդին  
Դարձեալ չէ ուզում օգնել իւր ազգին:

Էլ որ աւուր ես կտրիչ տղամարդ  
Պահել այդ ձեռքը առոյգ ու զուարթ,  
Պինդ-պինդ բազուկներդ երկաթի նման,  
Որ չես հասնելու ազգիդ փրկութեան:

Բայց մենք ամենքս, երբ որ կլինենք—  
Անձնուէր, անվախ ինչպէս Անդրանիկ,  
Սարեր ու քարեր ոտքի տակ առած,  
Յայնժամ կը տեսնենք ազատ հայրենիք:



### Ե Ր Ա Ջ

Ես լսեցի մի անուշ ձայն  
Իմ ծերացած մօր մօտ էր.  
Փայլեց նշոյլ ուրախութեան,  
Բայց ափսոս որ երազ էր:

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ  
Թաւալում էր մարգարիտ—  
Նա յտակ էր որպէս բիւրեղ—  
Այն երանգ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի  
Յիշեց մանկութեան օրեր,—  
Մօրս համբոյրն ես զգացի.—  
Ա. խ. ափսոս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարօտողին.  
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—  
Բայց արտասուք գնում էին  
Ա. խ, այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. Շահազիզեան



### ՄԵՆԱԿԻ ՆԻԻՐԱԿԱՆ ՄՏԻԵՐԻՆ

(Եգոր Առստամեան)

Բոցիկու սարին սև ամպն է չորեր,  
Հովն է հեծեծում Բասենայ դաշտում.  
Ոսկի երգերդ, իմ ազիզ ընկեր,  
Էն հովն է երգում Բասենայ դաշտում:

Քաջ ընկերներով կռիւ սլացար  
Ազատ երգերով Արազի գաշտում.  
Նամարդ թշնամուն զարկիր, զարկեցար  
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում:

Ու ժողովուրդը կարօտ բո սիրուն,  
Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ


1502-63)  
631-2002



Երբում են անվերջ երգերդ սիրուն,  
Ու չեն մոռանում երգերդ անուշ:

Ա՛խ, սուրբ վէրքերով ընկերներիդ հեռ  
Արնոտ հողի տակ անուշ ընեցիր,  
Թո՛ղ ծանր չլիայ այն հողը վրէժ,  
Որ այնպէս հօօր, անհուն սիրեցիր...

Ա. Իսահակեան



### Հ Ս Յ Ե Ր Ի Ն

Պէտք է միանալ անպայման,  
Լինել մէկ սիրտ մի հողի.  
Մա է միակ ազատութեան  
Արդար ուղին հայ ազգի:

Թողնել բեն ու գարշելի ոխ,  
Մեր կործանիչ առարկան,  
Որ աւերեց իւր տուն ու տեղ,  
Քար-քանդ արեց Հայաստան:

Մինչև երբ արդեօք այս ատելի  
Պոռոզ «եսը» մեզ պատէ,  
Եղբայր եղբօր, բոյրը քրօջ  
Համար դարան պատրաստէ

Ամեն կողմից լսում ենք  
Թշուառ հայոց սուգ ու լաց  
Միթէ սա մեզ չէ բաւական  
Որ էլ մնանք բայքայուած:

Պէտք է միանանք անպայման  
Նորենը կեանքը հայկական,  
Կազմենք ոյժը միութեան,  
Գրկենք կոչն ազատութեան:

«Ես պատրաստ եմ ամեն ըուպէ,  
Լինել ծառայ միութեան,  
Դէ՛հ հայ եղբայրք, շուտ միացէք  
Զարդենք շղթան բունութեան:

### Մ Ի Վ Հ Ա Տ Ի Ր.

Մի վհատիր, յոգնած ընկեր, ոտքի ել,  
Առաջ թռի՛ր խիզախ ոգով անարդել.  
Թո՛ղ հաւատով լցւի սիրտդ այրական.  
Թո՛ղ սթափւիին վառ յոյսերդ առնական:

Ինչո՞ւ տրտում հեռու քաշուենք վհատած,  
Երբ մենք կեանքի տէր, իշխան ենք որոշած,  
Կեանքը մերն է, մենք ենք փոխում անպայման  
Առաջ շարժում նրա ընթացքն անսահման:

Մի վհատիր, տես ինչ յամառ եռանդով  
 Մարդիկ կեանքում աշխատում են լի յուսով.  
 Յոյսը նրանց կեանքի ոյժ է պարզևում.  
 Յոյսը նրանց առանց, առանց է մղում:

Օ, մի՛ ընկճւիր, տես թէ ինչպէս ամեն ինչ  
 Ունի և վիշտ և քաղցրութիւն սփռվիչ.  
 Յաւն ու վիշտը սուր վշտեր են մեր կեանքում.  
 Առանց վշի վարդ չես գտնիլ աշխարհում:

Ժիրայր.



ԳԷՈՐԳ ԶԱԽՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թուրքը լսաւ անունդ, Չաւուշ  
 Գէմրդ սիրուն, լեզուդ անուշ  
 Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար.  
 Թշնամեաց դարձուցիր ապուշ.  
 Սասունն է բո ապաստան.  
 Վրէժն է բո դատաստան:

Հայոց համար սպարապետ.  
 Անդրանիկին ընկեր վարպետ,  
 Սասունը կանգուն պահեցիր.  
 Օգնողն է բեզ սուրբ Կարապետ

Սասունն է բո ապաստանդ,  
 Վրէժն է բո դատաստանդ:

Կոտորեցիր քանիցս վաշտ.  
 Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.  
 Անվախ հերոս թուրքաց դէմը,  
 Մինչև վերջը մնացիր անհաշտ:  
 Սասունն է բո ապաստանդ,  
 Վրէժն է բո դատաստանդ:

Անվախ հերոս ես ճշտապէս  
 Հայք պիտի յիշեն մշտապէս,  
 Քաջաց քաջն ես Գէորդ սարգար  
 Վարդանի տիպ ես իսկապէս:  
 Սասունն է բո ապաստանդ  
 Վրէժն է բո դատաստանդ:

ԵՐԴՈՒՄՆ

Սուրբ օրօրանքով գաւակիս կերդնում,  
 Կերդնում իմ ծնողաց ես գերեզմանով:  
 Ինձ կեանք պարգևող արգանդով կերդնում  
 Եւ մրկբրտութեան սուրբ աւազանով:

Թող լինի վրկայ ինձ լեառն Արարատ,  
 Նոյեան տապանի ամուր պատւանդան,

Եւ Արարս գետի ջուրը անարատ,  
Որով կ'ուռուզի մայր մեր Հայաստան:

Թող լինին վրկայք իմ անսուտ երգման  
Պարծանք հայութեան արգաշէն նախնիք—  
Սուրբ Սահակ, Մեսրոպը, Աստուգ, Քաջ-Վարդան,  
Ողորմած Աշոտ, անըստի Գաղիկ...

Ազգիս սեզանի վրբայ ես զըրի,  
Իբրև ողջակէզ իմ այս սուրբ ուխտին—  
Իմ ինչքը, կեանքը, վայելքն աշխարհի,  
Աւելի բան զայն՝ քաղցը իմ ամուսին...

Գամա-Բարիպա

ՄՂԵՅՈՒ ՄՕՐ ԱՂԱԶԱՆՔԸ

Թիփի, բօրան մութ գիշերին  
Կը պարտուի ֆէղային,  
Պատուոն—տաշին խաշփակ թալած  
Ձեռքին թւանք ու սին:

Ա՛խ, ձեզ մատաղ, ջան ֆէղայիք—  
Ձեր մէր ձեզի թող մեռնի.  
Մշու սուլթան Սուրբ Կարապետ  
Ձեզի քօմակ թող եզնի:

Գուր վախցուցիր բուրդ անօրէն,  
Քշիք մեր սար ու ձորից,  
Քաֆըր բրդի աչք վախեցաւ  
Ջան ֆէղայու դուլուլից:

Ա՛խ ֆէղայիք, ձեր սատաղէն  
Ձեր խէտ տարէք զիմ տղէն  
Ձեր խէտ մեռնի, ձեր խէտ ապրի  
Ազգին մատաղ զիմ տղէն:

Թող զէն թողնի արօր ու մած  
Իմ մէկ ու ճար ազիկ լած,  
Քիչ թւանքի խէտ թող խաղայ  
Էլ թող չըտայ բրդին խարճ...

Չարխի-Յալաք

ԱՂՈ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՛խ, մեր սիրտը լիբը դարդ, ցաւ,  
Օր ու արև շրտեսանք  
Վա՛խ, մեր կեանքը սեռով անցաւ,  
Աշխարհից բան չիմացանք

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն  
Աշխարհի ճոխ սեզանից,

Մենք աշխարհի խորթ աղերքն-ենք,  
Մեզ փայլ չը կայ աշխարհից:

Խեղճ աղքատի հողին դուրս գայ  
Քարից-հողից հաց քամէ.—  
Բեռով հացը հարուստին տայ,  
Հարուստն ուտէ, փայելէ...

Խեղճ աղքատը դառը դատի—  
Դադարկ նստի... է՛յ, աշխարհ,  
էլ ինչու ես քարը թողնում  
Քարի վրայ, բար աշխարհ...

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,  
Օր ու արե չըտեսանք.  
Վա՛խ, մեր կեանքը սեով անցաւ,  
Աշխարհից բան չիմացանք:

Ա. Իսահակեան

ԽԱՐՈՒ ԲՍԱՆԻՆ ԱՆՔԵՐՍ ՎԱՊԱՆ

Մարտի բսանին աչքերս պաղան  
Զնտանի բակից երկինք աչքելով.  
Ասի՛ բալքի մի խաբրիկ մը առնեմ.  
Կուրնկներ կընցնին սօրանց ըռաֆով:

Եարապ, Տէր Ասուած ի՞նչ եղան աճապ,  
Ի՞նչի կըռնկներ էս տարի չեկան,  
Գիշերով գացին, յօր ես չը տեսնիմ.  
Խէ՛ ուրիշ ճամբխով թողին ու յնցան...

Ձան, ձէնիդ դուրպան, տեսայ քո ճամբան,  
ԶԱսուած կը սիրես, դու գատանց չերթաս,  
էս մեր վերեկից յնցուր քո քարւան.  
Քի խարցմունք մ' ունիմ, ձիջ ջուհապ մի տաս:

Դու բարով եկար, որ տեղ մնացիր,  
Ասան ձիկ, կուռնկ, ի՞նչի յանգըցար.  
Ձուապ մի տուր ձիջ, ախ սիրտսի պատուաւ,  
Դէհ, ասան կուռնկ, աճապ ի՞նչ տեսար:

Դուն կը բարձրանաս, ու կը ցածրանաս,  
Հարաֆից կուգաս, կերթաս ի հիւսիս  
Տարին երկու դիր քո բուն կը դնես.  
Նպաս, Անգօք, Սիս, Սիփան ու Մասիս:

Ձիկ ընկերներ կան էն սարանց վերէն,  
Աճապ ի՞նչ կէնին, խապրիկ մի չունիս,  
Տեսա՞ր տու գէնոնք, լսի՛ր գէնոնց ձէն,  
Ձուապ մի տուր ձիջ, դուրպան քի խոզիս:

Ինչ ումուտներով ճամբախ յէլոյ իս,  
Ինչ կէր սրտիս մէջ, ու ինչեր դարձաւ,



Յընկերներս յըմէն չորս տէրս կը կուլին  
Ես մացի գնտան, էս ա իմ դառ ցաւ,

Ընկերներսի ձիւյ, ճամբխու գրեցին  
Թէսլիմ էրէցին տէրով ամանաթ  
Գըկւանք մէկ մէկ, պաքեցինք գիրար,  
Ուրախ ին յըմէն սաղ ու սալամաթ:

Մկայ չը՞մ գիտեր, սաղ են, թէ՛ մեռան,  
Խապար մի չառայ, վիրնից խարցուցիմ.  
Ոտս ձեռս կապեր ին, թալիբ ին գնտան,  
Կուռնկ, բեգնից գառ խաբրբեր չունիմ:

Դէ՛ն ասա կուռնկ, տուր լուր աւետիս,  
Հըայրին ու Վահան աճապ ի՞նչ եղան,  
Ի՞նչ եղաւ Թորգոմ, էն Նէվրուզ, Որսորդ  
Դրախաւին, Աղբէր, Երկաթ, Թոխմախ, Խան.

Ա՛խ, իմալ ասեմ, ջիկարս կտրտաւ  
Ասա, ի՞նչ եղաւ ջէհէլ Մինակոր,  
Կոսնկ, ջուսալ տուր, լեզուս պապանձաւ,  
Յո՛ւր ա իմ դարբոտ Ազիզ Քրիստափոր  
Էլ ո՞ր մէկն ասիմ, ախ, քակուաւ խոզիս:

Մումուռ մաաւ սիրտս, թուլացաւ իմ ոտներ,  
Կոսնկ, ջուսալ տուր, ասա ի՞նչ եղան,  
Իմ խաբրբներով կարիչ ընկերներ...

. . . . .

Կուռնկ, ձէն չէտուր, գուր քարւան քաշեց  
Թուաւ գատըցաւ, աչքէս կորուսաւ  
Կարեց զիմ ումուտ, իմ բաժին թողեց  
Մութ գնտան, գնջիլ, սև դարդ ու սև ցաւ:

Չ. Փ.



### Գէթ ՄԻ ԱՆԳՍՄ...

Թող հարազատ երգս ազատ  
Քեզ մօտ թուչի հայրենիք,  
Անյոյս, մթին քո գազաթին  
Շինէ բունն իբ բնիկ:

Որպէս մըրիկ մէկիկ-մէկիկ  
Թափ տայ ծալած քո թևեր  
Թինդ-դզորդով շանթ-որոտով  
Նիրհզ վանէ դէպի վեր:

Մութ ու մէզում քո ճորտ հոգում  
Ծագի այգի վառ արև  
Եւ նոր կեանքին—քո փրկանքին  
Դէթ մի անգամ տայ բարև...

Շուշանիկ Կուրդիեան



## ԲԼԲՈՒԼԻՆ

Արի, բլբուլ, մէկ տեղ նստենք  
 Զէն-ձէնի տանք ու երգենք  
 էս օրուանից դառնանք աղբէր  
 Իրար խառնենք մեր ցաւեր:

Անցան գարուն, աշուն կուգայ  
 Զատ հեռու չէ և ձմեռ  
 Լաց, աղբէր ջան, էլ վարդ չկայ  
 Թնւփը մնաց կիսամեռ:

Երգենք, աղբէր, ցաւը երգենք  
 Դու քո մեռած ալ վարդի  
 Երգենք, աղբէր, ցաւը երգենք  
 Ես իմ աւեր Վաթանի:

Անցան գարուն, արնոտ գարուն  
 Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ  
 Ա՛խ, աղբէրս մնաց անտուն  
 Քոյրս քաղցից կիսամեռ:

Արի, բլբուլ, ցաւը երգենք  
 Վարդի, աւեր Վաթանի  
 Արի, աղբէր, իրար խառնենք  
 Մումնու ցաւը մեր սրտի:

Շուշանիկ Կուրդիսեան

## ՅԱՌԱ՛Ջ ԱՆՎԵՅԵՐ

Յառանջ անվեհեր, յառաջ միաբան  
 Արթնացած կեանքի ծագում է արփին  
 Շողերը պայծառ, լուսով անխափան  
 Յոյս է ներշնչում կռուի տագնապին:

Եւ հետզհետէ բռնակալ ոյժի  
 Շիրիմն է փորում խո՞ր, անգնդային  
 Ոճրագործութիւն սև մահագոյժի  
 Ըեփորն է հնչում ձայնով երկնային

Եւ օրըստօրէ շարքերը կռուող  
 Աճում են ըմբոստ անձնուրացներից  
 Անյայտութեան մէջ հոգիք տեգերող  
 «Վրէժ» են կանչում խոնաւ հիւղերից:

Եւ գիտակցութեան շունչն ամեն սրտում  
 Մըրիկ է հանել արդար պահանջի  
 Ով ընկերական կռիւն է մտնում  
 Նա ոչ մի ոյժից յետ չի նահանջի:

Յառանջ անվեհեր, յառա՛ջ մինչև վերջ  
 Մուրը նպատակին միշտ հաւատարիմ  
 Մահըն անմահ է արդար կռուի մէջ  
 Եւ ուխտատեղի մարտիկի շիրիմ:

Շուշանիկ Կուրդիսեան

Մ Օ Ր Ս ՈՒ Գ Ը

Սարի լանջին ընկած որդիս,  
Կրծքիդ վարդին ես մեռնեմ.  
Մէկ ճար գտիր արուն դարդիս,  
Այս քո դարդին ես մեռնեմ:

Արնաշաղախ մենակ ընկած,  
Կանաչը քեզ անկողին.  
Անուշ բնով լուռ-մունջ քնած՝  
Չես լսում դու քո ծնողին:

Բաց, բալն ջան, աչքդ մէկ բաց,  
Մէկ ինձ նայիր, այ անսիրտ.  
Այս, իմ սրտին էրւած, վառուած,  
Մէկ ճար գտիր, քարասիրտ...

Ն Պ Ա Տ Ա Կ

Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
Որ ապրենք ազատ, խօսենք համարձակ.  
Կամ աշխարքիս մէջ պէս-պէս օրինակ  
Դառնալու է մեր սիրելին միակ:

Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
Որ ազատ կեանքի միջոցներն առնենք,  
Որին դարեր շատ կարօտ մնացինք,  
Ամեն նեղ օրեր աւազ փորձեցինք:

Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
Որ մեր սրտի մէջ գերի խօսքերը  
Ցանել մարդկանց մէջ ազատ, ապահով—  
Աճեն, բազմանան հողեղէն բառով:

Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
Որ լինի մարդս իր հոգուն տեղեակ.  
Լեզուներս կապած, ձեռներս շղթայ,  
Չլինենք աշխարքիս կենդանի նահատակ:

Արդեօք գալու է մի օր ժամանակ,  
Որ մեր սրտի մէջ ամեն մի փափագ  
Տեսնենք կատարուած, տանենք յաղթանակ—  
Գոնէ վերջին օրը մեռնենք անվտանգ:

Անշուշտ գալու է մի օր ժամանակ,  
Որ այդ բոլորը տեսնենք մենք հաստատ.  
Կանցնեն օրերս ազատ, համարձակ:  
Կը լինի յաւիտեան անմահ յիշատակ:



Գ Է Պ Ի Մ Ա Ր Տ

Որեքիմ մըրիկներ պաշարում են մեզ,  
Ան գաղտնի ոյժեր ճնշում անողոք.  
Օրհասական կռիւ ենք մտնում գուարթերես  
Ինչ է մեզ սպասում՝ չգիտէ ոչ ոք:

Բայց մենք կը պարզենք անվախ, համարձակ:  
Բանւորական գործի դրօշ փրկարար —  
Ժողովրդական մեծ մարտի դրօշակ —  
Սուրբ ազատութեան, վեհ կեանքի համար:

Դէպ մարտ արիւնստ և սուրբ օրինի  
Յառանջ, ընկերներ, շարքով ամենի:

Մեռնում է սուրբ աղքատը թշուառ,  
Էլի համբերենք այս անխղճութեան.  
Մեր երիտասարդ քաջերի համար  
Սարսափելի չէ ոչ մի տառապանք:

Ընկնելով յանուն վեհ գաղափարի,  
Մարտի գոռ դաշտում չեն կորչի,  
Նոցա անունը երգով պանծալի —  
Բիւրաւոր մարդիկ կը յիշեն յաւէտ:

Դէպ մարտ արիւնստ և սուրբ օրինի,  
Յառանջ, ընկերներ, շարքով ամենի:



ՈՐԴՈՒ ԿՏԱԿԸ

Մայրիկ, մայրիկ, սնուշ մայրիկ,  
Ո՛ւր ես, հասի՞ր երգովդ մեղմիկ,  
Նստէ սեցած գլխիս վերև  
Ողբա որդուդ անուշ արև:

Արև մը, որ նոր բոլորած,  
Քսան զարնան վարդ հոտոտած.  
Այ բաւ է բսեմ վարդն հոտոտես,  
Գնան, գնան, սև հող զրկես:

Դուն, հայրենիք, կտակ տուիր,  
Ծերն ու մանուկ չըզատեցիր,  
Բոցերու ծայրն երկինք հասաւ,  
Խանձերու հոտն աշխարհ լցուաւ:

Լսէ մայրիկ, վերջին կտակս,  
Եւ հազորդէ իմ քաջ հղբարց,  
Ազատութեան համար զոհուեն  
Վատ թշնամուն գերի չըլլան:

Ազատութիւն, ազատութիւն,  
Դու մարդկութեան միակ փրկութիւն.  
Ո՛ւր ես, հասի՞ր, մեզ ողջունէ,  
Գերութիւնից մեզ ազատէ:



Աղատ եմ ծնուել, չեմ ուզում բռնութիւն,  
 Պիտի պահանջեմ սուրբ ազատութիւն.  
 Մինչև վերջին օրս անդադար գոչեմ,  
 Ունիմ իրաւունք ես, ստրուկ չեմ.

Պէտք է չըզգարեմ ես կռուելուց,  
 Մինչև պահանջս չառնեմ թշնամուց,  
 Անգութ, լաւ իմացիր, հայի զաւակ եմ,  
 Տունդ ու տեղդ տակն ու վրայ կանեմ:

Մահ պէտք է գոչեմ ես բացարձակ,  
 Ոյժս ժողոված, ազատ, համարձակ,  
 Պէտք է խորտակեմ թշնամու բանակ,  
 Եւ վեհ դրօշակը ձեռքիս ծածանեմ:

Մեր նահատակների կենդանի արիւն  
 էժան չեմ թողնիլ գազան թշնամուն.  
 Մինչև վերջին շունչս ի սէր մարդկութեան,  
 Կը սիրեմ կռիւ յանուն փրկութեան:



**ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ**

Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ  
 Մեր հոգին էրված, մեր սիրտը եարօտ...  
 Սե սուղ է պատել մեր կեանք ու օրին,  
 Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.

Վայ, սև գիշերն է մեր կեանքը մաշում,  
 Քո լոյս-երգերի կարօտն ենք բաշում,  
 Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ,  
 Չես երգում էլ մեզ զարնան առաւօտ...

Մեր օրն ու արև մըթնել սեպել,  
 Դժոխքի դուռն է մեզ կեանքը բացել,  
 Բազմն էլ մեզանից երես շուռ տուել,  
 Խեղճ հային կրակի բերանն է դցել:

Էրվում ենք անմեղ, սըրտներս եարօտ  
 Քո զեղ ու դարման երգին ենք կարօտ  
 Սարէսար ընկած մենք՝ վայ ենք կանչում  
 Բազդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում,

Քաղցած ենք, ծարճւ, անտէր խղճալի,—  
 Հաց, ջուր ենք ուզում մեզ թոյն են տալի.  
 Մեր ճամբէն դժւար, մեր ճամբէն բարօտ,  
 Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Լեզուով չի պատմւի հայի զարդ ու ցաւ,  
 Հայի արիւնով աշխարհ ներկեցաւ.  
 Միրտն է մըխկտում, սիրտն է սեանում,  
 Ոչ ով մեր ձէնին ականջ չի դնում:

Ո՞ւր ես, հայ բըլբուլ, երգիդ է կարօտ  
 էս սև օրերին մեր սիրտը եարօտ...

Բըլբուլ, դու մեզ հետ տանջուում ու լալիս,  
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.

Դու ասում էիր ազգ իմ, մի սգայ,  
«Յուսով եմ վաղ ուշ գարուն պիտի գայ»  
Բայց, ախ, շրտեսանք գարուն վարդահոտ.  
Ո՞ւր ես, հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ:

Ա. Մատուրեան

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌԻՆԵՐ

Մենք պէտք է կուենք և ոչ լաց լինենք  
Ազգի կորուստը գէնքով հետ խլենք.  
Այսքան դար լացինք, ո՞վ է լտողը,  
Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը:

Այլ ևս չլանք և ոչ լաց լինենք,  
Կըրակած սրտով մեր գործը վարենք.  
Անվեհեր քաջին այս է պատկանում—  
Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,  
Երբ հայ քաջի դէմ կուի դուրս կուգայ.

Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,  
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից:

Անէծք այն հօրը՝ չի մղում որդուն,  
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.  
Ամօթ այն հային և բիւր նախատինք,  
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:

ՄԵՆԱԿԻ ՅԻՉՏՏԱԿԻՆ

Դուն էլ վեր կացար դէմ արեւազին,  
Գօտիդ կապեցիր քո մէջքը հպարտ,  
Աչքդ դարձուցիր շողուն աստղերին,  
Ասիք, կը հասնեմ դեռ լոյս չ բացւած

Եւ կեանքի բեռը դրիր քո մէջքին,  
Ճամբորդի ցուպը քո ձեռքը առար.  
Յոյսն էր շողշողում քո սաթ աչքերին,  
Եւ հպարտ-հպարտ էն ճամբան ընկար.

Ու սիրտդ յուստտ,  
Հոգիդ մըրկուտ,

Միշտ բայլում էիր  
Քո ճամբան վշտոս:

Քալէ ու քալէ  
էն ուղին մօտ է.  
Ալ-վառ շողերով  
Արև կը ծագէ:

Է՛յ, ազիզ ախպէր, շատ ջանել-ջիւան  
Կերան ու կերաւ էս անկուշտ ճամբան.  
Շատերը ընկան էս ճամբի կիսին,  
Սրտերը վառւած՝ յոյսը աչքերին:

Հէյ վախ, հէյ վախ, հէյ, համարդի նման  
Քեզ էլ կուլ տւեց էս անկուշտ ճամբան.  
Հէյ վախ, հէյ աշխարհ, քեզ էլ կուլ տւեց  
էս ազիզ ճամբան՝ անձէր, անվախճան:

Թէ սաղ մնացինք՝ ու հազար բարով  
Կրցանք յաղթանակ բերել մեր երկրին,  
Թէ որ մեր երկրէն հազար արիւնով  
Կրցանք դուրս բշել վատթար դուշմանին:

Կըզամ կը կանչեմ Բասենայ դաշտին,  
«Հէյ ազիզ, ախպեր, ել, մենք յաղթեցինք.  
Մենք դուրս բշեցինք անգուլթ դուշմանին,  
Հազար հազարով վրէժ հանեցինք»:

Անձրեից մաշած քո ոսկորները  
Կըզամ կը ժողւեմ՝ մէկ-մէկ, երգելով  
Տանեմ կը թաղեմ Անտոքայ սարը՝  
Սասուն ապահով հանգչիս անխռով:

Իշխան

ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Փնօք բազմաշարշար ստրուկ մարդկութեան  
Տառապանքների, վշտի աղբիւրին  
Կեանքի հեղեղում շարի խորտակման  
Ահռելի կուռի մարտիրոսներին:

Փնօք զրկանքների մեծ անապատում  
Խիզախ, աննուաճ մազլցողներին  
Քաղցից նուազած հրապարակներում  
Հացի և վրէժի երգ երգողներին:

Փնօք սրախողխող ու գնտակահար  
Քաջ ըմբոստների լուռ շիրիմներին  
Մոայլ հոնքերում ընկած շարէշար  
Սմբած, տրորուած սև դիակներին:

Փնօք թիկունքներին ծռուած բեռի տակ  
Կոշտացած, ջլտա ժիր բազուկներին:

Փանօր բանուորութեանն միութեան օղակ  
Հպարտ փողփողոց կարմիր գրօշակին:

Փանօր ի բարձունս Սուրբ ազատութեան  
Նորածին ոգուն տանջանքում ծնուած,  
Միշտ փառք և նրան, որ համայնութեան  
Խաչն է փրկանքի ուսերին զրած:

Հուշանիկ Կուրղինեան



ԵԿԱՆ ՈՒ ԱՆՅԱՆ

(«Չախորդ օրեր»-ի նղանակով)

Կարկուտ, ջրհեղեղ, շանթ ու կրակ եկան ու անցան,  
Ժայռի վերայից աննպատակ եկան ու անցան.  
Արդար ու տոկուն մարդը մնաց իր տեղը անշարժ,  
Անթիւ սրիկայ, գոդ, աւազակ եկան ու անցան:

Թուխսը ձագերը, իւր տնակը չը թողեց անտէր.  
Քազում գունի թռչնոց երամակ եկան ու անցան.  
Ապրեց տկարը և չը մնուաւ, ոյժ տւեց Աստուած  
Յաւեր զանազան հաստ ու բարակ եկան ու անցան:

Քանդել ուզեցին որբի տունը, բայց մնաց հաստատ.  
Ջոկ-ջոկ ցեղի բանուոր ու մշակ եկան ու անցան.  
Զրկող, կեղերող մարդիկը տես, Ջիւանի երգիչ,  
Մեռան ու կորան անյիշատակ, եկան ու անցան:



### Գ Ա Ր Ո Ւ Ն

Կարկոժեժ արտերը, երբ նորից բուսնին,  
Դաշտերը կանաչեն, ծառերը ծաղկին,  
Սարերը, ձորերը ծաղկով պճնուին,  
Գուցէ ևս հաւատամ թէ գարուն է ճիշտ,

Երբ որ ձիւնը դաղրի և անձրև տեղայ,  
Որոտայ երկինքը և ամպը գոռայ,  
Երբ ծարաւ երկիրը յագի կշտանայ,  
Գուցէ ևս հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ Մասիս սարին Աւետիս կուտան—  
Արարատը կը հազնի նոր պատմուճան:  
Երբ հեռացած թռչունները յետ դառնան,  
Գուցէ ևս հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ պայծառ արեգակը իր արզար  
Լոյսը կը տարածէ համահաւասար,



Երբ անխտիր կրծիծաղեն հող ու քար  
 Գուցէ՛ ես հաւատամ, թէ՛ դարուն է ճիշտ:  
 Մարտի տասն է, զեռ արագիլը չի գայ,  
 Աւետաբեր սարեակր չի ճրովողայ  
 Երբ իմ ասածներուս ոչ մէկը չըկայ,  
 Գժուար ես հաւատամ, թէ՛ դարուն է ճիշտ:

Ջիւանի

### ԵՐԿՈՒՄԸ ՄԷԿ ԵՆ

Երբ որ լեզուն լուռ է, ոտք ու ձեռք կապած,  
 Հա բանտ, հա գերեզման-երկուսը մէկ են.  
 Այն որ մարդուն վերջը մահ կայ անկասկած,  
 Հա բարձ, հա կախազան երկուսը մէկ են:

Անվախներուն բիւր ու հազար երանի,  
 Մարդ նրանք են մարդկութեան մէջ պիտանի.  
 Ի հնդանին էլ անշուշտ պիտի մեռանի,  
 Հա մեռած, հա կենդան—երկուսը մէկ են:

Խելացի էակ է, մարդը բնական  
 Աստուած պարգևել է լեզու և բերան.  
 Բայց երբ ազատ խօսքի չը կայ հրաման,  
 Բանուր թէ՛ անբան—երկուսը մէկ են:

Եթէ բնենք, ինչ է կեանքը. յիրանի,  
 Ամբար է հողսերու և բուն է ցաւի:  
 Որովհետեւ Ջիւանն էլ կը պառաւի  
 Հա պառաւ, հա Ջիւան—երկուսը մէկ են:



### ՀՊԱՐՏ ՏԻԿԻՆ

Եչքերդ խփեցիր, բերանդ բացիր,  
 Կոյրի պէս գնացիր անդունդն ընկար,  
 Մխալմունքիդ վերայ ողբալով լացիր,  
 Թուխ շորեր հագնելով սև ու սուգ մտար:

Ուզեցիր, որ զառնաս սիգանձմ կարաւ,  
 Գուրս եկար այլակերպ գորշ տգեղ ազուաւ.  
 Յաւիդ վերայ աւելցաւ մի նոր ցաւ,  
 Կոյր ու խուլ, խնդանդամ մի աղջիկ ծնար:

Անգուլթ Մորփէտուր վրադ բուն թափեց,  
 Ննջած ժամանակ հասակդ չափեց.  
 Գաճաք կիներ մրցութեան մէջ քեզ չափեց,  
 Ի ոլոր աշխարհի մէջ խայտառակ եղար:

Արամազդը պատժեց քեզ, անզուլթ տիկին,  
 Օղային ամրոցդ տապալեց զետին.  
 Ազահութեան լիճը մտար զլխովին,  
 Փոխան մարբուելու կեղտոտ դուրս եկար:



**ԹՊԻՐՔԸ ԵՒ ՀԱՅԸ**

(շէքի)

Մի կայսեր հպատակ, մի երկրի զաւակ  
 Ու մէկ օրէնքի ասկ թուրքը և հայը  
 Կանգնել են հակառակ մէկ մէկու ներհակ,  
 Արձակում են գնդակ թուրքը և հայը

Մէջ տեղը կայ մէկ չար խորամանկ ճարտար,  
 Չար գործին դեկավար, ինքը մուլթ խաւար,  
 Գարձել են խելագար, արեան սիրահար,  
 Կոտորում են իրար թուրքը և հայը:

Իրարու գնդակոյ, սաստիկ ապտակոյ,  
 Տները խորտակոյ, քանդոյ, կրակոյ,  
 Անուն պախարակոյ և նշաւակոյ  
 Կովկասում բնակոյ թուրք և հայը:

Կուեցուց չար հողին թուրքին ու հային,  
 Ծափ տւեց առանձին, հրճուեց արտաքին,

Եթէ չը հաշուեն, երկուսն էլ կընկնեն,  
 Գետին կը տապալեն թուրքը և հայը:

Ինչ կայ մէջը, Ջիւան, երկու ազգութեան  
 Յայտնի չեղաւ մէկ բան, քննեցին այսքան.  
 Անվայել գործ տեսան երկու հարևան,  
 Ինչո՞ւ թշնամացան թուրքը և հայը:



**ՀՐԵՑՈՒԹԵԱՆ ՀՐԵՑՏԿ**

Հաշտութեան և սիրոյ բարի հրեշտակ,  
 Խռոված աշխարհին խաղաղութիւն բեր.  
 Արագ թուիր, արի, նոյեան աղանեակ  
 Գալստեանդ սպասում ենք անհամբիր:

Կամար կապէ աղեղնակը լուսատու,  
 Պայծառ աստղը, արուեսակը լուսատու.  
 Թող մէկ իշխէ արեգակը լուսատու,  
 Չենք ուզում որ լինի մուլթ խաւար գիշեր:

Գլխա և ողորմեա, երկնային իշխան,  
 Հաշտութեան հողի տուր բոլոր մարդկութեան  
 Ինչո՞ւ համար մէկը մէկին վնաս տան,  
 Մարդը մարդուն համ եղբայր է համ ընկեր:

Թող բացւին քո, աղբուրներդ լուսածով,  
 Բոլոր մարդիկ ապրեն հանգիստ ապահով:

Մնայ պատկառելի խաղաղ անխուով,  
Լայնածաւալ, հոօր, մեծ աշխարհը մեր:

Իրար յարգեն, սիրեն, թէ ծեր թէ ջիւան,  
Մարդիկ ապրեն խաղաղ սիրով միաբան,  
Խռովութեան ամպերը թող հեռանան  
Արդարութեան հողին թող բարձրանայ վեր:

## ՉԱՐ ԴԵՒԸ

Ապշերոնեան թերակղզու շար դեր  
Եկաւ մտաւ Արարատեան աշխարհը.  
Փոխեց խաղաղ ժողովրդի հին ձեր,  
Գլորեց պիղծ գայթակղութեան բարը:

Դարեւոր բարեկամ թուրքին ու հային  
Թշնամի դարձրեց մէկը միւսին,  
Լանկլթիմուրի վատ արարքը վերստին,  
Պարգևեց թուրքերուն անիրաւ չարը:

Ջիւան տարածեցին իրանց թևերը  
Խորամանկ, մարդատեաց խարդախ սևերը.  
Ուրախացան չար հողի, չար գեները,  
Հանգիստ տեղ հասցրին իրանց ծրարը:

## Տ Ր Տ ՈՒ Ն Ջ

Մեծ գործի հետ ես, թէ՞ քնել ես, Աստուած,  
Որ չես տեսնում, չես իմանում մեր ցար,  
Ուրուքները գրոհ կուտան գէնը առած  
Ո՞ր մէկի հետ կուռի խղճալի հաւը:

Ուշքը զրուել է վեհապանձ արծուին,  
Սրկելըում գոյացել է մի նոր ցին,  
Փամանակ գանելով գորտերը չնչին,  
Կուզեն որ ջախջախեն, խորտակեն նաւը:

Մեծանուն բաջ սարը դեռ թարմ է հոգով,  
Փչել են բամբակներ գլխին տաք ու հով.  
Նրա գործը անյաջողակ տեսնելով,  
Հրճում է գիշակեր տղեղ ագռաւը:

Թէ ուզում է գանել նախկին պատիրը,  
Պէտք է կշտայնէ իւր հաւն ու ճիւր,  
Տամապատիկ ոյժ կստանայ արծիւր,  
Եթէ որ նա փոխէ իւր հին հալաւը:



ՄԵՐ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Օտարներից գանգատուելու, հայերս, իրաւունք չունինք,  
 Որովհետեւ համերաշխ գործ, մի որոշ սկզբունք չունենք.  
 Բարի բաներ արտասանող, մարուր բերան-շրթունք չունինք,  
 Խախուտ է մեր զրուծիւնը, հաստատապէս հիմունք չունինք.  
 Իրար հետ մեզ սիրով կապող լաւ կրթութիւն ուսմունք  
 չունինք.  
 Հաւատ ունենք, յոյս էլ ունենք, ափսոս սիրոյ մասունք  
 չունինք:

Եթէ թիչ խորը մտածենք-շուտ կիմանանք թէ ինչ բան ենք  
 Թէ այլք մեզի նախատում են, նախատուելու արժան ենք.  
 Մեր տունը ինքներս ենք քանդում որովհետեւ անձնասպան  
 ենք.

Սուտ, անցաւոր փառքի համար ինչ ցածութիւն ասես  
 կանենք.

Արտարուստ փայլուն, գեղեցիկ, կմախքով լի գերեզման ենք.  
 Գործերս խօսքերուս պէս չէ, մենք բարի արարմունք չունինք

Աշխարհի ամեն անկիւնից ստանում ենք բօթալի լուր,  
 Այս ինչ հային սպանեցին, կամ թէ տունը ձգեցին հուր.  
 Աւելանում են ցաւերս, տարէցտարի, օրն ընդհանուր,  
 Մեր մամուլն էլ ուրախութիւն չունի, միշտ զրում է տխուր.  
 Աւարառու գոգերի դէմ անգամ մենք չենք վերցնում սուր,  
 Կարծես սրտերս մեռած է, կամ թէ մենք թե ու թիկունք  
 չունինք:

Ով որ ասես մեզ կը թոթովէ անայգեպան ծառի նման.  
 Գայլերուն բաժին ենք դառնում առանց հովիւ դառի նման.  
 Հազար մի վաճառորդ ունինք իւղալի պատառի նման.  
 Ափսոս մենք մեզ չենք ճանաչում աչքը կապած ցաւի նման.  
 Քայլերս միշտ խոտորնակ է գնում խեչափառի նման,  
 Ճանապարհներս ուղղելու վարժուած ոտ ու սրունք չունինք:

Ով Զիւանի, համեստութեան տաճար էր հին Հայաստանը.  
 Մեր գեղեցիկ սեռն էր պահում լեզուն, հայութեան նշանը.  
 Բայց հիմա շատ ցաւալի է, փոխել է փքսի բերանը,  
 Քիչ է ճարում Այծեմնիկի և Կարինէի նմանը,  
 Մեր կանանց վարքն էլ է փոխել, կարծես էլ չեն  
 առաջուանը.

Անտես, բարի, սակաւապետ, համեստ մայր և հարսունք  
 չունինք:



Մ է Կ է

Ո՞վ է հարցնողը, ո՞վ է քննողը,  
 Մեղաւորն էլ մէկ է, արդարն էլ մէկ է.  
 Ո՞վ է հասկացողը, ով է գննողը  
 Իմաստունն էլ մէկ է, յիմարն էլ մէկ է:

Գիտունը սակաւ է, անգէտը բազում,  
 Ծառերու վրայի պտուղները հում.

Աշխարհից անտեղեակ ամբոխի աչքում  
Դետի բարն էլ մէկ է, գոհարն էլ մէկ է:

Անաչք մարդուն պէտք չեն ճրագ ու լապտեր,  
Նրանց մասին նա մնում է անտարբեր.  
Հաւասար են կոյրին ցերեկ թէ գիշեր,  
Առաւօտն էլ մէկ է, խաւարն էլ մէկ է:

Ջիւան, իբրև սոխակ կերդէ ազոտւը.  
Կերպասի տեղ կերթայ ճերմակ կտաւը.  
Մէկ գնի են ծախում վատը և լաւը.  
Ձուտ արծաթն էլ մէկ է, կապարն էլ մէկ է:

### ՆԱԽԱԶԳԱՅՈՒՄ


Ալեկոծւած է մեծ ծովը,  
Ջրհեղեղից շատ երկիւղ կայ.  
Փշում է բամին ցուրտ, հովը,  
Ամեն տեղից շատ երկիւղ կայ:

Մարդկանց պէտք է զգոյշ մնալ:  
Անպատրաստ ճամբայ չըզնալ.  
Օձին չի լինի հաւատալ,  
Սողուն ցեղից շատ երկիւղ կայ:

Չար մօր որդին կըլինի չար,  
Անհեռատես տգէտ յիմար,

Խելացին կը մտայ դադար,  
Խենթ ուղեղից շատ երկիւղ կայ:

Ահարկու է ձայնը, Ջիւան.  
Վիրաւոր է առիւծ հսկան.  
Պէտք է հանգիստ թողնել նրան,  
Այն ուժեղից շատ երկիւղ կայ:



### Ի՞ՆՉ ԱՍԻՆ

Քանի կզկըթած ման եկայ, ինձ մեռած, դիակ է—ասին.  
Երբ որ մի բիշ շարժեցայ, գող է, աւագակ է—ասին.  
Իմ ստացած մեծ հարուածս արժանի ապտակ է—ասին  
Պատի համար մեռած սրբուս իշու նահատակ է—ասին:

Իրաւացի, արդար դատս պաշտպանող մարդ չը գտայ ես.  
Իմ խորհուրդս ում որ ասի, հաւանող մարդ չը գտայ ես.  
Ձեռքս բռնող, իմ ցաւերուս դեղ անող մարդ չը գտայ ես.  
Բոլորը ինձ՝ միտք պղտորող, անզուսպ ստահակ է—ասին:

Քամի տալով ինձ թոցրին մի բանի տար գլուխ մարդիկ,  
Ոտքերու տակ տրորեցայ որպէս անտէր վայրի ծաղիկ.  
Ընկայ բորենու ճիրանը, բովս մի մարդ չեկաւ մօտիկ,  
Գրան օգնել—ժամանակի հոգուն հակառակ է—ասին:

Վէրքս մեծերուն ցոյց տալու գործ զրի ես մեծ աշխատանք,  
Իմ կրօնս և իմ լեզուս ինձանից ուղեցին փրկանք:

«Գեռ ինքն իրան նա չի կարող կառավարել, եթէ տեղ տանք»  
Քաղաքագէտ, խելօք պապիս, անգէտ է, համբակ է ասին»

Հին հազուստի մէջ մնացի, չը ճարեցի թաժա հալաւ,  
Սպասելով լաւ օրերու, ճար չը մնաց, բանս բուսաւ.  
Շատ երգեցի բղաւեցի, ոչ որ ձայնս լսող չեղաւ,  
Վերջը անբախտ Զիւանուս շատախօս, թութակ է ասին»

Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ինչ ազգ շունի սէր ու միաբանութիւն,  
Ես չեմ յուսալ նրանից կենդանութիւն,  
Զի ունենալ երբէք նա ազատութիւն.  
Երբ չի տալիս իւր մեծին հաւանութիւն.  
Ունենայ էլ հարուստ գրականութիւն,  
Տգէտներից շունի զանազանութիւն»

Անմիաբան ազգն է այլոց միշտ ծառայ,  
Նրա համար ազատութիւն բառ չըկայ.  
Հալածանքի, թշուառութեան ենթակայ,  
Անագնիւ է, համարոււմ է խաբերա.  
Վերջին օրն է, կորչելու է համարեա,  
Ոչ մի տեղից չիք նրան պաշտպանութիւն»

Մինչև Աստուած ձեռք կը բաշէ նրանից,  
Միութիւն ու սէր չը գտնուած տանից.

Կըսկսի քայքայել ինքն իրանից  
Ու յետ մնալ շարքից ու կարավանից.  
Զի յարգը ուիլ մերձաւոր հարեանից,  
Թէև ունի մօտիկ ազգականութիւն»

Անմիութեան հոգին շար է և ժլատ,  
Սատանայի գարմ է շունի յոյս, հաւատ.  
Ոչ բարոզ կը լսէ, ոչ բարի խրատ,  
Կը թափառի աստանդական յուսահատ  
Այնպէս ազգի կործանումը մօտ է շատ.  
Որի մէջ որ լինում է բաժանութիւն»

Զիւան, սէր է մարդկանց բերզը անառիկ,  
Իրար կապող ոսկի շղթան գեղեցիկ.  
Ինչ ազգ ունի միութիւն, սէր անուշիկ  
Կը համարւի մարդկանց մէջը անդրանիկ.  
Եշխարհիս մէջ կապրի ուրախ երջանիկ,  
Ըմեն կողմից կը լսէ երանութիւն»

ՇԽԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Չորանար այն ձեռքը որ բեկի զիպաւ,  
Քաջ Զխալի, գործակատար Ստեփան,  
Գոյր փորձանքը սր Յուդայից բեզ հասաւ,  
Տունդ թողեց անմխիթար, Ստեփան»

Երբ որ պատմութիւնդ անել սկսենք,  
Ֆէյլու, ֆէնտ խօսքերդ ո՞րի հետ խօսենք՞  
Եահու, եա մատէտդ էլ ո՞ւմից լսենք,  
Ծիծաղաշարժ լեզուդ, ճարտար Ստեփան:

Քաջ անունդ պիտի յիշւի անպակաս,  
Ընկերներուդ սրտերու մէջ միշտ դու կաս,  
Կեանքիդ թելը կտրեց մահը վաղահաս,  
Հագորդութեան արժան չեղար Ստեփան:

Պատկերդ ահարկու, դու բարձրահասակ,  
Պարսկաստանի Սալմաստ գաւառի գաւակ,  
Չնչին մարդու ձեռքով եղար նահատակ,  
Հայրենիքի թունդ սիրահար Ստեփան:

Քու մահդ Զիւանուն սաստիկ ցաւ տւեց,  
Սիրելեացդ սրտին գառար ցաւ ու ցեց,  
Համարեա թէ ողջ Թիֆլիզը ցնցւեց,  
Չատ մարդ ողբաց բեզի համար Ստեփան:

ՂԱԶԱՆԵՅԻ ՍԱՐԳԻՍԸ

Ղազախ գաւառի մէջ մեծ հրաշք գործեց,  
Որպէս Զէյթունցի քաջ Պապիկ Սարգիսը  
Ապերախտ թշնամուն լաւ խրատ տւեց,  
Ընընկճելի և անառիկ Սարգիսը:

Հորիս-Մելիքով և քաջ Հազարեան,  
Ողջ լինէին պիտի տային գովասան,  
Ղազախի հայերս—երկրորդ Օյաման,  
Խելաց ու քաջամարտիկ Սարգիսը:

Գնաց յատուկ հայոց գիւղը մտաւ,  
Ժողովրդին զինեց, մեծ զորձեր տեսաւ,  
Սև գիւղից մի քաջ հերոս գուրս եկաւ,  
Եղաւ հուժկու և աղօղեցիկ Սարգիսը:

Խաւարի որդոցը ուժը սպառեց,  
Ակամայից նա մի քանի զիւղ վառեց,  
Բիթամիտ իւռժանին սարսափ պատճառեց,  
Ընկերներով մեր ռազմիկ Սարգիսը:

Երիտասարդ Գրիգորը համարձակ,  
Չամշաղինը պահեց երկար ժամանակ,  
Զխալի Ստեփան, Համօ և Արշակ,  
Ունէր երեք փայլուն աստղիկ Սարգիսը:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Երկար-ձիգ տարիներ հայ անդաստանը,  
Չորացել է, առատ անձրև պէտք է մեզ,  
Ծլել ու ծաղկելու մեր բուրաստանը,  
Գիտութեան լոյսիցը, արև պէտք է մեզ:

Մեզ պատել է տգիտութեան խաւարը,  
Փակում են մեր առաջ լուսոյ տաճարը,  
Տոյց տալու, աղանին փառաց աշխարհը,  
Բերանում ձիթենու տերև պէտք է մեզ:

Ջանք ու ճիգ անելով լոյսին հասնելու,  
Այդ մասին ոչ մի բան չէ խնայելու,  
Այս աշխարհում մարդավայել ապրելու,  
Վերստին մեզ «նոր կեանք» պարգև պէտք է մեզ:

Ի՛նչ ազգ չը դարգացաւ, խեղճ ու շւար է,  
Գոյութիւն ունենալ նրան դժւար է,  
Հին կեանքով ապրելը էլ անհնար է,  
Կեանքի փոփոխութիւն, հոր ձև պէտք է մեզ:

Ջամալի



ԱՆԿԵՂԾ ԽՈՐՀՈՒՐԳ ԸՆԿԵՐԻՍ

Հոգոյս հատոր, իմ հայ աղբէր, լաւ մտածիր այսունհետ,  
Քո սեփնական միջոցներով կառավարելը այսունհետ,  
Նոր կեանք, նոր սիրտ, նոր հոգի առ, նոր եռանդով գործելու,  
Ելլոց վերալ բոլորովին յոյս մի դնիր այսունհետ:

Չէ որ անցեալ գառն փորձից խրատեցիր բաւական,  
Գործիդ մէջը սխալելուց զգուշացիր այսունհետ,

Այս աշխարհի անխիղճ, անգութ դարձածքները խօս տեսաք  
Օտարներու կեղծ խոստումից էլ մի խաբւիր այսունհետ:

Գու բու ոյժդ չափէ, կշռէ և ըստ այնմ գործ արն,  
Հանգամանքից օգտւելով առաջ շարժիր այսունհետ,  
Մարդուկարգը ամեն կերպով, լաւ պատրաստւած գօտէ պինդ  
Քո Ջամալդ բեզ խնդրում է, գործ սկսիր այսունհետ:



ՉՐԻ ԱԶԳԱՍԷՐՆԵՐԻՆ

Վերջին տարիներս նոր մօզա ընկաւ,  
Լոկ խօսքով մարդն իրան ազգասէր ցոյց տալ,  
Պատգամ տուող, ճառախօսը շատացաւ,  
Սկսեցին իրանց գործին տէր ցոյց տալ:

Չրի ազգին սիրել, զբանից հեշտ բան,  
Գատարկ խօսքով հասնել խեղճին օգնութեան  
Առանց կոպէկ տալու, թշւաւին պաշտպան,  
Ընկածին սրտացաւ ու ընկեր ցոյց տալ:

Ջամալ, բան կըշինւի միշտ աշխատանքով,  
Ոչինչ առաջ չի գալ միայն խօսքերով,  
Իբր թէ պատրաստ են մինչև իսկ կեանքով,  
Գո.գափարի գոհուող անձնէր ցոյց տալ:



### Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Հայութիւնը վտանգւած է, հայ եղբայր,  
 Ամեն կողմից սպառնում է մեզ վտանգ,  
 Նոր-նոր հատւածները տալիս են նոր ծայր,  
 Մենք մեզ լաւ պահելու պէտք է աշխատանք:

Հայութիւնը տեսել է շատ պատուհաս,  
 Ճնշում ու բռնութիւն տարել անպակաս,  
 Եթէ մէկգամէկու մենք չըտանք վնաս,  
 Մեզ չի կարող ջնջել ոչ մի շարշարանք:

Ջամալի, հարկ է մեզ կասելիլ մէկ հոգով,  
 Ամեն բան կըշինւի սէր-միութիւնով,  
 Թէ գործերս վարենք թայֆայութիւնով,  
 Կռիլովի անշարժ կառքը կունենանք:

### ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Ահա ելի թուխ ամպեր երկինք պատել են,  
 Կայծակ-կրակ, կարկուտ գալու է մէկ օր,  
 Երկու հսկայ բանակ ներհակ կանգնել են,  
 Տեսնենք որի մայրը լալու է մէկ օր:

Մէկ կողմը բիւրր-բիւրոց սոված անխնամ,  
 Միւս կողմը թւով բիշ, բայց ճոխ ու փարթամ,  
 Ընդհարումը սպասում է ժամէ ժամ,  
 Սրդեօք որին հարւած տալու է մէկ օր:

Ջամալ, անխիղճները աշխարհ տիրել են,  
 Բռնանալով, հողի-մարմին գերել են,  
 Սյլոց խարել, իրանց փառքը հիմնել են,  
 Խարխուտ շէնքը ձեռքից գնալու է մէկ օր:



### ԱՆՓՈՐՉՈՒԹԻՒՆ

Ափսոս, որ մենք դեռ տհաս ենք,  
 Գրաւվում ենք կեղծաւորից,  
 Ու մշտական վեր չը դասենք  
 Անպատիւը պատուաւորից:

Յարգում ենք «ես եմ» ասողին,  
 Գործողներուն բամբաստողին,  
 Սուտ ու մուտ մեծ-մեծ խօսողին  
 Չատ ենք սիրում չափաւորից:

Մէկի գործը դեռ չը քննած,  
 Տեսնում ես ամեն տեղ գովւած,

Փառաց ի փառս երկինք հանած,  
ձանչւած բարեբար բոլորից:

Պարզը ասել ո՞վ կարող է,  
Թէ՛ այս ինչը միշտ գուփող է,  
Այլոց զրկելով ապրող է,  
Վախիլ պէտք է փոզաւորից,

Մասնում են ինչպէս որ Յուզայ,  
Իրանց պէսին բռնած վկայ,  
Բռնանում են խղճի վերայ,  
Չեն վախենում ահաւորից:

Ո՞վ որ զբան թակարդն ընկնի,  
Հողով-մարմնով գերի կըլի,  
Ինչ ունի-չունի տայ չի պրծնի  
Այդպէս անգուլթ դատաւորից:

Ջամալի խօսքերդ փշոտ.  
Կը խայթէ վատ մարդուն կեղտոտ,  
Ուղղութիւնը խօսիւր սրտոտ,  
Չը վախենալով ստորից:



Ո Ր Բ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Թշուառ որը եմ, ունիմ վատ խնամակալ,  
Խղճուկ որբիս խաղալու էլ չի թողնում,  
Անգուլթ անողորմ է, նենգ ու ոխակալ,  
Դուրս գալ, ազատ մանգալու էլ չի թողնում:

Մազի չափ սխալեմ, ինձ կրակում է,  
Բերանս չը բացած, նա ապտակում է,  
Բռունցքով-մահակով, անխիղճ թակում է,  
Միշտ ծեծում է, բայց լալու էլ չի թողնում:

Ջամալ, ամեն որբի վիճակն էլ վատ է,  
Բայց կա մեծ որ, մեզմ կերպով կը խրատէ,  
Հօրս ու մօրս անուն տալն էլ արատ է,  
Նրանց յիշել, սգալու էլ չի թողնում:

ՏԱՃՎԸՀԱՅԻ ԹՇԻԱՌՈՒԹԻԻՆԸ

Ա՛խ, տաճկահայ եղբայր, թշուառ ցաւալի,  
Չատ տխուր է դրութիւնդ վիճակդ,  
Գիտեմ քաշած կեանքդ է շատ անտանելի,  
Խաւարել է բո պայծառ արեղակդ:

Բիւր տեսակ վշտերով սիրտդ է ճնշւած,  
Տունդ քանդւած, եկեղեցին պղծւած

Կայրդ յափշտակւած, կրօնդ անարգւած,  
Խլւած է պատիւդ, կինդ, զաւակդ:

Քայց դու դարձեալ ապրի յուսով տնվեհեր,  
Պապերդ էլ բաշել են շատ այսպէս օրեր,  
Անդադար աշխատի ցերեկ և գիշեր,  
Վերջը տեղը կառնի սուրբ նպատակդ:

Ջամալիս խնդրում է, չը յուսահատուիս,  
Վերադառնաս հայրենիքդ, հաստատուիս,  
Մի օր անտանելի լծից կազատուիս,  
Կը կատարւի վեհ իղձդ ու փափագդ:


ԱՆՄԵՂ ՀԱԼԱԾԱՆՔ

Հայր ի գուր հալածուում է շատերից,  
Այս է ընկած ազգի օրը-վիճակը.  
Գաղափար են կազմում բանի մ վատերից,  
Ամեն ազգ էլ ունի իւր վատ զաւակը.

Մեր աչքի մէջ եղած շիւղը տեսնում են,  
Իրանց աչքի գերանը միշտ պահում են,  
Մեծ աղգերը հազար սխալ գործում են,  
Քայց ծածկում է նրանց իրանց զմակը \*):

\*) Հայկական տառ, այն է հարստութիւնը ծածկում է մարդու արտաք

Ջամալ, հայր ինչո՞ւ նախանձ է շարժում,  
Նրանով որ աչքաբաց է իր գործում,  
Այս նեղ օրն էլ կեանք են տեսնում նրանում,  
Քարեր են գլորում անիւի տակը:



ՀԱՅ ԱՂՈՒՂ

Մշտական բու ազգիդ ցաւը դու երգեցիր, հայ աշուղ,  
Մելամաղձիկ տխուր ձայնով գեղգեղեցիր, հայ աշուղ,  
Սրտիդ խորքից ախ բաշելով հոռաշելով, տխրագին,  
Հատ բարացած-անզգայ սիրտ փափկացուցիր, հայ աշուղ:

Վատերուն միշտ մտրակով, լաւերուն միշ գովելով,  
Դէպի բարին, դէպի լաւը գուգուեցիր, հայ աշուղ,  
Երբ վիճակեց խղճուկ հային հեռու տեղեր ցրելու.  
Ազգիդ հետքից շատ երկրներ թափառեցիր, հայ աշուղ:

Յուսահատւած, կորչելու մօտ, հայի սառած սրտերը,  
Ոգևորիչ յուսոյ երգով, նորոգեցիր, հայ աշուղ,  
Քայց քո կեանքդ շատ շարբաշ է, փորձով գիտէ Ջամալիս,  
Անկայտութեան մէջ ու զրկւած թառամեցիր, հայ աշուղ:



ՀԱՅԴՈՒԿԻ ՎԵՐՋԻՆ ՈՒՆՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,  
Եպագութ մահւան բոլոր սև շարիք,  
Բայց բո սուրբ անունն մինչև վերջին շունչ,  
Ես չեմ մոռանայ, սիրուն հայրենիք:

Թող օրհասական բոլոր պատուհաս,  
Թափէ խղճիս վրայ իմ անգութ օրհաս,  
Բայց մինչև ես կեանքիս մաշւած հետին կծիկ,  
Քեզ չեմ մոռանայ, անգին հայրենիք:

Թող գոմորական արիւնոտ մոխիր  
Թափէ իմ գլխիս միշտ ճակատագիր,  
Բայց մինչև շատնեմ մահու դամբարան,  
Քեզ չեմ մոռանայ, ազնիւ հայրենիք:

Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին  
Կախազան, և սիւն, կամ մի այլ գործիք,  
Բայց մինչև չը գցեն շիրիմ իմ մարմին,  
Քեզ չեմ մոռանայ, սէր իմ հայրենիք:

Թող թշնամութեան դժնեայ ծառի ճիւղ,  
Տայ ինձ իւր փշոտ թունալից պտուղ,  
Բայց մինչև կեանքիս վերջնական վայրկեան,  
Պիտի բեզ յիշեմ, սիրուն հայրենիք:

Թող կոյր ամբոխը անձրևէ գլխիս  
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,

Բայց մինչ իմ բերնից շեղանէ հոգիս,  
Քեզ չեմ մոռանայ, անտէր Հայաստան:

Թող ինձ հալածեն Վասակի թոռներ,  
Ետևով տղէտ, յիմար և անբան,  
Եյդ ես կըտանեմ մինչ կեանքիս վախճան,  
Բայց բեզ չեմ մոռանայ երբէք, Հայաստան:

Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս,  
Տանեն սգալով դէպ մահու դարպաս,  
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,  
Գուցէ բեզ մոռնամ, մայր իմ Հայաստան:

Բայց ոչ երկնքում լուսոյ օրդոց հետ,  
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,  
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ լաւտեան,  
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»:

ԼԱՅ, ՄԷՐԻԿ ԶԱՆ

Հովերն տուն սար ու ձորեր,  
Ենպերն ելան, մութն ընկաւ,  
Անդին մէրիկ, հէրիկ յուսաս,  
Քո շողշողուն աստղն ընկաւ,

Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ:  
Վէրբը սրտիս տուն չեմ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպըն էր ցողում,  
Սև ու պղտոր երկնքից,  
Մազիկ-մազիկ վէրբըս էր ծորում  
Իմ անգուման սև սրտէս,  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չըգամ,  
Վէրբը խորն է, ճար չկայ:

Անգութ կեանքում վէրբ ըստացայ,  
Սրտանց սիրած ընկերէս,  
Անխիղճ կեանքում վէրբ ըստացայ  
Անուշ սիրած բոյրիկէս,  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,  
Ազիզ բալէզ էլ չի գայ:

Ա. Իսահակեան

Կ Ռ Ի Ի Կ Ա Ր Օ Տ Ը

Հ. Ա. Վ. Ք. Եանին,

Անողոր բաղբը գարկաւ մեզ ուժգին,  
Ու մենք գատեցանք, մենք երկու ընկեր,  
Որոնք տարիներ մէկ տեղ են երգեր,  
Մէկ տեղ են լացեր արցունքը կեանքի:

Եւ ահա այսօր ձայնդ հեռաւոր  
Չայնդ եղնիկի խոցւած, որբացած,  
Ժայռին ու ծովին իր սիրտը բացած,  
Կողէ իւր ընկեր սիրով վերաւոր:

Ես այնպէս կղձամ ձայն տալ քեզ խորոտ,  
Չայն մը, որ կտրէ սար, ձոր, դաշտ ու ծով,  
Հնչէ ականջիդ յստակ հարւածով,  
Պատմէ, որ ես ալ տեսիլդ եմ կարօտ:

Կուզեմ ըսել քեզ և պոռալ նորէն,  
Որ ձեռք ձեռքի տանք ու գործենք այնտեղ,  
Ուր կը փոթորկի տառապանքն ահեղ,  
Ընկճւածներու, ատած բրտօրէն:

Եղնիկ

Ե Ր Գ Ր Ի Զ Ա Յ Ն Ը

Երբ ես հոն էի, թոյլն ուժեղին բով,  
Արցունքն ու բրբիջ, ոճիրն ու խոր վիշտ՝  
Մին հայհոյանքով, միւսը խնդրանքով՝  
Կը պայքարէին իրարու հետ միշտ:

Կատաղի յորձանքն այդ խուլ պայքարին  
Կաւներ զիս իր մէջ ու գրոհ կուտար,

Այնպէս կը փրփրէր, կը գոռար ուժգին,  
Որ կեանքս ու շունչս կառնէին դադար:

Եւ ժխորի մէջ շանթի պէս ահեղ,  
Ճնշող, մեռցնող ձայն մը կորոտար,  
«Կորիւր», հեռացիր, ինչ ունիս այստեղ,  
Գնա՛, թափառէ, աստղի տակ օտար:

Քանի հեռացայ, այդ ձայնն ալ այնքան  
Կորուց իր շեշտը տխուր, ցաւազին,  
Կորուց իր ժխոր, բրբիջ դիւական,  
Երգ ու մեղեղի դարձան մեղմագին:

Բայց ահա՛ այսօր երկրի ձայնն անուշ,  
Միրելիներու համերգ երկնաձիր՝  
Ժպտի ու լացի ակօրդով քնքուշ  
Կը կանչէ կուզէ տանիլ զիս երկիր:

Եղնիկ



ՀՈԳ. 21. ԹԷ ՄԵՌՆԵՄ

Հող չէ թէ մեռնեմ, մեծ յաղթանակի  
Կը ծագէ արև ազատ, հովերով,  
Նրա ցուրիւր՝ կարմիր, շեշտակի,  
Կը ցրեն մուսյլ խաւարը շուտով:

Դուք, վեհ ըմբոստներ, ձեռք-ձեռքի տւած  
Կը փշրէր շղթան ստրուկ օրերի,

Բռնակալութեան լուծը ջախջախած,  
Արիւն անցեալին չէր լինի գերի:

Եւ պարարտ հողի բեղմնաւոր կրծքին  
Կը փայլեն խաղաղ բահ, արօր, գութան,  
Ու կուշտ գեղջուկի պայծառ երգերին  
Նրոխտ երգերը արձագանք կուտան

Եւ շէն գիւղերում ու աւաններում  
Կը հնչէ զւարթ աղմուկ, աղաղակ,  
Եմեն օճախից ծուխը գալարուն  
Կաւետէ կեանքի հերը ներդաշնակ:

Եւ անտառների խորքից կուսական,  
Հոյակապ ու ժիր գործարաններից,  
Ձեր բանւորների բաղաւորութեան  
Կը լսի օրհններն անդուլ բերկրալից:

Արթնացած միտքն կը ծնի հանճար,  
Եւ ազատ խօսքը, յոյս ու բաղդ անդորր,  
Կեանքը հաւասար, վաստակը արդար  
Մարդը չի լինի գահիճն իր եղբօր:

Հող չէ թէ մեռնեմ, ազատւած երկրի  
Ճունչը բարերար ոյժ կը տայ մարմնիս,  
Սուրբ ազատութեան զոռ զողանջների  
Ջոխնգն անսպառ կը գզէ հոգիս:

Ահա այդ ժամին ես նորից կապրեմ,  
 Մեռած տենչերս նորից կը ծլեն,  
 Մայր հողի գրկում վառ, փարթամ, վսեմ,  
 Եւ շքեղ փնջով ձեզ այցի կելեն:

Արփենիկ



### ՉԱՅՆ ՏՈՒՐ ԱՄԵՆՔԻՆ

Տես փլփլում են աւերակներից մոխրի կոյտերում,  
 Վերջին շոր հացդ, վաստակիդ վերջին թերմաշ փալասներ,  
 Փլատակներից՝ խաւար գիշերում սև բուն անդադրում,  
 Քեզ վնջ է տալիս, նստել են շուրջդ բաղցած ագռաւներ:

Նայիր, անհատիկ, ամուր արտերիդ երեսից խոպան  
 Շրջմուխի քամին՝ թևերը փռած ազատ կը պարի,  
 Ծղրիտն է դարձել կանգնած ջաղացիդ միակ ջաղացպան,  
 Կը ծղրայ անբուն-անգործ անիւիդ կերպէ ողորմի:

Նայիր, ժանգն ինչպէս իր հաստ շերտերով գութանիդ, բահիդ  
 Անգործ օրերի ստոր կնիքի զրօշմ է դրել,  
 Աւեր ախոռից երբեմն առոյգ կով ու եզներիդ  
 Ուրախ բառաչը, գոհունակութեան մնջոցն է լռել:

Նայիր և շուրջդ, ինչպէս բռնութեան ծանր լծի տակ,  
 Կիսաբաղց, լքւած վխտում են մարդիկ, տենդոտ գայրոյթով

Անյոյս սրտերում թոյնը վրէժի ու աննպատակ,  
 Թշնամուն մոռցած, ձեռքերը ներկում եղբօր արիւնով:

Սթափւիր, թշւառ, ձայն տուր ամենքին՝ ով քո դառնութեան,  
 Քո արցունքներին, քո մոայլ խաչին եղել է ընկեր,  
 Ձեռք-ձեռքի տւած՝ դուրս եկ կուի դաշտ, ուր որ մարդ-  
 կութեան

Մի այլ, նոր կեանքի կոչնակն է հնչում, վեհ աւետարեր:  
 Արփենիկ



### ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կանգնիր, սով անցորդ  
 Գու այս շիրմի մօտ  
 Եւ հանգիստ կարգա բնջ նահատակին,  
 Որ կուի դաշտում  
 Սուր ու գէնք ձեռքում,  
 Ձոհ բերեց կեանքը իւր ազգի փառքին:

Բայց կարեկցութեան  
 Ոչ լաց, ոչ կական  
 Թող չըպղտորեն քո սիրտն ու հոգին.  
 Նա լալ չէր սիրում.  
 Կուի փոթորկում

Նահատակն ընկաւ ժրպիտը գէմքին...

Ա. Մատուքեան



### ԱՆԳԻԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սուառնում ես լեռ ու ժայռ  
 Թնւպցնում ես երկինք-գետինը տենչավառ.  
 Սուրբ անունդ պիտի յիշւի դարեդար,  
 Հսկայ լիբինք քեզ ապաստան Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
 Օձերի պէս պիտի սողան իրանց բունը  
 Երակներդ ազնիւ քաջի արիւնը  
 Չը ցամարէ մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք, գափնեայ պսակ թող հիւսեն.  
 Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն.  
 Գոհարներով անվախ կուրծքդ վարդարեն.  
 Կէցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,  
 Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.  
 Անյաղթ մնաս, դու քաջ կուի սիրահար,  
 Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



### ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ ԿՇՏԵՐԻԷ

Նպատակիս գէթ մի մասը կատարւէր,  
 Եարալի բլբուլ եմ.  
 Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ,  
 Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,  
 Սարերի գիւլն եմ:

Ախ իմ դարդս շատացել է, չեմ կարող զալ ես,  
 Եարալի բլբուլ եմ,  
 Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ, ազատեմ,  
 Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,  
 Սարերի գիւլն եմ:

Նպարախտ հայդուկիս, Տէր իմ գու խղճա՛,  
 Վախ-գիտի, բլբուլն եմ,  
 Մի թողնիր թուրքի զնդակով գուր զնամ կորչեմ.  
 Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,  
 Սարերի գիւլն եմ:

Առաջ ցաւս մէկ էր, հիմա դառաւ տաս.  
 Վախ-գիտի բլբուլն եմ,  
 Այս գառը ցաւերին ես սնց զիմանամ.  
 Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,  
 Սարերի գիւլն եմ:



ՎԱՆԵՑՈՅ ԶՈՒՆԻԱԳԸ

Բաւ է, եղբարք, վիզը ճրկել,  
Ողորմելի երեսիլ.  
Փամանակը հասել է,  
Հայ գրօշակին ծածանել:

Հայոց լերինք թո՛ղ թընդան,  
Հայոց բերանք թո՛ղ զուան,  
Հայաստանի գաշտերում,  
Քաջ հայերու զիլ «ուռան»:

Արիւն փոթի թո՛ղ Հայը,  
Ազադակէ միշտ ուռա՛մ,  
Մեր թշնամին այսուհետ,  
Սըրտի վախէն թո՛ղ զողայ:

Այսուհետև արտասուր  
Վախկոտները թո՛ղ հեղուն.  
Հայքս արդէն պատրաստ ենք  
Վոթել ազնիւ մեր արիւն:

Ու չենք զազրիլ փոթելու  
Մեր հայ, ազնիւ արիւնը,  
Մինչև ազգը չի ստանայ  
Իրա ազատութիւնը:

Ախ ու վախը մենք մոռցանք:  
Այժմ զիտենք մենք ուռա՛մ.  
Հայք, հոչեցէք միշտ ուռա՛մ,  
Որ թըշնամին մեր զողայ:

Վասնու-Քարիպա

ՎԵՐՋԱԼՈՒՄԻՆ

Եւ հեռո՛ւ, այնտեղ, արիւնոտ կեանքի  
Խաւար գաշտերում թաղւած են յաւիտ.  
Ըմբոստ մարտիկներն, որ հառաչանքի  
Ողբերն երգելով չբացան անհետ:

Եւ խոր սուգեցին զաժան, բռնաւոր  
Փայռերին զարկած փշուր ու ջախջախ  
Յորձանքների մէջ: Եւ լո՛ւռ, մեր բոլոր  
Ու անհուն ցաւի երազներն անվախ:

Թող հանգչեն նրանց նիրհած զանգերին,  
Եւ սուրբ բարկութեան կարմիր հնոցում  
Թող միշտ շիկանան, որ այն օրերին  
Երբ կուի պապակն իր խորունկ ծոցում:

Մեր սերունդների մըրկւած հոգին  
Նորից գալարէ, առկայծեն յանկարծ,  
Եւ լուսնորեն ժայռերը մթին,  
Չորերը խաւար, ճամբէքը անդ:սըձ:

Հ. Անուշեան

(ՀԱՅ ԶԻՆՈՐԻ ԵՐԳՈՒՄԸ)


Երգում եմ անա այս սուրբ հրացանով  
Որ ծուխ է տալիս ու հանում բոմբիւն  
Նրա մահառիթ հրաշէջ գնդակով  
Որ մահացնում է մեր պիղծ թշնամուն:

Երգում եմ սրովս փայլուն պողպատ  
Մխած երկնքի հրով, կայծակով,  
Որին ուխտել եմ չը բերել արատ  
Յագուրդ տալ նրան դուշմ'նի արիւնով:

Երգում եմ անա (Սուրբ գրօշակով)  
Որ փողփողում է մեր գնդի առաջ,  
Որի վահաշուր ծալքերի միջով  
Ժպտում է մեզի, արէք, բաջք առաջ:

Երգման վկայ թող լինի հայրենիք,  
Որին զինւորն կեանք է պարգնում,  
Որին ազատութեան անձնէր հէրոսք  
Իրենց արիւնովն են ուռզել:

Երգում եմ կուել անվէհեր,  
Յագթել կամ ընկնել փառաւոր մահով  
Երգում եմ մեռնել, չըլինել պարսաւիք  
Չապրել վատութեամբ, չապրել ամօթո



(ՀՈԳԻՍ ԿՈՒՏԸՄ)

Էլի նոր ձմեռ, էլի նոր ցաւեր,  
Դարդը վազ չեկաւ մեր խեղճ աշխարքէն  
Վաթանս աւեր-վաթաններ աւեր  
Դուռ ու դրացի տրորւած կեանքէն:

Չորս դին սով ու ցաւ, չորս դին մղկտանք  
Փոք հացի կռիւ արնոտ ու դուման,  
Միշտ դառը դատանք, ոչինչ չըստացանք  
Չուրկ-զրկւած կապրենք դուլ-գերու նման:

Ախ, ես էլ դարտու, բուն դադար չունիմ,  
Սմենքից ցաւը իմ սիրտը կուտէ  
Ախր չըզիտէ՞ք, ես մէկ սիրտ ունիմ  
Ո՞ր մէկից հալալ բաժին տամ, օգտէ:

Պէտք չէ մորմորել, ինչ կուզէ էզնի  
Սրախս տեղ հոգիս ես ձեզի կուտամ.  
Էն լուսն է տեսեր ու ձեզ չի թողնի  
Չուլում օրերին մենակ, անգուման:

Չուշանիկ Կուրղինեան



ՄԱՀԱՊԱՐՏԻ ԵՐԳԸ

Մութ երկրի վրայ  
 Լոյսը կերերայ  
 Կընկնի ուշաթափ դալկազէմ լուսին  
 Արևելքն անդարդ  
 Կը թափէ ալվարդ.  
 Ի՞նչ բաղցը է մեռնել վաղ արշալուսին:

Հովը անուշիկ  
 Կը պատմէ յուշիկ  
 Դըժնեայ խաւարի պարտութեան մասին  
 Արծաթեայ առուն  
 Կօրհնեցէ գարուն  
 Ի՞նչ բաղցը է մեռնել վաղ արշալուսին:

Եւ մարդը գերի,  
 Որ ժանտ կարգերի  
 Սև լուծն է կըրում իր շարքաշ ուսին,  
 Կողջունէ անյուզ  
 Ազատ կեանք ու լոյս  
 Ի՞նչ բաղցը է մեռնել վաղ արշալուսին:  
 Անոփրիոս Անոփևան

ԽՂՃՈՒԿԻ ՉԷՆ

Քնցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հետ.  
 Դրախտի սարէն գարունն յետին բարև ետ,  
 Կարիճք առան գեներերն իջան տակ հողին,  
 Վախ մըրը գլխուն, սև մուր կկաւ մեր օրին:  
 Հայու աչեր թող մրգի լան,  
 Հայու բաջեր գէները առած մըրգի գան:

Հայեր, գերի եղանք բաղդին անողոր,  
 Աստուած, հրեշտակ, մարդ չըլսեց մըրը բողոր,  
 Մըր լացերու ձևն ծածկաւ Տարնոյ տակ,  
 Մշու դաշտեր պահեն սրտից հառաչանք:  
 Հայու աչեր թող մըրգի լան,  
 Հայու բաջեր...

Մըր աշխարհի բակվուկ շէնքերու ներքև  
 Նստուկ մամ, պապ՝ ճըժեր մացին անարև,  
 Նօթի՛ տկուզ, ախ, չկայ տէր տիրական,  
 Անդուլթ բրտու գըլմին էգամ ենք խուրբան:  
 Խարիպ աղբերք թող մեզ լան,  
 Հայու բաջեր...

Մատղաշ աղջիկն ու հարս հալաւ մի չունի,  
 Որ իր մարմին անօրէնին գէմ ծածկի

Էնպէս դրած ձեռքերն աշից ամչկոտ,  
 Գուժի, սիրոյ, ոգորմութեան է կարօտ:  
 Հայ աղջիկներ թող մեզ լան,  
 Հայու բաջեր...

Կեցէք, Մշու դաշտի բամիր, քիչմ կեցէք,  
 Մըր ողբացէն բարեն էլ ձըր հետ տարէք,  
 Ու եք ընցնիք սուրբ օրէնքի կամարից,  
 Հոնկուց ըսէք խարիպ մըր հայ աղբերից:  
 Էլ ի՞նչ պէտք է, որ մեզ լան,  
 Հայու բաջեր...

Մացէք բարով, իմ հէր ու մէր, քուր, աղբէր,  
 Մացէք բարով անոթ սարեր ու դաշտեր,  
 Գուցէ մեռնեմ, էլ շտեմնեմ այսուհետ,  
 Գարտ մի էնէք, դուշմանմ՝ տարեր եմ իմ հետ:

ՍԶՏՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Ա. Խ-ի յիշատակին

Էն սև զիշերում, դուման դարգերի,  
 Փրփրած ծովում ընկաք ու մեռաք,  
 Ա՛յ, իմ աղիզներ, գաղւած սրտերի,  
 Եաման օրերի դուր յոյս երկնառաք:

Ծփուն ալիքներ՝ փրփուր թևերով,  
 Ինչպէս սիրտ արին ու ձեզ կուլ տւին.  
 Ա՛յ, իմ աղիզներ, որ էն մեծ ցաւով  
 Ճանապարհ ընկաք, ակնապիշ ափին:

Խրոխտ փարօսը, որ դուր վառեցիք,  
 Վշտերու ծովի մութ դէմքի վերայ  
 Հոյս է տարածում: Անցում են մարդիք,  
 Ուր առաջինը դուր բացիք ճամբայ:

Ես ձեզի չեմ լայ, դուշմանը թող լայ,  
 Էն դուլ օրերի գետնաքարշ ընկեր,  
 Իսկ ես, աղիզներ, ձեր ճամբէն ընկաջ,  
 Անլաց, անմունչ, հպարտ, անվեհեր:

Արփենիկ

ԹՂԻԱՌ ԺՈՂՈՂՈՒՐԳ

Թշառ ժողովուրդ, մոլեռանդ գերի  
 Փթած, խարխլած, անյայտ ոյժերի,  
 Որ այնպէս թափով խոնարհել գիտես,  
 Խաչ ու մասունքի զօրութեանը տնտես:

Որ այնպէս յուսով կեանքիդ փրկութեան,  
 Գուժ ես միշտ մուրում, մուրում յաւիտեան.

Դեռ չըզարթնեցիր դարաւոր քնից,  
Յուսախարութեան մուռլ ցնորքից:

Դու այնպէս, խղճուկ կեանքի շուկայում,  
Չեռքից ձեռք անցար լուիկ, անդադրում,  
Բանտ ու արսորի դու տաժանակիր,  
Եղար հարազատ, հլու որդեգիր:

Բայց հերիք անարգ, եսամու մարդիկ,  
Ձինեցին իրանց շահի խաղալիք,  
Քո ցաւն ու քո բաղդ, թշուառ մուրացկան,  
Միթէ այդ կեանքը սիրում է այդքան:  
Արքեհնիկ



ԿԸ ՀԻՒՍԵՄ ԵՐԳԵՐ

Բարձիր ուսերիդ քո բեռը կսկիծ,  
Ողբերն ու ճիշեր անհուն տանջանքիդ,  
Վհատ կասկածդ և սրտիդ անբիծ  
Բոլոր ցաւերը և խաշը կեանքիդ:

Թող կաթիլներով՝ ճնշման կապանքից,  
Կաթեն սրտիս մէջ տենչերդ մարած,  
Տղէտ խաւարում, գլխիդ անձկալից,  
Ըմրոտ խլրտման ծիւերդ խամրած:

Եւ քո սար-բեռան հլու բեռնակիր,  
Կը սուզեմ վշտի անյատակ ծովում,  
Իսկ դու աշխարհում նորից արծարծիր  
Սուրբ ազատութեան իդէալի երզում:

Եւ երբ ցաւի տեղ այդ ազատութեան  
Տիրէ հրճանքը երկրի երեսին,  
Փշրեն շղթաներ, բանտ ու կախազան  
Հնչեն շեփորներ նոր արշալոյսին:

Այնժամ լեռ-բեռդ անյատակ ծովի,  
Խորունկ խորքերում վշտիս հետ թաղած,  
Ես վեր կը թռչեմ, կը փարւիմ հովի  
Ձլոտ թևերին՝ թեթև թև առած:

Կը հիւսեմ երգեր ազատ օրերի,  
Անմահ, ոգեշունչ, բողբոջ յոյսերից,  
Կերզեմ նոր հիմք—հաւասարների,  
Լոյսի ծնունդը՝ բղխած խաւարից:

ԿԵՅՅԵՆ ՉԱՐՔԵՐԸ

Կեղծիքին սովոր, բռնութեան յարմար,  
Կրւած է հիմքը մեր թշուառ կեանքի,  
Եւ ստրկութեան բարերն անհամար,  
Հիւսում են շէնքը մուռլ տանջանքի:

Բայց ահա ցնցւեց տիտանը, հսկան,  
Ըմբոստացումի թափից թև առած,  
Խտացրեց զոռ շարքերն ու մահաւն  
Չարկն իջեցրեց դահճին զառամած:

Կեցցեն շարքերը, մարտիկներն անգին,  
Կեանքի ու ինչքի հաւասարութեան,  
Կեցցեն շարքերը, որ ստոր փառքին  
Անդունդ են փորում, անարդ գերեզման:  
Արփենիկ



ԹՈՒՄԱՆԻՆ ԵՒ ԻԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Մեր եղբայրները զինաթափւած  
Անօգնական են ընկած,  
Թշնամիներով շրջապատւած,  
Վայ մեզ, գերի ենք ընկած:


Մեր եղբայրներ զինաթափւած  
Սարի լանջում են ընկած,  
Գլուխները մարմնից կտրւած,  
Քաջ, միայն դուք էք բնած:

Գերեզմաններ—կանաչ դաշտեր,  
Դադաղի տեղ լեռ բարեր:

Քահանայի տեղ թփեր,  
Աղօթողներ, սև ամպեր:

Խմբապետներ թորգոմ, Որսորդ,  
Քահանաներ մեզ հաղորդող  
Իրանք եղան առաջին զսհ,  
Հայոց քաջերն են կուռղ:

Մեր վրէժը պէտք է լուծէք  
Սրով, թրով, գնդակով,  
Եւ ոչ միայն լաց ու կոծով,  
Թշնամու դէմ կուելով:



ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ՁԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք, առանցի վիճակ,  
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ,  
Պարսկաստանի խորրից եկել խիստ նամակ,  
Գնում ենք բարով, կուշանանք տարով,  
Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ կսպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուաւ «ջան ֆիղայ» անուն,  
Այդ անւան համաձայն, տեսաւ զօրութիւն,  
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,  
Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնել,  
Համոզւած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն:

Ստամբուլը պիտի լինի արեան ծով,  
 Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,  
 Կոտորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով,  
 Աջից Վարդանը, ձախից Իշխանը,  
 Գրաւենք Ալբակ, տարածենք սարսափ,  
 Փառք դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, ալն պատերազմին,  
 Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,  
 Քաջ Զէյթունը յաղթեց վատ, շար գազանին,  
 Կեցցէ Զէյթունը խրոխտ Սասունը, կուսակցութիւնը՝  
 Բաղդաւոր օրեր, պարծանք Հայերուն:

**ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ**

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին  
 Ազատութեան Գրոշակ.  
 Կեցցէ հայրենիք գոշելով,  
 Բարձրացրին ազազակ:

Թնդաց, որոտաց ձայներից՝  
 Ողջ աշխարհը հայկական,  
 Խումբ-խումբ կարգած հայ գաւակներ  
 Հասնում էին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)  
 Քաջ Անդրանիկը զեկավար,

Տալոորիկի լեռներում  
 Ջրջում էին անդադար:

Սարսափեցան բիւրդ ցեղերը,  
 Մինչ պալատը Սուլթանին  
 Հրամայեց շուտ կործանել  
 Գիրքերը հայգուկներին:

Ահա անգութ բիւրդ ու տաճիկ,  
 Սարսափելի տեսարան.  
 Ժամանակ է վրէժ լուծել,  
 Գոշեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց հայ բաջերի  
 Բնակավայր դիրքերից  
 Գայլայլեցան բիւրդ խուժաններ  
 Ահռելի գնդակներից:

**ԴԱՐԴՍ ԼԱՅԷՔ**

Դարգս լացէք, սարի սմբուլ,  
 Ալան-ալան ծաղիկներ.  
 Դարգս լացէք, բաղի բլբուլ,  
 Ամպշող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինը գլխուս մթնան,  
 Անտուն-անտէր կուլամ ես,

Եարիս տարան, ջանիս տարան,  
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես...

Ա՛խ, եարս ինձի հանեց սրտէն,  
Անճար թողեց ու գնաց.  
Սրտիս սաւղէն—խորունկ եարէն  
Անէղ թողեց ու գնաց...

Դարդս լացէք, սարի սմբուլ,  
Ալան-ալան ծաղիկներ.  
Դարդս լացէք, բաղի բլբուլ,  
Ամպշող երկնուց գով-հովեր...

Ա. Իսահակեան

Ա՛խ ՏԻԷՔ ԻՆՁ

Ա՛խ, տւէք ինձ քաղցր մի բուն,  
Կեանքից հեռու սրլանամ  
Ա՛յն աշխարհը, ուր խնդութիւն,  
Ուր սէրն է միշտ անթառամ,

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,  
Վառ կանաչից իմ վերմակ,  
Նոցա բոյրը զըւարթագին  
Ծծեմ անվերջ ես անյագ:

Եւ խայտալով իմ առաջին  
Վտակն անուշ խոխոջէ,  
Մի թարմութիւն եղեմային  
Ձորս բոլորքս տարածէ:

Եւ ինձ ժպտի արշալուսին  
Գարնան մատաղ արեգակ.  
Եւ խայտալով իմ ճակատին  
Խաղայ գողտրիկ վառ լուսնակ:

Եւ աչագեղ կոյսն ականջիս  
Իւր մեղեգին նըւագէ,  
Եւ հերարձակ սիրով վըգիս  
Փարէ, մեղմիկ փաղաքջէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն  
Գրկէ հոգիս, յագնեամ...  
Ա՛խ, տւէք ինձ քաղցր մի բուն,  
Հեռու, հեռու սրլանամ...

Յ. Յովհաննիսեան

ՕՆՏԸ ՄԱՐՈՎ

Օխտը սարով հեռու քեզնէն  
Քու շւարով եմ ապրում.  
Օխտը տարով բաժան քեզնէն  
Քու կարօտով եմ էրում...



Դարդիս դարմանն, եարիս մահլանմ,  
Ջանն ու ջիգեար եարս ուր ա...

Գիշեր-ցերեկ գրկեամ բնէն  
Ծով է կտրում աչքերս,  
Բալի դարիբ մի ճամբորդէն  
Խաբար առնեմ իմ եարէս:  
Դարդիս դարմանն, եարիս մահլանմ  
Թագ ու պսակ եարս ուր ա...

Օխար տարի ծում ու պասով  
Օր ու արևս սեցուցի,  
Բալի Մշու-Սուլթան գորքով՝  
Իմ մուրագս տար ինձի...  
Դարդիս դարմանն, եարիս մահլանմ  
Թև ու թիկունք եարս ուր ա...  
Ա. Իսահակեան



ԽԱՂԱՂ ԴԱՋՏԻ ՈՐԳԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք.  
Արօր, գութան մուռնանք, հրացանը առնենք.  
Խեղդեամ մեր բողոքը յայտնենք գէնքերով  
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով.  
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ.  
Ճնշեամ հայի որդիք հարազատ:

Ստրկութեան շղթան պարզ շառաչում է,  
Ազատութեան ճնշեամ ձայնը հնչում է,  
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,  
Եւ ընդարձակ հողեր Հայոց գերեզման,  
Մեր կեանք, մեր մահ և այլն:

Ցրեամ խմբեր հասնեն Զէյթուն և ի Վան  
Շտապենք, միանանք, կազմենք խումբ հայկեան,  
Հայի ազատութեան պարզներ դրօշակ.  
Կեանքը մահով կախեամ, զնենք նոր պսակ:  
Մեր կեանք, մեր մահ և այլն:

ՀԱՍՕՅԻ ԵՐԳԸ

Անձ ծագեց կարմիր արև:  
Տար և պայծառ է օրը,  
Դէ, բաշեցէք սիրուն եզներ,  
Յառանջ տարէք արօրը:

Վարը վարենք, ախօս փորենք,  
Խոր ախօսներ հողի մէջ,  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Յորեան դիպենք կալի մէջ:

Կը գայ ձմեռ — մենք վախ չունենք —  
 Ուրախ կանցնի մեր օրը,  
 Ուտելու միշտ պաշար ունենք,  
 Լի և կուշտ է մեր փորը:

Դէ քաշեցէք, սիրուն եզներ,  
 Հուտով վարենք արտերը.  
 Թող չսսեն մեր գրացիքը՝  
 Ծոյլ են Հասոյի եզները:

Րաֆֆի



### ՍԱՍՈՒՆԱՅ ՍԱՐ

Սուանց վախի, առանց անի,  
 Քաջերի բուն Սասնայ սար,  
 Քեզնից հրդեհ կը պատահի,  
 Կրակի բուն, Սասնայ սար:

Եկաւ ողջ Արարտանը,  
 Որ նւաճէ Հայաստանը:  
 Քեզ շըյաղթեց Չինգիզ խանը,  
 Կեցար կանգուն, Սասնայ սար:

Հայաստանը երբ կանաչեց:  
 Թշնամին տեսաւ, ամաչեց.  
 Եւրոպան քեզ լաւ ճանաչեց,  
 Սուար անուն, Սասնայ սար:

Քիւրդի, թուրքի դահիճները,  
 Թունաւորոց կտրիճները.  
 Սարի միջի կտրիճները,  
 Դու և Ջէյթուն, Սասնայ սար:

Վերցաւ խաւար գիշերը,  
 Փայլեց երկնային լապտերը,  
 Կսպասեն տաճկահայերը  
 Քեզնից դարուն, Սասնայ սար:

Զիւանի

### ԵՐԳ ԶԻՆԻՈՐԻ

Սուրբ գաշնակցութեան անկեղծ գինւորներ,  
 Բաւ է համբերէք, անձնագոհ քաջեր,  
 Հասել է ժամը շար Սուլթանի անկամանը,  
 Միացած ուժով դուրս գանք դէպի գաշտ:

Բռնապետութեան դահը տապալենք,  
 Մեզ ճնշողներին մաս-մաս կոտորենք,  
 Գոչենք մենք կեցցէ ազատ երկրում,  
 Փշրենք շղթաներ բռնութեան զրկում:

Մահ ազատութեան ուխտենք, եղբայրներ,  
 Որտեղ կայ ճնշում, թռչենք մենք այնտեղ.  
 Իրոշակ պարզենք սուրբ Դաշնակցութեան,  
 Մինչև որ փրկեք թշուառ Հայաստան:

Լսեն տեղ ճնշում, լաց ու աղաղակ,  
 Դարերով ճնշւած ստրուկ հայ ազգը,  
 Սրբութեամբ պահենք Հայկայ անունը,  
 Թափենք մեր վերջին կաթիլ արիւնը:



### ՆԸԻՐՈՒՉԻ ԵՐԳԸ


Դաշնակցութեան քաջ խմբերը Պերնա գիւղում միացան,  
 Խմբապետն էր քաջ Նաւրուզը, բաժանեց քաջաց հրացան.  
 Երզնցին զրօշակին քահանայով միասին,  
 Չարժւեցաւ խումբը յառաջ, երկու սահմանից անցաւ:

Արշալոյսը նոր բացոււմ էր, տեսան թշնամեաց զօրքեր,  
 Քաջ Նաւրուզը հրահանգ տւեց—յառաջ եկէք տասնեակներ,

Լսեն մէկս հազարի դէմ պիտի կուենք, եղբայրներ:  
 Կարնեցի քաջ Դերենիկին ասաւ. — բռնէ լաւ դիւրբեր:

Դերենիկն ու Արտաշէսը, ինչպէս կորիւն եղբայրներ,  
 Բասէն դաշտու մէջ լցրին թշնամու շատ դիակներ,  
 Քաջ Սերոբը և իւր որդիք, ինչպէս ազնիւ էակներ,  
 Նահատական քաջերն այնտեղ, մեզի մնաց վրէժներ:

Հայաստանի հողի վերայ զրօշակ ծածանւեցաւ,  
 Երեսուն ժամ ճակատամարտ հազարաց դէմ կուեցաւ,  
 Հայ քաջերի գնդակներից շատ թշնամիք գլորւեցաւ.  
 Ես, Միջագոս կը պարծենամ ունիմք փամփուշտ հրացան:



### Ն Ո Ր Կ Ե Ա Ն Ք

Անչպէս փչէ հուժկու մրրիկ տինգերքին խորերէն  
 Հաւարելով երկնից դաշտէն ցրել եկած իր բանակ.  
 Մե ու ճերմակ բոլոր ամպեր գէպ միկնոյն նպատակ  
 Կըսլանան հետեւելով մէկը միւսին վեհօրէն:

Այնպէս այժմ թող մռնչէ այս մեծ երկրին ծայրերէն՝  
 Սուրբ մրրիկը, ըմբոստութեան իր թափովը բովանդակ:

Թող սլանան ալ աներկիւղ զէպի մէկ վեհնպատա :  
Ազատութեան ցրիւ եկած որդիք հեռու վայրերէն :

Որպէս զի հոն բոլոր հզօր գայրոյթները խմբուին,  
Հոն, ուր փռած հովիտներ կան, հոն ուր լեռներ կան  
հիւանդ,  
Ուր ձիգ դաշտեր կը դժգունեն բռնութեան տակ հնաւանդ  
Ուր կը չորնան բիւր ծաղիկներ, զեռ չըծաղկած բնաւին :

Որ այն ատեն խոր ցատումի որոտներէն դայրազին,  
Ոտքի կանգնի թարս ոյժերով հայ գեղջուկը վեհապանծ .  
Եւ լայն դաշտեր ազատութեան հեղեղներով ոռոգւած՝  
Մնուցանեն ծոցերնուն մէջ արմատները նոր կեանքին :  
Վէտա

### ԱՐԵՒՆ ԻՋԱԽ

Արեն իջաւ սարի գլխուն,  
Գար ու դաշտում լոյս չը կայ .  
Հաւր ու թռչունը մտան խոր բուն, —  
Ախ, ինձ համար բուն չը կայ :

Հուանակն բնկաւ երթըկից ներս,  
Կշեռքն ելաւ երկնքում,

Ջով հովերն էլ մըթնշողէս  
Սատղերի հետ են զրցում :

— Սիրուն սատղեր, անուշ հովեր,  
Եարբս ո՛ւր ա՛ էս գիշեր .  
Պարզ երկնքի նշխուն աչեր,  
Եարիս տեսար էս գիշեր...

Հուրը բացաւ, դուռը բացաւ :  
Ամպ ու գամպ է, — թօն կուգայ .  
Ալ-ձին եկաւ, անտէր եկաւ,  
Ախ եարս ո՛ւր ա՛, տուն չի գայ . . .

Ա. Իսահակեան

### ԿԱՐՅԻ ՅԻՇՆՏԱԿԻՆ

(Արիստակէս Զօրեան)

Ջանկ, գանկ, այ վարպետ, շէկ կայծեր թոցուր  
Կռանէ սալըդ, ձե տուր մետաղիդ .  
Քամի տուր փուբսիդ, թորերըդ ուրցուր,  
Արծարծէ բոցը հանգած հընոցիդ :

Ժանգոտ, բիրտ երկաթըն «օճախը» խրէ  
Անձե երկաթիդ բերան շինէ սուր,

Դժոխքի բոցով բարկ մետադը ճըզմէ  
Ձև տուր պողպատին, կոփէ փայլեցնուր:


Ձար բախտն երկաթին կապեց մարդուս կեանք,  
Երկաթն է վճռող սև ու կարմիր օր.  
Առանց երկաթին արդարն անվճռանգ  
Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր:

Այդ նենգ ուղիին փշոտ ու մթին  
Յատակագիծը արիւնն է գծած  
Խեղճ ու զրկեալին, ստրուկ-գերիին  
Իրաւունք վճռող լոկ սուրը մնաց,

Երկաթն երկաթին կը փշրէ մէկ օր,  
Եսն ու բռնութիւն կը դառնան գերի.  
Շուռ կուգայ աշխարհը, գերին դարևոր  
Կը փոխւի տէրի, և ոխը՝ սէրի,

Ուժով դարկ, վարպետ, կայծերդ թուցուր,  
Հանգած հընոցիդ մէջը կատաղի  
Ահեղ վրէժի դըժոխք բըռընկցուր,  
Որ շուտով փշրես շղթագ ստրկի:

Ա.Բ.



ՏԱՃԿԱՆՍՅԵՐԻ ՕՐՀՈՍ

Դիտուն, թող գիրքը, ժամ չէ կարդալու,  
Դեղջուկ, դու էլ թող եզներն ու գութան,  
Տէր-հայր, դադարէ մեռել թաղելու, —  
Երկունքի մէջ է մայր մեր Հայաստան...

Երկունքի մէջ է Հայաստան աշխարհ,  
Մեզ պիտի շնորհէ մի նոր դոյութիւն.  
Փափագով սպասած ամենէս շատ դար—  
Հայոց աշխարհի սուրբ ազատութիւն:

Մոռանանք պահ մի հին հաշիւները,  
Թողնենք առօրեայ անձնական շահը,  
Հանենք սրբաբէտ մեր պիղծ կրքերը,  
Հանենք սրբաբէտ ըստրկի անը:

Քրիստոնեայ հնը մենք և սերունդ Հայկի,—  
Այսքանը բաւ է: Էլ լուսաւորչական,  
Կամ պապաղաւան և կամ լօթրանգի  
Ազգը չի բաժնենք՝ ի սէր հայութեան:

Ծանրը երկունքի մէջ է Հայաստան,  
Տանք թեթևութիւն նորա ցաւերին,  
Նորա ծընելու զեղեցիկ մանկան  
Թող չըտանք խեղդել թըշնամիներին:

Նորածնի առջև բանանք մեր գանձը —  
 Հարուստը՝ ոսկի, ուժը՝ պատանին,  
 Հարսը իւր փեսան, բաջը իւր անձը,  
 Կոնդակի շանթեր սուրբ էջմիածին:

Աստուած մեզ խնդճաց վերջին այս նւագը՝  
 Բացեց մեր պառաւ մօր ամուլ արգանդ  
 Թէ հայը մարդ է կազատւի ազգը,  
 Թէ չէ — Հայաստան կը լինի քարքանդ:

Գամառ — Բարիպա

### ՄԱՅՐԻԳԻՍ

Հայրենիքէս հեռացեր եմ,  
 Խեղճ պանդուխտ եմ — աուն չունիմ.  
 Ազիզ մօրէս բաժանւեր եմ,  
 Տխուր-տրտում — բուն չունիմ:

Սարէն կուգար, նախշուն հաւրեր,  
 Ա՛խ, իմ մօրս տեսեր չէք.  
 Ծովէն կուգար, մարմանդ հովեր,  
 Ախրը, բարե բերեր չէք:

Հաւր ու հովեր եկան կշտիս,  
 Անձէն դիպան ու անցան.

Պապակ — սրտիս փափակ — սրտիս,  
 Անխօս դիպան ու անցան:

Ա՛խ, բու տեսին անուշ լեզւին  
 Կարօտցեր եմ, մայրիկ ջան,  
 Երնէկ, երնէկ, երազ լինեմ,  
 Թ՛ունեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ բունդ գայ, լուռ գիշերով,  
 Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,  
 Սրտիդ կըպնիմ վառ կարօտով,  
 Համ ու խնդամ, մայրիկ ջան...

### ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿԻՆՔ

Գեղեցիկ Կովկասի երկինք, շուտով պարգելու չես դու,  
 Խաղաղ, զաղար զրութեան մեջ մի կերպով լինելու չես դու,  
 Առաջ սև էին ամպերդ, հիմա կարմրել են սաստիկ,  
 Անիրաւ երկրի նման, նոր-նոր արիւն վօթելու չես դու:

25 որ դու Աստուծոյ գահն ես, կապուտակ պարզ սիրուն  
 երկինք.

Ունիս համբաւ, ունիս հռչակ, ունիս բարձր անուն, երկինք  
 Ողորմած և գորովագութ, բարեսէր զգայուն երկինք,  
 Մի հատ մեծ հաշտարար որդի մեզ համար ծնելու չես դու:

Ջիւանուս պարզ հայելին դու, խաւար ամպաւած ես դաձել՝  
 Գեղաղէմ լուսաւոր երկինք, սև հազել, մթնած ես դարձել՝  
 Հոգեհան անուխի դէմքով քաղոցի Աստուած ես դարձել,  
 Գերանդին բռնել ես ձեռքիդ, կանանչ արտ հնձելու չես դու։

### ՄՕՐ ՍՈՒԳԸ

Սարի լանջին ընկած որդիս,  
 Կրժքիդ վարդին ես մեռնեմ.  
 Մէկ ճար գտիր արուն դարդիս,  
 Ա՛խ, բո դարդին ես մեռնեմ:

Երնաշաղախ, մենակ ընկած,  
 Կանաչնէ բեզ անկողին.  
 Անուշ բնով լուռ-մունջ բնած,  
 Չես լսում բո ծնողին:

Բաց, բալն ջան, աչքդ մէկ բաց,  
 Մէկ ինձ նայիր, այ անսիրտ.  
 Ա՛խ, իմ սրտին՝ էլւած, վառւած,  
 Մէկ ճար գտիր, քարասիրտ...

Յար. Պետրոսեան

### ԽՐԱԽՈՅՍ ՔԱԶԵՐԻՆ

Սիւնեաց աշխարհում կոիւ մղելով,  
 Մեր քաջ հերոսներ յաղթութեան յուսով  
 Կտրիչ, անվեհեր, վրէժով վառւած,  
 Թշնամուն տւին սաստիկ կոտորած:

Ելէք, հայդուկներ, օգնութեան գնանք,  
 Մեր ընկերներին խրախոյս կարգանք  
 Ազատ Սիւնիքի Վաղուտի ձորում  
 Պառկած գերթ առիւծ վէրք առած սրտում:

Քաջ Ստեփանեանց սչտանի Վահան,  
 Եւ կտրիք Զարօ ազգին զո՛հ եղան,  
 Գէ՛հ գնանք ընկերներ, փունջեր պատրաստենք,  
 Դրանց շիրիմները վարդով վարդարենք:

Ո՛հ, չկայ հանգիստ հայ զիակներին,  
 Մնացին նորա թշնամու ձեռքին,  
 Դրանց ամեն մի կաթիլ արիւնի  
 Փոխան պիտ թափենք արիւն ոսոխի:

Ըլուտ հասնենք, տղերք, քաջ գոհի տեղ,  
 Կարմիր արիւնները ամփոփենք մէկ տեղ  
 Մի՛թէ մենք չունին Հայկ ու Արամին  
 Անարատ արիւն մէջ մեր երակին

Հերիք չէ, որ մեր աչքերի առաջ  
 Արեամբ պսակին հայ տղերք քաջ-քաջ,  
 Դէհ, գնանք առաջ մենք անկեղծ սրտով,  
 Որ սուրբ նպատակ պսակի շուտով:



ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳՐ

Պրզտի տըղայ, չեմ օրօրիլ օրօրանքըդ, որ բուն՝ լաս,  
 Հայ աղբարբըդ ոտքի ելան, մենակ դո՛ւ ետ պիտ մնաս.  
 Զարթէ, հոգիս անուշ բունէդ, թո՛ղ աչքերըդ լուս տեսնին,  
 Արևմուտքէն արև ծագեց, բազը բանեց Հայ ազգին:

Չար սուլթանի ոսկի թախտը ջարդեցաւ, վար ինկաւ:  
 Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.  
 Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գրտնէ,  
 Սիրուն որդիս միթէ մենակ չար լուծի տակ պիտ՝ մըտնէ:

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողացինք ու լացինք,  
 Եզի ազի ատրտասունքով ձեռք ու ոտը լուացինք.  
 Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի Հայերուն,  
 Այժմ, նայինք, նա կը լըսէ շառաշիւնը սուրբերուն:

Տնւր, սիրական, բակեմ, ձերքիդ պալուկները, արձակեմ,  
 Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր զընեմ,  
 Ըստրուկ գնան արեան գաշտը, վերադարձիր ազատուած.  
 Արդեօք մի օր պիտի լըսես մեր խնդիրը, ո՞վ Աստուած:

ՄԵՐ ԱՅԺՄԷՈՒԹԻԿԸ

Ախ մեր խմած ջուրը, մեր կերած հացը  
 Գառնացել են, նրանց մէջը համ չկայ,  
 Մեզ բաժին է ընկել սուգը և լացը  
 Ուրախ շաբաթ: ուրախ օր ու ժամ չկայ:

Ինչու չեղանք արիւնարբու աւագակ,  
 Գող գող վրիժառու ելուզակ,  
 Ծով աշխարհում մնացել ենք միայնակ  
 Մեզ համար սրտակից բարեկամ չկայ:

Մարդ գիտենայ ինչ ենք արել մարդկութեան,  
 Որ վարում է մեզ հետ այդպէս չար դաժան,  
 Որ չի անում արդար դատ ու դատաստան,  
 Կամ բնել է մեր Աստուածը, կամ չկայ:

Զիւան, մեր արևը մութ ամպի տակ է,  
 Այցելութեան դուռը մեզ համար փակ է,  
 Հայր առանձնացած թռչնոց խմբակ է,  
 Մօտիկ արնակից մէկ երամ չկայ:





### ՅՈՅՍԵՐ

Հայի լաւ օրը մօտեցաւ, էլ մեզ բաժին լաց չկայ,  
 Լացն ու թացը կանանաց բանն է, տղամարդին լաց չկայ,  
 Քաջի համար ինչ լաց, ինչ բան, դուրս է գալիս ասպարէզ,  
 Թշնամու դէմ կուիւ տալով, փռւի գետին, լաց չկայ,

Ահա Սասունի քաջերը ազատ անվախ կուեցին,  
 Պատերազմի դաշտի վերայ քաջ մեռնողին լաց չկայ,  
 Նրանց մեռան, նահատական, բայց կենդանի անմահ են,  
 Բոլոր Եւրոպան դղրողաց, չէ առանձին լաց չկայ:

Գազան բրդին, անգուլթ տաճկին լաց ու սուգը ինչ կանէ,  
 Նրանց դէմը պէտք է սուր-թուր, գնդակ ու ժգին, լաց չկայ,  
 Արշալոյսը արդէն ծագեց, շուտ կըբացւի առաւօտ,  
 Զամալի, կրի հայոց ազգը ազատ, կրկին լաց չկայ:

### ԶԻՆԻՈՐԻ ԵՐԳ

Թռիք, իմ նժոյգ սըլացիք շուտով,  
 Տաճի ինձ ցանկալի կուի փոթորիկ,  
 Կուի մէջ միայն ես արեան գնով,  
 Կը փըրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Տաճի ինձ տշխարհ — անցեալում հօր,  
 Պանծալի վայրը իմ քաջ պապերի,  
 Ուր, աւնդ, դժբախտ կղբալըս այսօր,  
 Իւր կեանքն է ողբում՝ օտարին գերի...

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,  
 Ազգս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով,  
 Բայց նորան երբէք չժպտաց երկինք,  
 Չտեսաւ նա կեանք խաղաղ, անըվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,  
 Երկաթ սպասեց նա կեանքի դարնան,  
 Բայց նորա առջև ոտիս թշնամին  
 Իւր սրով փորեց կեանքի գերեզման...

Դէ՛հ, թռիք, նժոյգ, սըլացիք շուտով,  
 Տաճի ինձ ցանկալի մարտի փոթորիկ.  
 Մարտումն է գինուրն իւր արեան գնով  
 Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:  
 Ա. Ծատուրեան

### ՊԱՆԳՈՒԽՏ ՄՇԵՅՈՒ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր  
 Շախկամնի դօտիս թոռմշեր,  
 Եար մգիկ դըռնէն դուս չելնայ

Փշուրմի սիրտ մըզիկ խովնայ—  
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛...

Էրթամ Ստամբօլ,  
Դատիմ փարայ բօլ  
Իմ եարի խամար  
Առնեմ ջուխտ մի սօլ,  
Արի, եար, արի,  
Խռով մի կենայ,  
Աստուրիս բան  
Եւր, մզիկ չի մնայ:

Վայ, սանխէր Կիվկիվ,  
Գու գացիր ի Մուշ բարով,  
Էլ չըս յիգայ հագար տարով,  
Խարս պարկե տղայ բերէ,  
Սուջընեկ լէ գութան կը վարէ—  
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛:

Կայներ ես իրգին  
Խաղող կու բողես,  
Զամամ ծծերով  
Շարար կու մաղես.  
Ալմաստ բիշախով  
Զիմ սիրտ կու գաղես.  
Արի, եար արի...

Երթանք Ջաջուռ գեղ,  
Առնենք նուկիմ եղ,  
Մըր եարի խամար,  
Անենք ձաձեղ.  
Արի եար արի, խռով մի մնայ,  
Աստուրիս բան, եար, մզիկ չի մնայ:

## Ա Ղ Ա Ս Ի

(10. Արուեսան)

Մար ու ձոր ընկած՝ մէկ շոր թփի տակի  
Գետնին նայելով մնացել եմ նստած  
Զեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ բարի  
Տուած, լալիս եմ օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեիս,  
Քեզ մտիկ տալով, այ իմ բաղցը Մասիս.  
Աղի արտասուքով էրուած խորովուած,  
Երեսիդ նայեմ մնամ բարացած:

Ծընող, ազգական հեռու ինձանից,  
Հուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,

Եարաբ երբ կըլի, որ ես ձեզանից  
Իմ կարօտս առնեմ ձեզ ջան ասելով:


Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով,  
Մէկ աշուղ, որ գըլխիս պըտիտ է գալիս,  
Թէ երբ մէկ խաբար կըհասնի ինձ բարով,  
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս.

«Նազլու, իմ նազլու, աննման նազլու,  
Սիրտս խօրովուի անունդ յիշելով.  
Նազլու իմ նազլու, հրաշալի նազլու,  
Աղասին քեզ տայ իր հետին բարով:

Սարերի գոշին, ձորերի միջին  
Ղանց գլխին տալով քո խեղճ Աղասին.  
Երեսիցդ զրկուած քո սիրուց մաշուած.  
Տատրակի նման փշի վերայ նստած:

Նազլու, իմ նազլու, մէկ շունչս է մնացել,  
Ոսկերքս բըրբըրուելի, աչքերս խաւարելի.  
Թող մէկ շունչ առնեմ, յետոյ հողը մտնեմ,  
Դժոխք էլ տանեն, հանգիստ կըլինեմ,

Քող եմ մնում, քեզ, քո ջանին մեռնեմ,  
Հող ու գերեզման ես վըէս ունէմ,  
Քանց իմ սառը մարմին, էլ ինչ գերեզման  
Ինչի պէտք կուզայ, երեսիդ զուրբան:



### ՀԱՅՐԵՆԻՔ

(ՊԱՏԻԻ)

Քաղցրիկ հայրենիք, սրախ դուրեկան,  
Դու իմ ծննդեան տեղ նուիրական,  
Ըրդեօք մինչև երբ հողիցդ զրկուած  
Պէտք է թափառեմ երկիրներ կորած:

Ա՛լս. երբ յիշում եմ քո հողդ ու ջուրըդ:  
Սիրտս այրում է քո սիրոյ հուրդ,  
Ու միշտ ուզում եմ քեզի տեսնելու,  
Սրտիս սրբազան կարօտս առնելու:

Ճիշտ է, շատ մարդիկ քեզ չեն ճանաչում:  
Հարստացողն էլ վրադ չի նայում.  
Բայց ես սիրում եմ ոչ թէ անհարմար,  
Կարող եմ ասել, ինչպէս սիրահար:

Ոսկին ամենքի խելքն է գրաւել,  
Մարդոց սրտերը բարեխօս դարձել,  
Սուրբ են համարում և նուիրական  
Թէ ինչպէս պահեն ոսկին պատուական,

Նայեցէք երգողիս, դուք հայ եղբայրներ,  
Կարդալով յիշեցէք ձեր սար ու ձորեր  
Գոնէ դուք երկտասարգներ անվերջ սէր տուէք,  
Դէպի հայրենիք, ուր դուք ծնուել էք:

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ 1896 թ. ԿՈՏՈՐԱԾԻՆ

Ծուխը ամպի պէս կելլէր դէպի վեր,  
Տնդղի նման բոցը կը բայլէր,  
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի,  
Ընսիրտ անհոգի մատնւած են կրակի

Հայերն հոտի պէս սարսած կը վազեն,  
Անցնող դարձողէն օգնութիւն կուզեն.  
Օգնութիւն, խեղճեր: Կատաղած օսմանլին,  
Չար մահը կըսպառնայ զարհուրած հայրն:

Մայրը կականով կը փնտրէ աղջիկ,  
Աղջկան գերի առաւ շար տաճիկ.  
Իր որդուն կուզէ հայրը շուարած,  
Որդուն կըտեսնէ զագուխի ծերին:

Հայի հաւարած մալը աղբատին,  
Հալալ փայ եղաւ անկըշտում քիւրդին.  
Խեղճը յուսահատ կաշէ երկնքին,  
Կըսպասէ նպաստ հրեշտակաց զօրքին:

Խարուսիկ յոյսեր... դեռ շատ ու շատ դար  
Պիտի խարուխ, հայ, ինչպէս խաբուեցար,  
Թէ ինքզ չանես քո գլխիտ ճարը—  
Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը:

Խեղճ մարդ, մի անգամ մեռնելէն վախեցար,  
Մինչ մահուան օրըդ հազար մահ տեսար.

Հազար մեռնելդ հազար ցաւերով,  
Զաւակիդ փոսը ձեռքովդ փորելով:

Դու միշտ եղբօրդ անտերունջ թողիր:  
Մատիդ ծայրովը նրան շօղնեցիր  
Գլուխն առաւ խեղճը, գնաց հեռացաւ...  
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:

Դուն կարծեցիր թէ, ոսկին մեծ բան է,  
Ամեն մի ցաւի, դարզի դարման է.  
Ապա հէր «ոսկիդ քեզի չը օգնեց»,  
Կընկաղ, գաւակիդ մահէն չը փրկեց:

Ա՛խ, հայեր-հայեր, թէ որ ձեր ոսկին  
Կիսով չափ զոհուէր օգուտ հայ ազգին  
Առ միշտ կը դադարէր ձեր լացն ու կական  
Որ դրախտ երկնաւոր կըլլար Հայաստան.



Հեռաւոր երկիր, նստած դու նժդէն,  
Հայրենաց բաղդին մոտուց ես տեղակ,  
Քարոզ քաջարի նոր սկզբնաց վեհ,  
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գաղափարի քո ցանած սերման,  
Ազնիւ պտուղներ հասուն են արագ.

Կարին և Պօլիս որոտման նման,  
Անդրանիկ շարժումը ծնաւ քե Հնչակ:

Չար բռնակալը հայոց կեղեքիչ՝  
Վախէն պահուեցաւ ոսկէ գահի տակ.  
Խուլ եւրոպայի թնդաց մէծ գահլիճ,  
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Սյուրբ բո սերմանց նոր պտուղը ասա  
Հասան, կարմրին արեան նմանակ.  
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,  
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք Հնչակ:

Կոշնակդ հնչեցուր, հնչեցուր արագ,  
Թող հայք ոտք ելնեն—ծագէ մինչև ծագ.  
Փշրէ ժանգ շղթան, ծագէ նոր արև,  
Ազատ ենք, հնչէ, ոսկէգօծ Հնչակ:




1904 թ. ՍԱՍՈՒՆՈՒՄ ԸՆԿԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Հերան լանջին խոր նիրհում են ֆիտայիներ յաւիտեան.  
Ազատ ննջել միշտ սիրում են զաւակները բնութեան,  
Արիք գնանք, հայ ազգիկներ, հասնենք այնտեղ Սեմ լեռան,  
Մեզի պաշտպան ջանֆիզաներ մեզի համար բուն մտան:

Հասնենք քաջաց սուրբ գերեզման, թափենք արցունք աչերից  
Մեր հայրենեաց հողին պաշտպան զրկւեցանք քաջերից,  
Ահա հասանք, քաղէք ծաղիկ. նաև երգենք միասին,  
Քոյրերելով պարենք քաղցրիկ, յարգանք նրանցսուրբ շիրիմին:

Հիւսենք պսակ իրանց գլխին վարդ, մանուշակ, մեխակից,  
Երգենք նրանց յիշատակին, էլ չի վախենանք տաճկից,  
Մեզի համար զոհ գնացին դաշնակցութեան վեհ քաջեր,  
Կողբ են տուած լեռան լանջին ազատութեան փրկիչներ:  
Սեպուհ



### ԿՈՉ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ

Վրէժ են գոչում անմեղ արիւններ,  
Անհոգ մնալը քեզ չի վայելեր,  
Հասիր օգնութեան այն հերոսներին,  
Որոնք պաշտպան են մեր որբիկներին:

Ազաչում եմ քեզ, սլացիր այնտեղ,  
Սյնտեղ, որ կոտորում են շատ անմեղ,  
Ազատիր նրանց բո արեան զնով,  
Որ ես քեզանից չը մնամ խուով:

Դուրբան կը լինեմ քեզ այն ժամանակ,  
Յաղթանակ տարած երբ զրես նամակ,

Ահա այն ատենն կասեմք քեզի մարդ,  
Որ կը փարատես իմ ցաւ, վիշտ ու դարդ:

Օրեր ամիսներ և շատ տարիներ  
Քեզի պիտի օրհնեն հազար բերաններ,  
Կամ վրկիբ ազգդ կամ ընտրիբ քեզ մահ,  
Որպէսզի մնաս յաւիտեան անմահ:

ՔԱՅԼԵՐԳ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ

Դատէ մեր դատը գազան Սուլթանի դէմ,  
Մինչ չը զիջանի բաջ հայերիս դւմ,  
Ինչ կարող է վանդակից ազատուած,  
Առիւծի յառաջ կանգնել դէմ առ դէմ:

Ազատ լեռների կորիւնի նման,  
Կանգնել ենք թուրքաց դէմ յանդիման,  
Ինչքան որ կուզէ թող վառէ վառող,  
Չի կարող անել մեզի ոչ մի բան:

Չատ քիւրդ ու տաճիկ մեզ դէմ միացան,  
Քանիցս անգամ եղան ցիր ու ցան,  
Դաշնակցութեան դրօշակի ահից  
Ձեն կարող բռնել ոչ սուր, ոչ հրացան:

Նա թող սպասէ՛ ձմեռ թէ գարուն,  
Ինչ պիտի անէ Սասնոյ սարերուն,

Գնա դէպ հարաւ քո պաշտած վայրը,  
Շատ շի բերէ քեզ քո թափած արիւն:

Անդրանիկ ունենր մենք բաջ խմբապետ,  
Դու լաւ ճանաչիր թուրք սպարապետ,  
Անառիկ ամբոց մեր գլխի վերև  
Կանգնել է մեզ համար սուրբ Կարապետ:

Կայծակի նման տղերք ձախ ու աջ,  
Ջարնելով տաններ դրօշակն յառաջ,  
Ձէնքերիս ձայնից թող լեռներ գոռայ,  
Յաղթութիւն է մերն, մերն է սուրայ:  
Տ. Պ.

ՈՎ ՈՐ ԱԶԳ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ԶԻ ԸՆՆԱԶՈՒՄ

Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում,  
Հայր ու մայրը, անյայտ ընկեցիկ է նա,  
Փողոցներում առէր-առէր է կանչում,  
Առօրեայ վարձուած մունետիկ է նա:

Մարդկութեան մէջ առաջինն է ուժեղը,  
Որ պահում է ամուր հայրական սեղը,  
Անհայրենիք, թափառակուն թոյլ ցեղը,  
Երկրէ երկիր ընկնող մուրացիկ է նա:

Ոչ որ յարգ ու պատիւ չի տալիս, Ջիւան,  
 Թէ յարգել չըզիտէ մարդը ինքն իրան,  
 Ինչ ժողովուրդ երկիր շունի սեփական,  
 Ուրիշներու ձեռքին խաղալիք է նա:

Խ Ն Ա Մ Ի Ն

Ախ իմ պապի տանիցը ինձ դուրս արաւ թշնամին,  
 Եկաւ տեսաւ, չօզնեց իմ սիրելի խնամին,  
 Ոչ, հաւատալ չի լինի հիմիկայ բարեկամին,  
 Ինձ այսօրւան հասցրեց նրանից գալած բամին:

Խնամիս ինձ տեսնելու երբ եկաւ իմ երկիր,  
 Թշնամիս գրգռելով կուրի փոխեց խնդիրը,  
 Տուն ու տեղս քանդուեց, երկինք ելաւ մոխիրը,  
 Խնամուս պատճառովը մատնուայ անզգամին:

Թշնամիս հին էր թէպէտ, բայց մարել էր կրակը,  
 Բարեկամիս գալովը վար առաւ իւր դիմակը,  
 Այսպիսի վատ զրութեան հասցրուց իմ վիճակը,  
 Քիչ մնաց, որ խնամիս ինձի ուղարկէր ջամին:

Խնամիս քաջ հեռատես, ինքը հարուստ մեծ անուն,  
 Աշխոյժ, մարդիկ զբաւող, իր շահի մէջը գիտուն,

Որդոցս մի քանիսը թողնելով ողջ տեղ ու տուն,  
 Ետեն ընկան զնացին փափագելով զբամին:

Իմ թշնամիս դաժան է, ես նրանից խռով եմ,  
 Ուր որ գնամ, ուր լինեմ, խեղճ եմ, անապահով եմ,  
 Թէ ուզում էք իմանալ թշւառիս, արդեօք ով եմ,  
 Հայրենաց զոհ զնացած որդին եմ քաջ Արամին:

ԱՅՍՊԷՍ ԵՄ ՀԱՍԿԱՆՈՒՄ

Ես սիրում եմ մերձաւորիս, բայց չեմ առում օտարին,  
 Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ միշտ բարին,  
 Թէ օտարը ինձ չը ճնշէ, մէկ վնաս չը հասցնէ,  
 Չեմ կամենալ մինչև անգամ ոտքը հանդիպի բարին:

Գայլի զլխին աւետարան կարգալով չի գտալի,  
 Նրան պէտք է բռունցք ցոյց տալ, որ վախենայ, ընկճի,  
 Կան այս տեսակ օտար մարդիկ, նրանց հետ չի ապրի,  
 Բարութեան միշտ հակառակ են, սիրահարւած են չարին:

Շատ սիրեցի և յարգեցի օտարին անձիս նման,  
 Իմ այս տեսակ ընթանալս համարեց վախի նշան,  
 Որովհետև նա տգէտ էր, բարբարոս էր իսկական,  
 Լաւութիւնս չը հասկացաւ գաւաղը խենթ յիմարին:

Տես Ջիւանի, կայ այնպիսի երկիր, այնպիսի կլիմայ,  
Մերձաւորի և օտարի մէջը խտրութիւն չը կայ,  
Վերը որբեր են բնակուում, վարը դև ու սատանայ,  
Երկիրը երկինք չի դառնայ՝ գործը այլ է աշխարհին:

**ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂ**

Ազօթարանը բացւեցաւ, ժամանակ է գարթելու,  
էրթամ ախոռ, գոմշուկներըս լրծեմ՝ գութան վարելու:  
Գէհ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը երթանք աշխատինք,  
Հարկ ու խարջի վազէն մօտ է, վօթենք արիւն ու բըրտինք:

Հայի գութան, Հայի գութան, որի համար կը ջանաս,  
Ո՞վ քեզիմով կըտանջուի, որին դու կուշտ հաց կուտաս:  
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի ազատ օրըս կորուցի,  
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հողիս թուրքին մատնեցի:

Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն  
վերջ ունի.

Գուն տեսար, որ մեր գուշմանը ամօթ, խելք ու գութ  
չունի:

Արի փըշընեմ ես բու խոփը, տանք դարբինին կըռելու,  
Կըռենք—կոփենք սուր ու սուսեր գուշմանի դէմ կըռելու,

Եղբայրը Հայեր, առէք խոփը, առէք դարբինին  
կըռելու,

Կըռել—կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:  
Ռ. Պատկանեան.

**Ո Ր Դ Ի Ն**

Մենաւոր բանտի հիւանդանոցում՝ առաջին անգամ  
Նա բացաւ անմեղ իր աշուկները պարզ ու մանկական,  
Եւ նրա հնչիւն ու կայտառ ճիշը լսեցին բանտի  
Խոնաւ պատերը, այդ վկաները վշտի, ամօթի:

Թոյլ թաթիկներով նա պաշտպանում էր յամառ ու անգօր,  
Կարծես զգում էր երկիրը, նախատինք կամ ամօթն իր մօր,  
Եւ ահա կանգնեց խաւար ժպիտով յանդիման նրան,  
Համբ մի ստուէր ու լայն տարածեց թևերը մահուան:

Բայց մայրը որդուն խանդոտ թևերով իր կըծքին քաշեց,  
Քաշեց ու փարուեց և այնպէս մնաց անշարժ մէկուսի,  
Կուրծքը իր կըծքին, շուրթը շուրթերին գողգոջուն սեղմեց:

Իսկ երբ կամարին վառուեց արշալոյս, փրկութեան սուրբ  
կոչ,

Մայրական դէմքը, որ խոնարհուել էր մանկան երեսին,  
Նման էր ոչ թէ ընկածի դէմքին, այլ մի սուրբ կնոջ:





ՄԱՅՐԱԿԱՆ ԲՆԱԶԳ.

(Պատիւ.)

Ես գաւակ չունիմ. մոռացութեան մէջ  
Կրկորչի ետուն իմ մատաղ հասակ,  
Անհունձ խօտի մէջ, սառը աղբիւրի մօտ,  
Այդպէս է բուրում համեստ մանուշակ:

Օ, դու սրբազան համբոյր մանուկի,  
Որ սիրտ ես տալի անմխիթարին,  
Առաջին թոթով աղօթք հրեշտակի,  
Որ մայրն է շնչում մանկան շուրթերին:

Երգում եմ ոյժը բեղմնաւորութեան,  
Որը ծնում է հողու հիւթերից.  
Եւ աղբիւր յուսոյ, մխիթաբութեան,  
Եւ ծաղիկ սիրոյ, աստուածանման:

Երգում եմ պայթումն ցաւոյ արգանդի—  
Ա՛յն վսեմ ժամը ծննդականի,  
Որ մի ուրիշ կեանք փրկելու համար—  
Իր կեանք է դնում մահու սեղանին:



Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

(Ա. Նեգրի)

Մառը նկուղի խոնաւ անկիւնում խսիրի վրայ  
Պառկած է մենակ որբ մանկահասակ հիւանդ մի տղայ,  
Լուռ ապարինում նրա տանջանքին, խնամող Աստուած,  
Բանւոր մանուկ է նա, անօգնական ողջից մոռացւած:

Հրեշտակի թևով առաքիլը նրան տեսիլը ցնորալից,  
Այդպէս փարատուի գոնէ մօտալուտ մահուան տագնապից,  
Նա որ չըտեսաւ, վիճակը խեղճի զրկանք էր անվերջ,  
Ծեծ ու հայհոյանք գործարանային խուլ ժխորի մէջ:

Եւ դժոխային խիստ աշխատանքից ուժասպառ, տարտամ,  
Որպէս հնձած հասկ օրօրուեց ընկաւ մերենայի տակ...  
Գիտեմ, Արարիչ անանց սուրբ կամբիդ և մազն անգամ  
Զիպակասել մարդուց և սակային որբին մի թող անխնամ:

Սփոփիլը նրա կսկիծն ու լացը... Հրեշտակը մահուան  
Թող իր ջերմ սիրով, բաղցր զրոյցով փաղաքշի որբին  
Եւ կեանքին անհամբոյր, և բաղցր տանջող նրանից անբաժան  
Թող անհետանան խղճուկի մտրից մահուան ըոպէին:



Յ Ո Յ Ս

Թշուառութիւնը թունաւոր խայթով  
Սիրտս է շանթում ու վիրաւորում,  
Բայց հէնց որ խելքս կենդանի թափով  
Զարթնում է նորից—ուղեղս լարում:

Սլանում է նա որպէս փոթորիկ  
 Դէպի այն ամեն վաստակեալ մարդիկ,  
 Որոնք յուսահատ, վհատման ժամին  
 Կեանքի հետ կռուել, մաքառել կամին:

Որպէս սէգ արծիւ՝ միտքս թռչում է  
 Բարձր ամպերից և և աւել հեռու,  
 Ուսկից սարսափով մտաբերում է,  
 Որ վիշաք իրեն էլ չի հասնելու:

Եւ սիրտս նորից առաջուայ նման  
 Լցում է յուսոյ վառ գաղափարով,  
 Որպէս անյատակ ծովը անսահման,  
 Որ լի է անզին լալ ու գոհարով:

ՄՇԵՅՈՅ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Երբ որ մայրը երկունքով  
 Աշխարհ բերէ երեխայ,  
 Հայրը որդուն մի սրբած  
 Պիտի գաշոյն տայ ընծայ:

Երբ երեխան մեծանայ,  
 Խաղալիքներու փոխան  
 Հայրը ձեռքը պիտի տայ  
 Մի մահաբեր հրրացան:

Երբ որ որդին վարժատուն  
 Գայ ժամանակ երթալու  
 Նախ սուր խաղցնել, և ապա  
 Պիտ սովբեցնունք կարգալու:

Կարգալ-գրքել լաւ բան է  
 Բայց որ հասաւ քննութիւն,  
 Աշակերտին հարցուցէր —  
 Վոթել գիտէ նա արիւն:

Լոր դուք այսպէս յուսացէր  
 Փրկել խրդճուկ Հայաստան,  
 Ազատ, անկախ մարդ երբէք  
 Լինելու չէ մուրացկան:

Ռ. Պատկանեան



ՄԱՏԱՂԸ — ԵԹՈՒՄՕ, ԻՅ

Յաղթանդամ լերան ձիւնոտ գագաթից  
 Դէպ կիսակործան մատուռը, կամաց՝  
 Ծանրը բայլերով, շնչարգել եղած  
 Իջնում է մէկը լողնած ու բրտնած:

Նրա ջլապինդ ուսին վիթխարի,  
 Մի բան կայ կապած. — Երտօսի ժայռոտ  
 Լանջերում զարկած սրս է ոչխարի,  
 Թէ ձերպարնակ այժեամ վայրենի...

Տնքում է որսը. անգօր, ուժասպառ,  
 Մթնած աչքերը յառած երկընթին,  
 Եւ ազատութեանն ո՛չ մի յոյս իսպառ  
 Զի ծաղում երբէք իր թմրած մտքին:

Իջաւ ծանրարայլ որսորդը Թումօն,  
 Մըտաւ մատուռը, խաչ հանեց դէմքին,  
 Ապա կիսամեռ իւր որսը—Մամօն,  
 Երկիրզածութեամբ զըրաւ Սեղանին:

Դէմքը կատաղի, դաշոյնը ձեռքում,  
 Յառել է Թումօն աչքը Սեղանին,  
 Թնդում է սիրտը, արիւնը եռում  
 Եւ բարկութիւնից զողում շրթունքնին:

„Իմ կթաններս քըշեցին, տարան,  
 Այրեցին տունս, կինս լկեցին,  
 Վերջին պատառս քրդերը կերան,  
 Որդուս զուխը սըրով ջարդեցին...“

Այժմ աղբատ եմ, սըբազան սեղան.  
 Էլ ոչխար չունիմ որ բեզ գոհ բերեմ.  
 Աղօթք չգիտեմ բանամ իմ բերան,  
 Խունկ ու մոմ չկայ, չորէ չոր վառեմ:

Բայց զրանց փոխարէն Աբտօսի տակից  
 Քեզ գոհ եմ բերել, մի գոհ թանկագին,

Որից մինչ այստեղ ես իմ թիկունքից  
 Մի վայրկեան անգամ չեմ դրել գետին:

Ես նրան խլել եմ իր տար անկողնից,  
 Որտեղ իմ կնոջս առած իւր գիրկը,  
 Պիղծ համբոյրներով՝ կնւզէր նրանից  
 Յագեցնել փութով վարեհնի կիրքը:

Նա է, սուրբ մատուռ, Սեղանդ պղծողը,  
 Նա է որ անմեղ շատ արիւն թափեց,  
 Նա է իմ միակ որդուս մորթողը,  
 Նա՛ որ մեր հացով մեր արիւն լափեց:

Գուցէ մարդակային դու գոհ չես ուզում,  
 Գուցէ մարդկային հոսելն արեան  
 Զատ է „ողորմած“ քո սիրտը յուզում...  
 Ապա ո՛ւր էիր, ո՛ւր էիր սակայն:

Երբ մեր որդիքը կրակում ողջակէզ  
 Բառաչում էին նման ոչխարի.  
 Երբ նրանց կերկերուն ձայներն աղեկէզ  
 Թնդեցնում էին ծայրերն աշխարհի...“

Զէ իմ մտքերից ես չեմ նահանջում.  
 Պէտք է ընդունես, պէտք է գոհի նա,  
 Վրէժս յագուրդ է անշուշտ պահանջում.  
 Եւ այդ անպատճառ պէտք է ստանայ

Եւ յանկարծ ցոլաց ցոլքով կայծակի  
Ահեղ դաշոյնը Թուսօյի ձեռքում,  
Արիւնածարաւ Մամօյի կրծքից,  
Ցայտեց արիւնը վէրքից ահուելի:

Ու կարմիր ներկեց մատուռ ու Սեղան...  
Ժպտում է Թուսօն ժպտով սոսկալի.  
Ապա յարձակեց իւր որսի վրբան,  
Կուրծքը պատառեց զազանի նման

Արնոտ ձեռներով դուրս խլեց սիրտը,  
Զրգեց իբրև զարդ Սեղանի վրբան,  
Ապա դէպ երկինք մեկնեց իւր ձեռներ,  
Ու չորեց հանդարտ. նա աղօթում էր...  
Արամայիս

Յիշիր ժամը այն երջանիկ,  
Երբ իմ գիրկը նետուեցիր.  
Եւ հրճուելով ինչպէս մանկիկ՝  
Այրուող սրտիս սեղմուեցար:

Այն ժամանակ ամբողջ աշխարհք  
Միայն ինձ էր պատկանում,  
Երջանկութիւն. կեանք ու բերկրանք—  
Ամփոփուած էր իմ սրտում:

Եւ լուսինը գեղածիծալ,  
Շողշողալով երկնքում,  
Զինչ եթերից ուրախ-ուրախ  
Մեր սէրն էր օրհնեցում:

Այն ժամանակ յաւերժական  
Եւ բունն սէր խոստացար,  
Դու ուխտեցիր մինչ գերեզման  
Ապրել միայն ինձ համար:

Մինչև այսօր այդ խօստումին  
Լուռ վկայ են աստղերը.  
Անմահ վկայ են այդ ուխտին  
Լուսնի պայծառ շողերը:

Բայց խոստումդ նուիրական  
Ոտքիդ տակը ձգեցիր.  
Այրուող սիրտս դու յաւիտեան  
Խորտակեցիր, փշրեցիր:

Թ Ա Ղ Մ Ա Ն Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Դուք զո՞ն գնացիք վճռական կուռւմ  
Ժողովրդի անսահման սիրոյն,  
Դուք չխնայեցիք նրա կեանքի համար  
Ոչ սէր, ոչ պատիւ, ոչ ազատութիւն:

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր —  
 Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր,  
 Ազնիւ ընկերներ, դէհ, բարև մ'նաք,  
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:

Ձեզ հետևում են նոր մարտիկ խմբեր,  
 Մեռնելու պատրաստ քաջեր անձնուէր.  
 Դէհ բարև մ'նաք—դէհ բարև մ'նաք  
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:

Խոնաւ բանտերում հալ ու մաշ եղած,  
 Ձեզ շարշարում էր անգութ թշնամին.  
 Տառապում էիք անյոյս, շղթայուած,  
 Հնազանդ ձեր դահճի քմահաճոյքին:

Իսկ բռնակալը իւր պալատներում,  
 Գինով է վանում սև մտքեր դաժան.  
 Բայց պատի վրայ խօսքերն անաւոր,  
 Գծում է արդէն աջն օրհասական:

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր,—  
 Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր,  
 Ազնիւ ընկերներ, դէհ, բարև մ'նաք,  
 Ձեր վսեմ ուղին դուք պատուով անցաք:

\* \* \*

Թող ես մշակ լինեմ, գու եղիր իշխան,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի,  
 Թէ կուգես հաշտ ապրենք, բարի հարևան,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,  
 Իմ պարտքս է՝ աշխատեմ ոչ ոքի շտամ,  
 Թէ կուգես իրար հետ մնանք բարեկամ,  
 Պատւիս ու կեանքիս, հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,  
 Պատիւ չեղած տեղը՝ հաց չկայ առատ,  
 Կը ցանկանաս, որ շանեմ բեզանից գանգատ,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Բնաւ չեմ նախանձի բո ճոխ սեղանին,  
 Քո ոսկուն, արծաթին, բո գանձարանին.  
 Այս երգով կապրի Աշըղ-Ջիւանին,  
 Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

ԱՐՄԵՆ ԱՍՏՆԵԱՆԻ (Գժոխք կամ Հրայր) ՅԻՉԱՏԱԿԻՆ

Գերեզմանիս թող արձանին վերայ  
 Գրեն. յաղթութիւն, թէ՛ կոթող է սա,  
 Թող տեսնէ Հայաստան, թող կարդան հայ բաջեր,  
 Տեսնեն գիրենց ընկեր,

Նահատակ է պառկիր  
Ծոց Հայաստանի:

Անձներ և բազ Ղազարեանի պէս,  
Յուզներն գերեզման բազ Արմէնի պէս,  
Գալարի աղիբներ, թափեն արցունքներ,  
Տեսներն զիրենց ընկեր,  
Նահատակ է պառկեր,  
Ծոց Հայաստանին:

Յուսով եմ կնքած աչացս վերջին բուն,  
Տեսնայ Հայաստան իւր ազատութիւն,  
Իմ գերեզմանիս բով թող կայնեն ու ձայնին,  
Անա ազատութիւն,  
Անա փրկութիւն  
Քաղցր Հայաստանի:

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,  
Տեսներ փրկութիւն մայր Հայաստանին,  
Այն օրն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ  
Ազատ զրոշակներով,  
Հայ զինուորներով,  
Ու բահանաներով:



Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Ձան ֆիդայի բաջ տղերբ,  
Կուեցէք միշտ անդադար.  
Մինչև խեղճ հայի ցաւին  
Գտնւի մէկ դեղ ու ճար:

Անդրանիկ քեզ օրինակ,  
Առիւծի պէս համարձակ.  
Դիմում էր դէպ թշնամին՝  
Պարզած հայի զրօշակ:

Առաջնորդ հայ խմբերին,  
Խրախոյս ձեզ ամենին.  
Յուսանք դուր էլ կունենար  
Նրա անվահեր հողին:

Գոյութեան մէջ կուտղը,  
Կեանք կունենայ յաղթողը,  
Երկաթի դար է, կասեն,  
Ձէնքն է բազդի վճռողը,

Արդար դատը հայ ազգի  
Մբով պէտք է որ լուծուի.  
Էլ ուրիշ միջոց չկայ,  
Միջոցն այս է, ճամալի:

ՆԵՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՁՐ

Հայը շատ բաներ սորուցաւ,  
Դեռ շատ բան էլ պիտ սորուի.  
Զէնքով խաղալ վարժեցաւ,  
Պատրաստել էլ պիտ սորուի:

Դառն փորձը մեզ ցոյց տւեց,  
Առանց զէնքի մենք մարդ չենք.  
Վատ հարևանը ստիպեց,  
Որ մենք էլ զէնք վեր առնենք:

Մեր պատիւը, գոյքը, կեանքը  
Միայն զէնքն է փրկողը.  
Թէ ոչ մեր խեղճ աշխատանքը  
Կը փախցնէ զրկողը:

Ի՞նչներուս է պէտք արօր-գութան,  
Հաց աշխատել քրտինքով.  
Երբ մեր շուրջը ալան-թալան,  
Մեզնից խլում են զօռով:

Հայն էլ պէտք է այնպէս վարուի,  
Ինչպէս վարուում են մեզ հեռ՝  
Այսպէս կեանքը էլ չի տարուի,  
Պէտք է կուել այսուհետ:

Իբրև ստրուկ ամբողջ վեց դար  
Համնողը մեզ կեղեքեց,

Մենք տանջւեցանք չարաշար,  
Իսկ ուրիշը վայելեց:

Ուրեմն, ձեզ պէտք է յուսալ,  
Փրկիչ սուր ու հրացան.  
Առանց զէնքի, երգիչ Զամալ,  
Կեանքն է խարխուտ, անպաշտպան:



ՆԻԷՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Փոքր խմբով հազարների դէմ ելաւ,  
Քաջ առիւծի նման, քաջ Անդրանիկը  
Եօթը ամիս հերոսաբար կուեցաւ  
Տաճկի դէմ յանդիման, քաջ Անդրանիկը:

Թ՛նդանօթների դէմ անվեհեր կանգնած,  
Հազարաւոր թշնամիք գետին տապալեց,  
Իւր քաջ ընկերներով հրաջքներ գործեց,  
Շատ դովեստի արժան քաջ Անդրանիկը:

Սասնոյ լեռներիցը մինչև վան հասաւ,  
Օսմանեան բանակի զլխին ցաւ դառաւ,  
Տարածեց աշխարհում քաջութեան համբաւ,  
Մեծ պարծանք հայութեան քաջ Անդրանիկը:

Պատերազմի հմուտ ունի գաղափար,  
 Ձինւորներ պահելու զիրքերում յարմար.  
 Ջամալ, բիչ կը ճարւի այգպէս ղեկավար,  
 Կրւի մէջ անսասան քաջ Անդրանիկը:



ԱՆ ՎԵՐՁ ԴԱԻՆՐ

Հայութեան դէմ դաւ են լարում անդադար  
 Մեր չորս կողմը շրջապատող աղգերը,  
 Թակարդներ են սարքում անթիւ անհամար,  
 Մեզ նախանձող, մեզի ատող աղգերը:

Ուզում են աշխարհից ջնջել Հայերին,  
 Կամ թէ հեռացնել, ցրւել Հայերին.  
 Կաշխատեն իրանց մէջ ձուլել հայերին,  
 Հայի հոգին չճանաչող աղգերը:

Ջամալի, Հայ ազգը իրան պահել է,  
 Մրանից էլ շատ վատ օրեր տեսել է,  
 Քառասուն դար զիմացել է, սպրել է,  
 Ջքացել են մեզի ջնջող աղգերը



ՄԵՐ ԱՐՉԱԼՈՅՍԸ

Արեան ծովէն, Մոխրի դաշտէն վայրօրէն  
 Հնադարեան ուխտաւորի մը նման՝  
 Խոր հաւատքով Արեւմուտքի կողմերէն  
 Կը սպասէինք Արշալոյսի մեր ծագման:

Արեւմուտքը Ծիածաններ մերթ կապեց,  
 Որ վերակապ չեղան սակայն մեր վէրքին,  
 Եւ մերթ մոռալ ամպրոպներով ծածկըւեց  
 Ու շանթերով ահօսեց մեր որբ հոգին:

Կօչնակներու Պաղատանքին համընթաց  
 Մեր լացն, աղօթք կրկնւեցան դարեդար.  
 Կամ թէ չկար Ասուած, կամ կար չգթաց,  
 Ու մենք մահին սպասեցինք հոգեվար:

Մահայն ահա Արդարութեան Յովազներ  
 Իրաւունքի ճամբաները կարօրեն...  
 Մեզ Արշալոյս, Մաքառումի եղբայրներ,  
 Արեւելքէն պիտի ծագէ շուտօրէն:  
 Վտարանդի



Մընաք բարով, արև, գարուն  
 Եւ խնկաբոյր ծագիկներ,  
 Կարկաշանօս վրտակ սիրուն,  
 Կանաչազգեստ բլուրներ:



Մընաք բարով, համբոյր և սէր,  
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ.  
Վայելչութեան պայծառ ժամեր,  
Քաղցր ժըպիտ, կեօնք մատաղ:

Աղբատութիւն ես սիրեցի,  
Խեղճի լացը, հառաչանք.

Ես քընարս նըւիրեցի՝

Վիշտ երգելու և տանջանք...

Յ. Յովնաներուեան

## Զ Ա Ն Կ Ի

Զանկին եկաւ կոիւ տալով,  
Խոր քարերը իրար տալով.  
Սեան-ծովից մինչև Արագ—  
Արտ, ալգիներ զարգարելով:

Զանկի, գիտեմ դարդ շատ ունես—  
Բարձր ձայնով բողոքում ես,  
Դարդս խառնեմ դարդերիդ հետ—  
Արտասուքս ջրերիդ հետ:

Ժայռի գլխին բանա է շինած,  
Անուշ եարս մէջը քնած,

Հարուստ Զանկի, սլօք ցոյց տուր:  
Ափիդ կանգնեմ եարիս ինձ տուր:

Խիտ մագերս պարան հիւսեմ,  
Ժայռի գլխից վար քաշ անեմ,  
Կամար ունքերս մէջքիդ կապեմ,  
Քաղցր եարիս կամուրջ կապեմ:

Էլ մի վազիր դէպի առաջ,  
Կուրծքդ դէմ տուր ժայռի առաջ.  
Ծիչ արձակիր՝ ժայռը դողայ,  
Բալքեամ բանտը ջանիս թողայ:

Թէ չհասայ իմ մուրազին,  
Սե գիակս տուր Արագին.  
„Սե աչերը“ կեանքը զոհեց—  
Առանց եարի ապրել չուզեց ..

Թորոս



Ե Ր Ր Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

Ով սուրբ երրորդութիւն, զուօգնիր հային,  
Զօրաւոր հրացան, վառօգ ու գնդակ.  
Ամեն փորձանքներից պաշտպանիր հային,  
Մեր յոյս ապաւէնը ամեն ժամանակ:

Քեզի մեղայ կուգան ողջ հայկազունքը,  
 Երկար տարիք գործած այս սխալմունքը,  
 Քու պէտք է լինէիր մեր պաշտամունքը,  
 Մենք գործել ենք զօրութեանդ հակառակ:

Ով հայր ամենազօր, Մօսին հրացան,  
 Որդիդ գնդակը մեզ լինի պահապան,  
 Քո հողիդ վառօդը հասնի օգնութեան,  
 Շնորհդ անպակաս լինի շարունակ:

Քու ես այս աշխարհում մեզ կեանք պարզեցիչ,  
 Նեղեալներուն համնող, օգնող, ազատիչ,  
 Շատ ձնշած ազգերուն դու եղար փրկիչ.  
 Հայոց էլ ողորմեա, տուր բարի վիճակ:

Զամալի

### ԹՈՒՄԱՆԻ ԵՐԳԸ

Թորգեց յըմէն իր արքն ու փառք,  
 Գիգեր մրգիկ օգնութեան,  
 Խորին ի խոց ուր սիրտ կրակ,  
 Կտրիչներ խեթ քաջ Թուման:

Քուման պատեց մըր երկրին  
 Օր թէ յիմցանք սև խաբար:

էն կտրիչները յըմէն ընկան,  
 Վախ մըր արևն էր խաւար:

Որտորդն ընկաւ, արիւն քամեց,  
 Մըր աշիբեն, մըր սրտէն,  
 Էն Տէր-Ղազար կրակ ցանեց,  
 Վառեց մրգիկ էն օրէն:

Խայու խաչնի, խայու խաւատ,  
 Գորա մացել ձեր զօրքնի,  
 Որ լամեն ազգ կիտան մըր ջարդ,  
 Գուր հաւարի շէք խասնի:

Խայ կտրիճներ օր թէ մոռնար,  
 Գուշմանի այդ արարքներ,  
 Թող յաւիտեան էսիր դառնան,  
 Սև անցնի ուրենց օրնի:

### Բ Լ Բ ՈՒ Լ

Գնա բլբուլ մեր աշխարհից, էլ դու այստեղ մի երգիր,  
 Մեր օրը սև, մեր կեանքը ցաւ, էլ այս երկրում մի երգիր:  
 Տանջած սիրտը անուշիկ երգից քրքրում է, խորանում,  
 Սրտի վիշտը քո երգերից փրփրում է, լեռնանում:

Գնահ բլբուլ մեր աշխարհից, գնահ երգիւր այլ երկրում,  
Ասա այնտեղ, որ մեր վարդից արեան թարմ հոտ է բուրում:

Որ ողբաձայն մրմնջացող վտակների հոսանքին  
Միանում են արեան շիթեր, առաջ շարժւում մոլեգին:

Որ ծաղկազարդ հովիտներից մահւան ցուրտ հոտ է փչում,  
Որ մեր երկրում կանաչ դաշտերն իսկոյն կարմիր են  
ներկւում:

Գնահ, պատմիր, որ դու տեսար այրիացած մի երկիր,  
Սարեր, ձորեր կարմիր հագած արիւնհազարդ մի երկիր:

Այս ջան բլբուլ, էլ մի կանգնիր, գնահ պատմիր աշխարհին  
Մեր ցաւ ու հոգան, վիշտ ու թախիծ, մեր օրերը դառնագին:  
Ժիրայր

ԱՐԱՋԻՆ

Մեր սարերէն, մութ ձորերէն  
Պղտոր-պղտոր հուզաս, Արագ,  
Մեր սրտերէն, խոր աչքերէն  
Արուն բամբր, կերթաս, Արագ...  
Մեր սարերէն, սև ձորերէն

Ոլոր-մոլոր հուզաս Արագ,  
Այ սարեր, ջան սարեր,  
Ամաստի սարեր...

Քանի հարուր-հարուր տարի  
Մեր սրտերէն ելեր, կերթաս.  
Մեր դարդերով, մեր ցաւերով  
Խոլոր մոլոր կերթաս, Արագ...  
Մեր սարերէն, մութ ձորերէն  
Մեր ցաւերով կերթաս, Արագ.  
Այ սարեր, Հայ սարեր,  
Ջան անո՛ւշ սարեր...

Ու դարերով, մեր դարդերով  
էս աշխարհի քար-ապառաժ,  
Անգութ խղճին միշտ զարնելով  
Տխուր-տրտում կերթաս, Արագ..  
Մեր սարերէն, խոր ձորերէն  
Արուն բամբր, կերթաս, Արագ.  
Այ, սարեր, ջան ձորեր,  
Ջաւահիր սարեր...

Այս, աշխարհը անխղճմտանք,  
Քեզ չի գթայ ազիզ-Արագ,  
Քու բողոքին, բու մորմոքին  
Չի էլ լսի, արնոտ Արագ...

Մեր սարերէն, մութ ձորերէն  
Տխուր, տրտուտ կերթաս, Արագ,  
Այ սարեր, հայ ձորեր  
Զմրուխտի սարեր...

Դու նէլ, Արագ, մեր արունով  
Էս աշխարհի խղճի վրայ  
Դիզիր, դարձիր սեղան ծով. —  
Թոյն ու արոն, ազիզ-Արագ.  
Մեր սարերէն. մեր սրտերէն  
Արուն քամեր, կերթաս, Արագ.  
Այ սարեր, հայ-սարեր,  
Ջան անուշ սարեր,  
Ալմաստի սարեր...

ԴԷՊԻ ՄԱՐՏ

Ահա մայրիկ, ես գնում եմ  
Ազատութեան գոհուելու  
Քաջ ընկերներով միասին  
Անգութ քիւրդեր շարգելու:

Գերեզմանիս հողի վրայ  
Մէկ անուշիկ հոտ մը կար,  
Այսուհետեւ, անուշ մայրիկ,  
Ինձնից քեզ օգուտ չըկայ:

Երբ որ մայր իմ, Սասուն եկար,  
Ինձի ճրտեղ փնտրեցիր.  
Գերեզմանիս վրայ գալով  
Ի՞նչ ասացիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վրայ  
Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ,  
Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,  
Երիտասարդ եմ մայրիկ:

Գերեզմանիս քարի վրայ,  
Խոշոր տառով գրեցէք՝  
«Այսուհետեւ, հայ մանուկներ,  
Ազատութեան գոհուեցէք»:



ԻնՁ ՄԻ ԽՆԴՐԻ...

Ինձ մի խնդրի. ես չեմ երզի  
Իմ տխրութիւնն ահագին,  
Ազեկտուր նորա ձայնից  
Կը խորտակուի բո հոգին:


Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ  
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վերայ,  
 Ուր չորացան խոտ ու վարդ:  
 Անապատ է այնտեղ հիմա,  
 Սև, ամայի անապատ:

Հառաչանքից այրուած սրտում  
 էլ ծաղիկ չի դալարում:

Բոյր ու գեփիւռ ես կուզէի,  
 Եւ արշալոյս ոսկեփառ,  
 Որ մի պայծառ երգ հիւսէի  
 Ու երգէի զեզ համար:

Բայց իմ սիրտը բռնած են դեռ  
 Հուր հառաչանք, սև գիշեր:



## Ճ Ա Կ Ա Տ Ա Գ Ի Ր

(Ա. Նեպոս)

Մնաքիս մօտ լուռ գիշերին յայտնուեց մի շքնաղ կին,  
 Սրած դաշոյն, շիկած ածուխ, ասես աչքերը լինէին.  
 «Իուք մարդիկ, ինձ կնքեցիք վիշտ, տառապանք անունով»,  
 Այդպէս են ինձ այժմ կոչում—ասաց կինը ժպտալով:

Ես սարսեցի... «Հանգստացիր, խեղճ իմ զաւակ փոքրոզի,  
 Այսօրուանից իմն ես միակ. չեմ գիշանի ոչ ոքի,  
 Յետքէդ կուգամ մինչ գերեզման—խինդ ու լացդ կխսելու,  
 Ախ, հեռացիր...» բայց չէ ուզում նա աղերսս լսելու:

Եւ կանգնած է արձանի պէս դժբախտութեան թաղուհին,  
 Բաղդդ այնտեղ երկնքումն է լոկ սահմանուած թշուառ կին.  
 Նոճիների մեռած կոկոն, զրկանքների դու դստրիկ,  
 Բաղդդ այնտեղ է սահմանուած, շիրիմի գալուկ որը ծաղիկ:

Ես արթնացայ... «ախ, ես կարօտ դեռ իմ ջահել հասակում,  
 Կուզէի, որ բաղդը բէրէր երջանիկ օր այս կեանքում,  
 Կուզէի, որ կուրծքս ուրչէր ցնորալից յոյգերով,  
 Ապրէր, շնչէր, ոգևորուէր՝ կենսուրախ, վառ սիրով...»:



## Ո՞վ Զի ՍԻՐԵԼ...

Ո՞վ չի սիրել խնդրէմ ասէր,  
 Ես նրան սնց սիրեմ կամ լինեմ ընկեր.  
 Զէ՞ որ ստիպելով մեզ կը վնասենք,  
 Շատ կը թշուառանայ յետոյ կեանքը մեր:

Փեսան ինձի է պէտք թէ բեզ, հայրիկ,  
 Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ.  
 Երբ սիրով կապուած չեն տղայ ու աղջիկ:  
 Նշանն անհիմն է, պսակը անվաւէր:

Հայրիկ, քո բաղձանքը բարի բաղձանք չէ,  
 Այդ քո տուած կեանքը ինձ համար կեանք չէ,  
 Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,  
 Փող շահուել ու առարկայ չէ օգտաբեր:

Տուր ինձ այն փեսան, որին ես կը սիրեմ,  
 Գնամ, ուրախ սրտով կեանքս նուիրեմ:  
 Այնուհետև հաստատ ես պարտաւոր եմ  
 Քեզ համար աղօթել ցերեկ և գիշեր:

Դու ինձ մի տար մեր թշնամու գաւակին,  
 Ձեռն կարող դիմանալ ես այդ կըրակին:  
 Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,  
 Ո՞վ ունի նրա պէս գեղեցիկ պատկեր:

Ես սիրել եմ իմ Հայկակին յաւիտեան,  
 Ինձ համար մեռած է քո ընտրած փեսան  
 Կսպասեմ իմ եարին, չեմ գնայ նրան,  
 Ծնող ես, մի դառնայ որդուդ գլխակեր:

Մի աղջկայ բերանից լսել եմ հաստատ  
 Այս խօսքը, հօր դէմ խօսում էր ազատ,  
 Թէ տեղը չը գտաւ մի աղջիկարմատ,  
 Հուտով կը թառամի որպէս անջուր վարդ:



### ՈՐՍԿԱՆ ԱՆՊԵՐ

Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը փնտրես,  
 Ասա եարաբ, դուն չը տեսնար իմ մարալիս իմ բալիս,

Դարդի ձեռքից սարէն ընկաւ, իմ մարալս իմ բալէս,  
 Գլուխն առաւ բարերն ընկաւ, իմ մարալս իմ բալէս:

Տեսայ բոյրիկ, նախշուն բալիդ կարմիր պսակ էր կապել,  
 Սիրած եարի համբուրի տեղ սրտին վարդէր էր բուսել:

Որսկան ախպէր, ասա եարաբ, ո՞վ է հարսը իմ բալիս,  
 Ո՞վ է գրկում չոր գլուխը՝ իմ մարալիս, իմ բալիս:

Տեսայ բոյրիկ սիրուն բալիդ,—բարն էր դրել բարձի տեղ,  
 Անուշ բնով տաք գնդակն էր կրծքին սեղմել եարի տեղ:

Մարի մարմանդ հովն է փչում վառ ճակատին մարալիդ,  
 Փաղիկներն են վրան սզում քո մարալիդ քո բալիդ:

Ա. Խասհակեան



Յ Ա Ռ Ա Ջ

Ազատ, համարձակ միմեանց ձեռք տանք  
Եւ յառանջ գնանք բոլորս միասին.  
Եւ թող գիտութեան գրօշակի տակ  
Մեր գաշնակցութիւնը զօրանայ կրկին

Մենք չենք շինելու մեզ համար կուռք  
Ոչ երկրի վերայ, ոչ էլ երկնքում.  
Եւ աշխարհային բոլոր փառքերին  
Երբէք տալու չենք երկրպագութիւն:

Մենք կը քարոզենք սիրոյ ուսումը,  
Մեծատուն մարդկանց, չքաւորներին,  
Եւ դրա համար հալածանք կը կրենք,  
Ներելով ցնորած թշնամիներին:

Երանի նրան, որ միշտ նեղութեան մէջ  
Դաժան հոգսերումն է կեանքը մաշել:  
Եւ ծոյլ, խորամանկ ծառայի նման՝  
Իրա տաղանդը գետին չէ թաղել:

Լսեցէք, եղբայրք, ձեր եղբօր խօսքին,  
Քանի որ թարմ ոյժ է մեր մէջ եռում—  
Մենք յառանջ դիմենք, ինչ էլ որ բաղդը  
Պատրաստած լինէր մեզ սպաղայում:

ՁԷՅԹՈՒՆԻ ՔԱՅԼԵՐԳ

Խնդացէք վեհ բնութեան զարդեր,  
Նաշխուն, քնքոյշ ծաղիկներ.  
Ուրախացէք սիրուն վարդեր,  
Պայծառ երկնքից աստղիկներ...

Անառիկ Ձէյթուն, իւր անյաղթ քաջերով  
Վրէժ է զոչում անվախ առիւծներով:

Երկինքը մեր գլխին պարզեց,  
Լացը փոխուեց հրճուանքի,  
Ստրուկ հայր արգէն ցնցուեց,  
Ձեռքը մէկնեց նա զէնքի...

Անառիկ Ձէյթուն և այլն

Խորհրդաւոր քնից զարթնեց  
Հայ պատանին քրտնաթոր,  
Աչքը բացեց և ինչ տեսաւ  
Նա, քաջերին ղինաւոր...

Անառիկ Ձէյթուն և այլն:

Ամեն մի հայ պարտք համարեց,  
Իւր սուրբ գառը պաշտպանել.  
Ազատ անկախ ու անվեհէր,  
Թշնամեաց դէմ մարտնչել:  
Անառիկ Ձէյթուն և այլն:

### ՉԱԽՈՐԳ ՕՐԵՐԸ

Չախորդ օրերը ձմրայ նման կուգան ու կերթան,  
 Վհատելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան,  
 Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,  
 Որպէս յաճախորդ շարւեշարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,  
 Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,  
 Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
 Որքան մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,  
 Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան,  
 Արեւ առանց վախենալու ցայտում է լոյսը,  
 Ամպերը դէպի ազօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
 Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան  
 Աշխարհը հիւրանոց է, Զիւան, մարդիկը հիւր են,  
 Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:



### ՀԵՐՈՍ, ԴՈՒ ԱՆՅԱՐ...

Հերոս, դու անցար քո կեանքի ուղին,  
 Այժմ քո փառքը կնայրի աշխարհում.  
 Կնայրի քո վսեմ, անձնուրաց ոգին  
 Սուրբ հայրենիքիդ հօրը երգերում.  
 Կնայրի քո դորձը — գործ հերոսական,  
 Որ ազատութիւն պարգևեց նրան:

Քանի որ ազգը շնչում է ազատ,  
 Կենդանի կըմնաս դու նրա կրծքում  
 Դու ընկա՞ր... բայց քո արիւնն անարատ  
 Կընոսէ դարձեալ մեր երակներում.  
 Եւ քո գործերի փառահեղ դափնին  
 Միշտ ոյժ ու եռանդ կըտայ քո ազգին:

Կու՛ի փոթորկում անունդ յիշելով,  
 Սարսափ կը ձգենք թշնամու սրտում.  
 Հերոսիդ մահը կերպեն մեծ փառքով  
 Մեր մատաղ կոյսերն իրանց երգերում.  
 Եւ դու չես լսիլ երբէք լացի ձայն —  
 Լացը կանարդէր քո սուրբ գերեզման...

Ա. Ծատուրեան





ԱՆՁՐԵՒՆ ԵՎԱԻ

Անձրե եկաւ շողալէն

Ուրի տերե գողալէն

Վայ լէ, լէ, լէ,

Ջան լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

Հրէս էկաւ իմ ախպէր  
Ալ ձին տակին խաղալէն  
Վայ լէ, լէ...

Քանաքեռ բարձր տեղ ա,

Ջուրը հիւանդի գեղ ա,

Սիրած սիրածի չեն տայ.

Էս ի՞նչ անօրէն գեղ ա:

Սիրել էմ սէրն երեսին  
Ռէհան թէրն երեսին  
Ո՞վ իմ սիրածն ինձ չի տայ  
Աստու կրակն երեսին:

Ա Ն Է Ծ Ք

Ունիմ Ասուած, բայց չունիմ Տէր,  
Տարածներդ բեզ չի մնայ,  
Կստանաս փոխարէնը անխախտ՝  
Տարածներդ բեզ չի մնայ:

Շուտ կստանաս փոխարէն,  
Բռնած գործդ է անօրէն.  
Տուրը կտաս վարէն վերէն  
Գողացածներդ բեզ չի մնայ,

Մէչ տուն ունէի, բանդեցիր,  
Խեղճ գաւակներու զրկեցիր,  
Գուռ ու պատուհանս ջարդեցիր՝  
Տարածներդ բեզ չի մնայ:

Շատ չըտեսց գործդ երկար,  
Տանջեցիր ինձ՝ գու էլ տանջւար.  
Շուտով փոխարէն ստացար,  
Գովածներդ բեզ չի մնայ:

Չի կշտանայ գողացողը  
Պատիժ կստանայ տանողը,  
Մեծի անէծքը առնողը,  
Թալանածներդ բեզ չի մնայ:

Չըկարողացար շուտով մարսել,  
Տարածդ բէզ է վնասել,  
Սկսեցիր շուտով փոխել,  
Տարածներդ բեզ չի մնայ:

Մարեցիր իմ վառ աշտանակը,  
Սրախս զարկիր սուր նիզակը,

Մեջս գցեցիր վառ կրակը,  
Տարածներդ քեզ չի մնայ:

Մինչև անգամ հին հագուստներս,  
Գտար, տարար պահուստներս,  
Մարեցիր իմ վառ յոյսերս՝  
Տարածներդ գեղ չի մնայ:

Ս. Թ.



### ԷԼ ՉՈՒՆԻՄ

Վաղ հոգեկան մխիթարանք ես ունէի, էլ չունիմ  
Կայծ ու աշխոյժ, եռանդ ու ջանք ես ունէի, էլ չունիմ.  
Հոգսերը ինձ ժանգի, ցեցի պէս մաշեցին սիրտս, հոգիս,  
Ոոկու նման սխրալի կեանք ես ունէի, էլ չունիմ:

Վարք ու բարքս առաքինի, արդարոց համեմատ էր.  
Մարդ էի՝ թէ սխալէի, խիղճս ինձ կը նախատէր.  
Մէկ ժամանակ շատ լաւ էի, հաւատս անարատ էր,  
Սուրբ ու մարուր վառ խղճմտանք ես ունէի, էլ չունիմ:

Խղճն, օգնէ Զիւանուդ, տենչալի մարդասէր Յիսուս,  
Խաւարի տանջանքներուց փրկէ, ազատէ հանէ դուս.  
Հեռացան ընկերներս, թողին միայնակ խղճալուս,  
Շատ շատերուց սէր ու յարգանք ես ունէի, էլ չունիմ:



.. Ինչքան երկինքը ամպէ, որոտայ  
Կայծակ, հուր, երկաթ, շանթեր արձակէ.  
Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ,  
Վերջը դարձեալ պայծառ արև կը ծագէ,

Թէ ծովը ծփայ կատաղի սաստիկ  
Իւր ալիքներով ափից դուրս չի գայ.  
Թող իջնի թաթառ, հանէ փոթորիկ,  
Թող փչէ հողմը ինչքան կամենայ,

Թող պատերազմն ազգերն իրար հետ,  
Թող մէկը միւսի արիւնը խմէ.  
Թող խփեն իրար, գնդակ, մահու նետ,  
Եղբայրն իւր եղբոր թող միսը ծամէ...

Կանցնի բոլորը, կուգայ ժամանակ.  
Եմեն առարկայ իւր վերջը ունի,  
Որդին կը նստի հօրը փոխանակ,  
Նոր հոգի, նոր կեանք նորից կսկսուի:



### ԼԱԻ ԳՈՒՂԱԿՈՒԹԻՒՆ

Կանցնին այս օրերը, էլ յետ չեն դառնայ,  
Մեզի կը ժամանեն գեղեցիկ օրեր,  
Հողիս գուշակում է բարի ապագայ  
Եւ նրա հետ մէկտեղ երջանիկ օրերը:

Նեղութեան դիմացող տօկուն հայ մարդը  
Բանի տեղ չի գնիլ կարկուտի ջարդը,  
Փուշը մենք կը բաղենք, որդիքս վարդը,  
Նրանք պիտի տեսնեն անուշիկ օրեր:

Ջիւան, կը բացուի երկինքը կապուտակ,  
Պը յաջորդի վարձալի եղանակ,  
Աստուծով այս վատ օրերու փոխանակ,  
Պիտի տեսնենք լաւը հինգ պատիկ օրեր:

### ԲԱՒԱԿԱՆ Է ՔՈՒՆ

Ջարթեցէք, հայեր, քնանք բաւական,  
Հնչում է փողը պատերազմական.  
Առնենք զէնքերըս, յառաջ պլանանք,  
Կուող քաջերի հետը միանանք:

Ամօթ է ամբողջ մարդկութեան առաջ,  
Բաւական է մեզ, լաց կոծ և հառաչ,

Մեր արտասուօրին մէկը չը գթաց  
Ծոյլին, վախկոտին չի գթայ ասուած:

Ծնանք մեռնելու, էլ ի՞նչ կը սպասենք,  
Արքայութեան բաժին ունենք չասենք.  
Եթէ չմեռնենք մարդկութեան համար,  
Մեղաւոր ենք մենք, չենք լինի արդար:

Վանենք մեր սրտից վախը և ահը,  
Ջարդենք և փշրենք բռնութեան գահը,  
Մահը իմացողին համար չէ մահը՝  
Գաղափարի զո՞հ նա է անմահը:

S. Պ.

### ՈՉ ՅՈՅՄ, ԱՅՆ ԳՈՐԾ

Ոչ. եղբայր, յոյսըդ ուրիշին մի գնիլ,  
Ժամանակ է, առ զէնքերըդ, մի քնիլ.  
Ինչու աչքերըդ ուշ բացիլ  
Եւ քու եղբարցդ համար լացիլ.  
Արտասուքդ դեռ չը չորցած՝  
Դարձեալ սկսեցիլ, լացիլ:

Մայրըդ ծնաւ բեղի այս աւուր համար,  
Պատմեց պապիդ քաջութիւնը անհամար.

Չէ որ դու քաջի զաւակ ես,  
 Ինչ որ հայրդ էր, դու խկապէս  
 Վեհանձնութեամբ շատ նման ես,  
 Ոխը սրտիցդ ուր կը հանես:

Անբաղդ հայեր, արդեօք դուք ո՛ւմ գանգատիք,  
 Գատաստան չը կայ, որ ձեր դատը դատիք.  
 Ո՛հ, գերութիւն մինչ էրբ տանենք,  
 Վախը սրտերիցըս վանենք,  
 Մենք էլ մեռնենք մեր եղբարց պէս,  
 Գէթ թշնամուց վրէժ հանենք

Տ. Պ.



ՍԻՐԱԿԱՆԻ ԳԱՆՔԱՏԸ

Ես քեզ սիրի, որ դու ընծի չը թարկես,  
 Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարկես,  
 Անիծիմ, տաս տարի տեղումդ պարկես,  
 Եօրդանի մէջ աքայ կողերդ, աղջիկ:

Ում հեա էլ որ երթաս՝ հեադ չվարւի,  
 Պսակուելուդ օրը՝ քօղքդ սև կարւի,  
 Հօրդ տուն ու դուռը սև քարով շարուի,  
 Ան ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզուն ուռի, բերանը կապւի,  
 Քառասուն օր տանջւի՝ հոգին չը քակւի,  
 Ընծնէն դայրի հեադ ով որ պսակւի,  
 Իրեք օր չվելէ սէրդ, այ աղջիկ:

Չգտնիս խամ կտաւ էնես արխալուդ,  
 Լէն բօլ աշխարհի մէջ օրըդ անցնի սուդ,  
 Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուդ,  
 Օձի պէս սակաւի քո կերդ աղջիկ:

Ես մի խեղճ աղայ եմ, էրի քեզ գիւման,  
 Աստուածածին էնի քո մօրդ գիւման,  
 Իր կենաց մէջ նա՝ չունենայ սաղ ջան,  
 Որ ինձ էրաւ տնից դարբէզար աղջիկ:

Պատճառն ինչ էր, որ չհաւանաք գուք ընծի,  
 Կարօտ էք դովլաթի, փափանգ էք գանձի,  
 Առաջ խօսքը տուողի լեզուս պապանձի,  
 Տանողդ չը տեսնի քու խերդ աղջիկ:

Ալազեօզ աչքերդ, կամար ունքերդ,  
 Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,  
 Քեզի ընծնէն էրաւ քո քեաֆիր մէրդ,  
 Խնդրում եմ շատանայ վերքերդ, աղջիկ:

Ես Չուլալօղլին եմ, դարդերով եմ կեցի,  
 Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լսցի,  
 Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,  
 Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԾ

Լօ, լօ, լօ—Սիփանա սէգ սարի վրայ,  
Կարիճները շտապով գալիս են միանում,  
Եյնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ,  
Ձէնք ու գրահի են ընտանում:

Ահա վառւում են զինւում,  
Սանձակոժ ձի հեծնում անհամբեր,  
Նրինը նրանց բորբոք սրտի մէջ եռում,  
Թռչում, անցնում անհամբեր,  
Ձերթ Սիփանայ պինդ քամին,  
Սլանում են դէպի ցած,  
Դաշտի միջին թշնամուն պատահում են  
Եւ մեծ վրէժ անմոռաց —  
Ահեղ կռում նրանից առնում,  
Հատու սուսերը հանում,  
Յեղապետին են սպանում,  
Եւ գերթ կիզող հուր վառւում:

Այժմ բոլոր ցէղն ոտի կանգնած՝  
Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—  
Նրեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,  
Եւ թշնամին պարտուած՝  
Թողնում փախչում սարէ սար՝  
Յեա ձգելով մեծ աւար

Նրին թափեցին, արինի փոխանակ  
Նրին քամեց ծարաւի սուսեր,

Նրան յագեցած դրեցին պատեան,  
Ելանում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր,  
Սէգ Սիփանայ կանաչ գլխին յաղթող  
Յեղն անում է սհ, մեծ խնդում,  
Ամպերի թանձրութեան միջից  
Սիփանն ամբողջ է թնդում.  
Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք  
Սուր տեսան մեր պողվատիք:



ԱՂՂՈՒԽՍ ԿՈՐԱԻ

Աղլուխս կորաւ ձեր դուռը,  
Սրտէս դուրս չի գայ մրմուռը,  
Քաղղն ինձի գցեց էդ կուռը,  
Անուշ տղայ տուր աղլուխս:

— Քու աղլուխդ ինձ մօտ չկայ,  
Ես կը երգուիմ, «Աստուած վկայ»,  
Ով գտել է թող բերէ տայ—  
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Աղլուխս եարի բաշխած էր,  
Ել աբրեշումով նաշխած էր,  
Պատկերս վրէն քաշած էր,  
Անուշ տղայ, տուր աղլուխս:

— Քու վարմունքիդ ինչ անուն տամ,  
Քիչ է մնում որ անվերջ լամ,  
Մօտս լինի՝ բերեմ կուտամ—  
Սիրուն աղջիկ, քու աղլուխս:

— Մութատէդ կուտամ աղլուխս բեր,  
Դու ամեն օր կեր կաթի սեր,  
Ինձի քարերուն մի խփեր,  
Անուշ տղայ, տուր աղլուխս:

— Սէրդ ընձնէն վաղուց է սառեր,  
Տուած խօսքէդ ետ ես դառեր,  
Հաւատան, որ ես չեմ առեր,  
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Ի՞նչ ջուղաբ պիտի տամ սօրս,  
Սիրտս կտրաւ ընկաւ փորս,  
Խաբար տարէք մեծ ախբօրս,  
Անուշ տղայ, տուր աղլուխս:

— Աղլուխիդ տեղը չեմ գիտեր,  
Ինձի մի անուշ ետր պիտեր,  
Աջաբ տեսնես ո՞վ է գտեր,  
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ

Ա Խ Պ Է Ր Զ Ս Ն

Այ ու ալւան ես հագել,  
Կարմիր լալայ ես դառել.  
Առիւծի պէս կայնել ես,  
Բեղերդ ուտրել ես.

Աղբէր ջան, բեզ դուրբան,  
Մեր գիւմանը դու ես, դու:

Սարի դօշին կայնել ես,  
Հրացանը բռնել ես,  
Դրօշակը ձեռքիդ է,  
Յաղթութիւնը տարել ես:

Աղբէր ջան և այլն:

Դու ես իսկական ֆիդան,  
Փամփուշտներիդ ես դուրբան.  
Մազրիկ ձեզը զողում է  
Քո ձեռքիցըդ աղբէր ջան:

Աղբէր ջան և այլն:

Մեր գիւմանը բեզի մնաց,  
Մնացել ենք որբ ու բաղցած,  
Անգութ բարբարոսներից  
Հայ աղջիկը անպատուած:

Աղբէր ջան և այլն:

### ՀՈՅ ԿԱԶԱՆ ԻՄ

Հօյ, նազան իմ, նազան իմ,  
 Զան, նազան իմ, նազան իմ.  
 Նազան, դու բարով եկար,  
 Կանաչ սարերով եկար,  
 Ծաղիկ բաղելով եկար,

Գարնան սիրուն ծաղիկ ես,  
 Հօյ, նազան իմ, նազան իմ,  
 Ինձ համար աղանձիկ ես.  
 Զան, նազան իմ, նազան իմ.  
 Գլխիս վրբով պլտիտ տուր,  
 Հօյ, նազան, իմ, նազան իմ.

Նախշուն-թե թիթեռնիկ ես,  
 Զան, նազան իմ, նազան իմ.  
 Եար ջան, դու բարով եկար,  
 Կանաչ սարերով եկար,  
 Շաքար ծամելով եկար.  
 Քիշմիշ ուտելով եկար:



### ՃԱՄԲԱՅ ՏՈՒԷՔ

Ճամբայ տէր առաջ դամ,  
 Սիրած եարիս բարե տամ.  
 Ուխտ եմ արել, որ առնեմ,  
 Թող տեսնի աշխարհ ալամ:

Սարեր, ձորեր, հետ կացէք,  
 Իմ եարին ճամբայ բացէք.  
 Եար եարի հետ խօսելիս  
 Ականջ արէք, իմացէք:

Նըշի ծառին նուշ կըլնի,  
 Վարդի հոտն անուշ կըլնի,  
 Երանեկ էն աղջկան  
 Սիրած եարին թուշ կըլնի:

### ՂԱՐՍԵՅՈՅ ԵՐԳ

Ես վերէն կուգայի՝ դու դուռը բացիւր,  
 Զեռքդ ծոցդ տարար՝ ան ինչ էրիւ լացիւր,  
 Ես էլ քեզի շառայ՝ տունը մնացիւր  
 Գընը, դապի խային, եար չեղար ընձի:

Ես սարէն կուգայի, շալակս բուրդ էր,  
 Լեզուդ ընձի համար վառած բուրուրթ էր,

Բօյղ դարդու դամիշ, յերեսզ թուղթ էր,  
Գընը, դապլի խային, եար չեղար ընձի:

Երկինքը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,  
էկայ դրոնէն անցայ, ջանանս հոն էր.  
էրեցայ-վառեցայ, էս ինչդ տուն էր:  
Գընը, դալի խային, եար չեղար ընձի:

Էսօր շաբաթ էղնիր էզուց կիրակի,  
Եարըս դրոնէն անցնիր էրթար կրակի,  
Լեզուն բանլիք էղնիր, ծոցը ֆռանկի:  
Գընը, դապլի խային, եար չեղար ինձի:

ԱՐԱՋՆ ԵԿՍԻ ԼԱՓԻՆ ՏԱԼՈՎ

Արազն եկաւ լափին տալով,  
Փեռ բարերին, տափին տալով,  
Որտեղ թաղեմ ես իմ դարդը,  
Չօր զլուխս տափին տալով:

Այ իմ Արագ, ջուրդ վարար  
Սիրուն եարիս եարար տեսնը  
Ես չը հասայ իմ մուրազին,  
Արագ, եարար կարօտս առնը:

Ամպերն ընկան Մասիս սարին,  
Կարօտ մնացի ես իմ եարին,  
Աստած սիրես, էրած սրտիս  
Ջուղար բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,  
Արտասուբս թանաք շինեմ,  
Արագ, ծէգը ջրիդ շառած.  
Իմ սե գարգը բեզ կը բերեմ.

Կասես շողքը բարին ընկաւ,  
Կրակը սրտիս մէջն ընկաւ,  
Կամար ունքից, թուխ աչքերից,  
Ցան իմ ջիւան ջանիս ընկաւ:

Յ. Յովնաննիսեան

ՄԱՐԱԼՈ ՋԱՆ

Մարալօ, շան մարալօ, մարալօ,  
Մարալօ, սարի աղջիկ դարալօ,  
Մարալօ, աղջիկ անունդ Շուշան.  
Մարալօ, մասնիքս տամ քեզ նշան,  
Մարալօ, արի գնանք Սուրբ-Նշան,  
Մարալօ, քեօ մինթանէն խըշխըշան:



Ջաղացս մանի, մանի,  
Քունս անուշ կրտանի.  
Իմ եարս սարուժ քօլում,  
Իմ քունը սնց կտանի:

Ջաղացիս գուռը տաշած,  
Սղըլիսիս գիւլը քաշած  
Կեռ կեռ ունքերիդ մեռնիմ,  
Ոսկի դալամով քաշած:

Հանդէն գաս՝ գեղը մտնես,  
Իմ քցած տեղը մտնես.  
Ինձնից գիւման եար բռնես՝  
Բիմուրվաթ հողը մտնես:

Մտիկ արէք էն զըշին,  
Ոտը զրեւա փշին.  
Գլուխս զուրբան կտամ,  
Չալ աչք, կարմիր թշին:

Դու նստել ես դօշակին,  
Ուշ ու միտքդ փէշակին.  
Խմել ես նռան գինին,  
Հոս քաշել մանուշակին:

Երևը կամար-կամար.  
Կապել ես ոսկէ քամար.

Յիսուն օր պաս եմ պահել,  
Իմ աղբօր ճամբի համար:

Սարի խոտը ձեղէ ձեղ,  
Ընկեր երթանք միասեղ.  
Որ հարամին վըրայ տայ.  
Գլուխս տամ գլխիդ տեղ:

Սարէն կըգայ ձիաւոր,  
Մեր տունը չարգախաւոր.  
Հրէս եկաւ իմ աղբեր:  
Երեք օրւան թագաւոր:

Հաց եմ թխել, գարի ա,  
Իմ եարը սաֆարի ա.  
Սաֆար երթալուդ մեռնեմ,  
Խօսքերըդ շաքարի ա:

Խնձոր ունիմ կըծած ա.  
Չորեք կողմն էրծաթած ա.  
Աղբերս ուզեց, աւի սչ,  
Ազիզ եարի զրկած ա:

Ջաղացս ման եմ տւել.  
Սիրել եմ, ջան եմ տւել.  
Օխտը տարի սէրութիւն,  
Մէկ օր պայման եմ տւել:

Այ տղայ, դու բաղովն արի,  
 Ոտներդ շաղովն արի.  
 Էս թաղը դալմադալ ա,  
 Ման տուր, էն թաղովն արի,

Ծաղիկ եմ քաղել՝ գեղին ա,  
 Իմ ետքը ձեր գեղին ա.  
 Հէլ ու մեխակ շատ ունեմ,  
 Հըրէ ետքիս ձեռին ա:

ԷՍ ԳԻՇՆԵՐ ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇՆԵՐ

Էս գիշեր, լուսնեակ գիշեր,  
 Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
 լէ, լէ, լէ, լէ, լէ,  
 Ձիւնն եկեր, գետին, նախշեր,

Աչքըդ դէմ արա՝ պաշեմ,  
 Կեռ ունքեր, կարմիր թշեր:  
 Ո՞վ է տեսել՝ սիրած ետքը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ:

Այ գիշեր, դարձի տարի,  
 Հացս թող լինի գարի,  
 Մենակ ետքըս ինձի համար  
 Սըրտով խօսքս կատարի

Ա՛ղջի, բու շարը տանեմ,  
 Քու սիրուդ ինձ կը սպանեմ.  
 Գու իմ խօսքին ականջ դիր.  
 Ես մօրըդ հաւան կանեմ:

ՉՈՂԵՐ ՋԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի, Շողեր ջան,  
 Սարից տուն չի գալի, Շողեր ջան,  
 Գուն օրօրան, դուն շօրօրան, Չողեր ջան,  
 Ամպի տակին ձուն կերևայ, Չողեր ջան:

Սիրտըս կրակով լըցւած, Շողեր ջան,  
 Աչքերիս բուն չի գալի, Չողեր ջան.  
 Գուն օրօրան, դուն շօրօրան, Չողեր ջան,  
 Ամպի տակին ձուն կերևայ, Շողեր ջան:

Հուրէ թափում վերիցը,  
 Ես վառայ բո սէրիցը.  
 Վարդավառին ինձ համար  
 Ձուն բեր դու սարերիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,  
 Ձէկլիկ ետքըս տուն եկաւ,

Դեռ մուրազիս չը հասած,  
Վրէս խորունկ քուն եկաւ:

Աշունն եկաւ սարիցը,  
Տերև թափեց ծառիցը,  
Չողոն դարդով լըցւել ա,—  
Հեռացել ա ետրիցը:

Ա Լ Ա Գ Ե Ա Ջ

Ալազեազ սարն ամպել ա,  
Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,  
Աղբէրս իր ձին թամբէլ ա,  
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբերս իր ձին թամբէլ ա,  
Եարոջ զըռնէն անցել ա:

Եարոջ զըռնէն անցել ա,  
Ելէ դաշտը՝ խաղցել ա,

Ելէ դաշտը խաղցել ա,  
Անձրև եկէ, թըրջել ա,


Անձրև եկէ. թըջել ա,  
Արև գարկէ չորցել ա,

Արև գարկէ՛ չորցել ա,  
Քան կարմիր վարդ բացւել ա,

Մեր դռանը խնկի ծառ, Գիւլնում ջան,  
Չեր դըռանը խնկի ծառ, Գիւլնում ջան.  
Խնձոր բաղեմ արի տար, Գիւլնում ջան.  
Իմ խորոտիկ, պըղտիկ ետր, Գիւլնում ջան:

Մեր դռանը խընկի ծառ,  
Նախշուն բըլբուլ վըրէն թառ.  
Երթար ու գար, շորոր տար,  
Սիրուն ետրին բարև տար:

Մեր դռանը խընկի ծառ,  
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.  
Կարմիր խընձոր բաղել տար,  
Ալան ծաղիկ տանել տար:



Ծ Ա Մ Թ Է Լ

— Իմ գլխու ֆաթէն կիտամ,  
Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողւորի մէկ լէ ես եմ,  
Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ գլխու շամբար կիտամ,  
Դէ խանա ծամթելն ի ծովէն,

— Լողւորի մէկ էլ ես եմ,  
Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

Եար ունիմ եար ունիմ  
Եարիս եօթն ախպէր ունի.  
Եար ունիմ, եար ունիմ,  
Եօթ լէ գացած բանելու:

— Իմ վզի վզնոց կիտամ,  
Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողւորի մէկ լէ ես եմ,  
Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ սերսուփ ծամեր կիտամ,  
Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,  
Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

Եար ունիմ, եար ունիմ,  
Բաղչիս միջին վարդի ծառ.  
Եար ունիմ, եար ունիմ,  
Վարդը բաղեմ արի տար:



ԽԱՆՈՒՄ ԷՎԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ելագեազ տեսայ.  
Խանում էւա ջան.  
Աբարան աչքերիս դուման ա դառել,  
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով.  
Լալով ողբալով, քեօշ ու բարխանով,  
Խանում էւա ջան:

Ոչխարն էսդին կարծայ, էսդին գառները,  
Կանչըցեր ա ծաղիկները, ծառները.  
Օրեր գարնան, անուշ օրեր  
Ա՛խ ուր էք կորել...

Արի էրթանք բու ման գալած արտերը,  
Խանում էւա ջան  
Քեզ տեսայ թաժացաւ իմ դարդերը,  
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով.  
Լալով ողբալով, քեօշ ու բարխանով  
Սարեր ման գալով:

Ձեռ ու ոտս կապին, բերդը գրեցին,  
 Չուխա շալվար լալով տունը բերեցին,  
 Օրեր գարնան, ազատ օրեր  
 Ախ, ուրէք կորել...

Ես Ալէքն եմ Չամաուեցի մէկ ջիւան,  
 Խանում էւա ջան.  
 Տուժսադ էդոյ ըստուց չուրի էրեան:  
 Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով...




ԳՆԱ ԵԱՐՕ ՋԱՆ

Ղարսա բերդը փլել ա  
 Գնա, եարօ-ջան գնա  
 Եարիս տակին բնել ա  
 Գնա սալգաթ մի մնա,

Ձեր բաղի դուռը բաց ա  
 Գնա եարօ-ջան, գնա  
 Ոտներդ շաղով թաց ա  
 Գնա գինւոր, մի մնա:

Մեր տան յետն մի մառան  
 Տղերքն եկան յետ գառան

Ձեռս տարայ թէ բռնեմ  
 Դիփ լալ ու մարջան դառան  
 Դէ, գնա, եարօ-ջան գնա  
 Գնա կուլին մի մնա:



ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ

Հով արէք, սարեր ջան, հով արէք,  
 Իմ դարդին դարման արէք:  
 Սարերը հով շին անում.  
 Իմ դարդին դարման անում:

Ամպեր, ամպեր, մի բիշ գով արէք,  
 Վարար անձրև թափէք, ծով արէք  
 Գէշ մարդու օր-արևը  
 Սև հողի տակով արէք:

Հով արէք ամպեր ջան, հով արէք,  
 Իմ դարդին դարման արէք:  
 Ամպերը հով շին անում,  
 Իմ դարդին դարման անում:

Սարեր, ձորեր գաշտեր ու ջրեր,  
 Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,

Մի վեր կացէք, իմացէք,  
Տեսէք իմ սրբտի ցաւեր:

Հոյ արէք, սարեր ջան, հոյ արէք,  
Իմ դարդին դարման արէք:  
Սարերը հոյ չեն անում:  
Իմ դարդին դարման անում:



ՀՈՒՍԸԱԿՆ ԱՆՈՒՇ

Հուսնակն անուշ, հովն անուշ,  
Վայ, լէ, լէ, լէ, լէ,  
Վայ, լօ, լօ, լօ, լօ:  
Չինականի բունն անուշ:

Երնեկ էն օրեր,  
Որ կելնենք սարեր:  
Ծագեց լուսնակ երկրնուց.  
Հովրւի փողն էր անուշ:

Հօտաղն եզներ կարածայ,  
Մաճկալ պառկեր՝ բունն անուշ:

Ջրզգզուն բամին կը փրչէ  
Ծովային հովն էր անուշ:

Գաշտեր, ձորեր մընջեր են,  
Ջրերը գըլգըլան՝ ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,  
Բըլբուլի տաղն էր անուշ

Անմահական հոտ բուրէր,  
Քաֆուր վարդի հոտն անուշ:

ՍԵՒԻԿ ԱԶԵՐ

Վըրդովեցիր խաղաղ կեանքս սիրական,  
Անցուղարձովդ ինձ նայելով մշտական:  
Ձէի տեսել մէկ հոգեհան բեզ նման  
Սեիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,  
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Ինչպէս մնամ ես առանց բեզ միայնակ,  
Գուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,  
Ակնարկելով գաղտնի ամեն ժամանակ,  
Սեիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,

Անուշ անուշ խօսելովդ սիրուն կոյս,  
Մաշած սրտիս նորից տւիբ կեանք և յոյս՝  
Առանց զինոյ արբեցուցիր խզճալոյս,  
Սեիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,  
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Միրոյդ սուր սուր նետերովը խոցեցայ,  
 Իբրև ծաղիկ զեռ չըբացւած գոցեցայ,  
 Երբ բեզ տեսայ կրակովդ լեցվեցայ,  
 Սեիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,  
 Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

Միրոյդ լարը պարանոցէս տւիր կախ,  
 Օր ու արև շունիմ գործս է ան ու վանխ,  
 Կրկին խօսէ գոնէ լինիմ ես ուրախ,  
 Սեիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,  
 Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր:

ԱՆ ՈՒ ԱԼԻԱՆ...

Ալ ու ալւան ես հագել,  
 Կարմիր լալայ ես դառել,  
 Սուրայի կլոր մէջըդ  
 Փամփուշտներով ես ծածկել:

Ալ ու ալւան ես հագել,  
 Ախպէր ջան բեզ դուրբան,  
 Մեր գումանը դու ես դու:

Չեռքդ թւանք ես առել,  
 Դուշմանի դէմ ես կանգնել,  
 Ինձ ասան զլիսիդ մատաղ  
 Բինիշդ սով է կարել:

Չեռքդ թւանք ես առել  
 Ախպէր ջան բեզ դուրբան  
 Մեր գումանը դու ես դու:

Եռիւծի պէս կանգնել ես  
 Բեզերդ ոլորել ես  
 Մե թուխ բեզերուդ մատաղ  
 Յաղթանակը տարել ես

Առիւծի պէս կանգնել ես  
 Ախպէր ջան բեզ դուրբան  
 Մեր գումանը դու ես դու:

Միրաս վրէժով լցիք  
 Կրակով բորբոքեցիք  
 Ազիզ քուր ու ախպրտանք  
 Անան թուրս սրեցէք

Միրաս վրէժով լցիք  
 Ախպէր ջան բեզ դուրբան  
 Մեր գումանը դու ես դու:



ԷԼԻ ԵԱՐԻՍ ԵՄ ԳՈՎՈՒՄ

Միբուններ, միք նեղանայ  
Որ ես իմ եարին եմ գովում,  
Գուր իմ դարդըս չէք իմանայ  
Էնդուր նրան եմ գովում:

Թէկուզ լինէք աղանեակ  
Թեկներդ լայն բաց արած.  
Ճախրելով վեր բարձրացանք  
Էլի նրան եմ գովում:

Թէկուզ լինէք սիրամարդ  
Ձեր գեղեցիկ փետուրներով,  
Կամ անուշիկ երգող սոխակ  
Էլի եարիս եմ գովում:

Մագերդ ոսկէթել է  
Ոնրերդ նորածին լուսին՝  
Աչքերդ փայլուն աստղեր,  
Էլի եարիս եմ գովում:

Որբան կուգէք զարդարէք  
Ալ ու եշիլ գոհրաններով,  
Եարս սև՝ դուր ալ հագէք  
Էլի եարիս եմ գովում:

Ամէն մէկդ մէկ մէկ փերի  
Իմ առաջս ման էք գալի  
Բայց ինձի չէք գրաւի  
Էլի եարիս եմ գովում:



ՄԻՐՈՅ ՏԱՂԵՐԻՑ

Առաւօտուն ելամ, աչքս ընկաւ երեսիդ,  
Էլ չը մնաց ինձի վերա հալ, փարի  
Տարար խելքս գլխէս, արիւր սարսարի,  
Մարդիկ ժողովր գլխիս, արիւր դալ, փարի:

Ասլդդ խաբար առնիմ, ըշկամ աիւն դո՞ր ես,  
Նախշուն շամամայ ես, կարմիր խնձոր ես,  
Էշխիդ ալաւը ինձ էրեց մնձորեց,  
Էլ չմնաց ինձ վերայ հալ, փարի:

Խօսքդ որ կտաս իլդարէդ մի դարձ,  
Գեօշդ ինձ դեօշակ, թերդ գլխիս բարձ,  
Ձիլֆերդ ետ արա՛, մէ երեսդ բաց,  
Տըսնամ շափահիր ես՝ եօխսա լալ, փարի:

Սալմաստցի Յարութիւնն եմ, շիւմլէին  
դաստան,

Օրս էլ անցուցիմ քիւլի քիւրդաստան,  
Իմ ու բոնը մնաց վերջին դաստաստան,  
Մինչ Քրիստոսն իկայ ուռնէյիկալ, փարի:



Ս ՈՆԸ ԵՆՐ

Սոնա եւր, Սոնա եւր,  
Սոնա սիրուն, Սոնա եւր,

Վառգավառը գալիս ա,  
Սոնա եւր, Սոնա եւր,

Ծաղիկը ցնծալիս ա.  
Սոնա սիրուն, Սոնա եւր.

Այգիլում կանչող աղջիկ,  
Սոնա եւր, Սոնա եւր:

Զէնդ ծլվլալիս ա.  
Սոնա սիրուն, Սոնա եւր:

Կանաչ տեղը՝ բազում ես,  
Պարի միջին խաղում ես.  
Կարաւի պէս սորալով,  
Տըղաներին դադում ես:

Կարմիր գինին թասումը,  
Ես եմ քո հաւասումը.  
Ե՞րբ կը տաքնան աղջիկերը--  
Վարգավառի պասումը:

— Սիրուն աղջիկ, նազունիս  
Շահ-գազայի սազ ունիս,  
Հողեմ շահ-գազի գըլուխ,  
Դու իմ հոգում հազ ունիս:

ԶՈՂԵՐ ԶԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի,  
Զողեր ջան,

Սարիցը տուն չի գալի.  
Զողեր ջան.

Դու շորորա՛, դուն օրօրա՛.  
Զողեր ջան.

Ամպի տակին ձուն կերեայ,  
Զողեր ջան.

Սիրտըս կրակով լըցուած,  
Զողեր ջան:

Աչքերիս բուն չի գալի:  
Շողեր ջան.

Դու շորորա՛, դուն օրօրա՛  
Շողեր ջան:

Ամպի տակին ձուն կերեայ,  
Շողեր ջան:

Հուրը ա թափում վերիցը,  
Ես վառայ քո սէրիցը.  
Վարգավառին ինձ համար  
Ձուն բեր գու սարերիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,  
Շողեր ջան.

Չէկլիկ եարբս տուն եկաւ,  
Չողեր ջան.

Ուն կերկայ, ձուն կերկայ,  
Չողեր ջան,

Բերդի տակին տուն կերկայ,  
Չողեր ջան.

Գեռ մուրազիս չը հասած  
Չողեր ջան.

Վըրէս խորունկ բուն եկաւ,  
Շողեր ջան.

Բերդի տակին տուն կերկայ:  
Չողեր ջան:

Սշունն եկաւ սարիցը,  
Տերե թափեց ծառիցը.  
Չողօն դարգով լըցունել ա. —  
Հեռացել ա եարիցը:

ԽՐՆԿԻ ԾԱՌԸ

Մեր դըռանը խընկի ծառ,  
Գիւլնւմ ջան,

Չեր դըռանը խընկի ծառ,  
Գիւլնւմ ջան.

Խընկենին ա բերել բար,  
Իմ խօրտաիկ, պըգտիկ եար:  
Գիւլնւմ ջան:

Մեր դըռանը խընկի ծառ  
Նախշուն բըլբուլ վըրէն թառ,  
Երթար ու գար, շորոր տար,  
Սիրուն եարին օրօր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,  
Սարջան բըլբուլ վըրէն թառ.  
Գընար ու գար, շըլին տար,  
Անուշ եարի թեին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,  
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.  
Կարժիր խընձոր անել տար  
Այլւան ծաղիկ տանել տար:



ԽԱՆՈՒՄ ԵՒ Ա. ՋԱՆ

Ես Աղեկն եմ Չամբրլեցի, մէկ ջիւան  
Խանուժ Եւա ջան:

Բըռնին տարան էստուց չուրի Երևան.  
Դուն կեցիր բարով,  
Ես կերթամ լալով.  
Լալով՝ ողբալով,  
Քոչ ու բարխանով,  
Սարեր ման գալով:  
Լալով, ողբալով,  
Քոչ ու բարխանով.  
Սարեր ման գալով:

Չեռ ու ոտըս կապին բերդը զըրեցին,  
Չուխայ, շալուար լալով տունը բերեցին:

Օրեր, գարնան անուշ օրեր,  
Ա՛խ, ո՛ւր էք կորեր.  
Օրեր, գարնան անուշ օրեր,

Քերդիցը դուրս էլայ, Ալագեազ տեսայ,  
Արտրած աշխարհքը զըրախտի պէս ա.  
Ապարան աչքերիս դուման ա դառել,—  
Իմ կեանքն ու արևը եաման ա դառել:  
Ոչխարն էսդին կարծայ՝ էնդին գառները,  
Կանաչել են ծաղիկները, ծառները.  
Արի, երթանք ըս մանգալած արտերը,  
Քեզի տեսայ, նորացան իմ դարդերը:

ՄԱՆԱՆԻ ԵՐԳԸ

Արի Մանան արի գնանք մեր տունը,  
Գիշեր ու զօր կտրաւ աչքերիս քունը.  
Ե՛ւր, ե՛ւր, Մանան, ջան եար,  
Չանան ջան եւր:

Մանանիս հայրիկը չըլտըր դասապ է,  
Ինձի Մանանիս քով էրթալ եասարէ,  
Ե՛ւր, եար, Մանան ջան եար,  
Չանան ջան եար:

Մանանը վերէն կուգար շալկինը ժախ էր.  
Ոսկէթել մագերը թիկունքից կախ էր,  
Եար, եար, Մանան ջան եար,  
Չանան ջան եար:

Երկինքը ամպել էր, գետինքը թաց էր:  
Մանանիս ծըծերը կիսէն հեռ բաց էր,  
Եար, եար, Մանան ջան եար,  
Չանան ջան եար...

Գիշերը դուրս էլայ ինչ անուշ թօն էր,  
Կանգնած մայիլ էլայ Մանանս հոն էր,  
Եար, եար, Մանան ջան եար,  
Չանան ջան եար:

Գիշերը դուրս էլայ ոտքս բոբիկ էր  
Իրծաթէ քամարը մէջքիս գօտիկ էր  
Եար, եար, Մանան ջան եար:  
Չանան ջան եար...



### Լ Ո Ր Ի Կ

Գացի արտեր, բլունի լոր,  
Աղջիկ տեսայ եայլի ձոր,  
Նըման էր կարմիր խընձոր:


Լորիկ, գարնան քարեր  
Գու վարդ արիբ, լորիկ:  
Նըման էր կարմիր խընձոր.  
Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ.  
Լորիկ, գարնան քարեր  
Գու վարդ արիբ լորիկ:

Արև դիպաւ սարերուն.  
Կարաւ թըռաւ քարերուն,  
Լորիկ կայնե վեր գարուն.

Ձուր կուգայ գոչգոչալէն.  
Գըլխուդ ես գըցե վալէն,

Լոր, չես հարցնե իմ հալէն:

Քար մի թալի իմ ղըշին,  
Թող գոյ նըստի քու թըշին,  
Կըրակ տու զարիբ փըշին:



### ՏՈՒՆ ԱՐԻ ՏՈՒՆ ԱՐԻ

Ամպել ա, ձիւն չի գալի,  
Մըթնեկ ա, տուն չի գալի.  
Հեռու ճանապարհի ես,  
Աչքերիս քուն չի գալի:

Կանչում եմ, կանչում եմ, եւր, արի, եւր,  
Մութն ընկաւ, տուն արի, անջիգաւր եւր:

Էս գիշեր կանցնի ղըժուար,  
Կերթայ բարակ ու երկար.  
Իմըս որ ախ ու վախով,  
Քոնըդ ինչպէս կանցնի, եւր:

Ձորերս ի վեր հանդեր ա,  
Ձուրը տունըս քանդեր ա  
Շուտ արա, յետ դարձիր, եկ. —  
Սիրածըդ տանն անտէր ա:

### ԵՅԹՆ ՕՐ ԵՅԹ ԳԻՂԵՐ

Եօթն օր, Եօթ գիշեր  
 Չամամն ի գօտիս թողմըշեր,  
 Եար մեզիկ զըռնէն չ'հլներ,  
 Փըշուր մի սիրտ մեզիկ հովնէր:

Վայ, լօ, վայ, լօ, վայ, լօ, վայ լօ:

Եարսի խոովաւ,  
 Շամամ թողումաւ.  
 Հովիւ խըռովաւ,  
 Ոչխար մոլորաւ.  
 Բերուր շիւարաւ.  
 Կըթոց զըլորաւ:

Արի, Եար, արի, խըռով մի կենա,  
 Աստըւորիս բան ձի, բե չի մընա:  
 Առնեմ ըզգամբուրէս.  
 Ենեմ բու մամու երգիս,  
 Զիմ կարու ձէն լըսես,  
 Անուշ բընէզի գարթիս:

Բոստան եմ զըրի  
 Վերե կն դարին.  
 Աստուած շէն պահէ  
 Էս տարուան տարին.

Չամամ մի չեղաւ,  
 Ուղարկեմ եարին:

Արի, Եար, արի, խըռով մի կենա,  
 Աստըւորիս բան ձի, բե չի մընա:  
 Ազջի էրեցայ բու գարդէն,  
 Գամ նըստիմ բու հէրանց բաղչէն,  
 Էնքան գարնեմ, Էնքան ասեմ,  
 Չուր հալի միս, թափի իմ ջանէն:

Արթուն, թէ բնած.  
 Ընկել եմ բու փէշ.  
 Խոցերս շատ են,  
 Մի անի ինձ գէշ.  
 Կը մեռնիմ սիրովդ,  
 Կը տեսնես իմ լէշ:

Կանչեմ Եար, արի, -- եարիկ ձէն չի տայ,  
 Ընկեր բաղցըր բուն, անունս էլ չի տայ:

Էսօր բեզի ապով ինձ Էնքան են գարկած,  
 Զիմ արիւն զըզած բամբկով են բրունած,  
 Հում աբըրշումով վէրբերս են կարած,  
 Նարաթ շաքարով խոցերս են բաղած:  
 Վայ, լօ, վայ, լօ, վայ, լօ, վայ, լօ:

Երթամ պրզտի գեղ.  
 Առնեմ նուկիմ եղ.  
 Իմ եարի համար  
 Անեմ ձուածեղ.  
 Տանեմ հովրուուն,  
 Ձի չը դընի մեղ:

Արի եւր, արի. խըռով մի կենա,  
 Աստըւորի բան ձի, բե չի մընա.

Ինչ իմ աչք ընկաւ բու կարմիր երեսաց,  
 Էնպէս՝ ինչ վարդ ռեհան վեր ձի չեն շարժած  
 Դու արի մէկ պագ առ կարմիր երեսաց,  
 Թող գարկած եղնին ինձի թամամած:

Էրին, էրերին  
 Ոչխար վեր բերին.  
 Կըթենք թուխ մաքին,  
 Լըցենք սուրահին  
 Խորոված գինով  
 Ուղարկենք եարին:

Արի, եւր, արի խըռով մի կենա,  
 Աստըւորի բան ձի, բե, չի՛ մընա:

Տըզայ, դու, մի վախի,  
 Վագ ես կերթամ իմ հէրանց բաղչէն,

Դու արի ես մէկ պագ տամ բեզի,  
 Ես քո տըղայ սիրտ ինձնէ չեմ թորկի:

Իմ հէրանց իզին  
 Վարթ հագար թաւուր.  
 Մէջ էն վարդերուն  
 Իմ վարդն է բաֆուր.  
 Շահ բըլբուլն իջաւ  
 Վեր իմ վարդին հիւր:

Արի, եւր, արի, խըռով մի կենա,  
 Սուտ, փուչ աստըւորձի, բե չի մընա:

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԳՆԱ ՍԻՐՈՒՆ


Մեր տան ետե ըռասուն կարաս,  
 Քառասուն կարասի գինին էր խաս,  
 Օսկէ գիւզիւմ արծըթէ թաս,  
 Ամեն թասին պագիկ մի տաս:

Արի սիրուն, գնա սիրուն,  
 Հագար էրանեկ քո տիրուն:

Մեր տուն ձեր տան մօտիկ—մօտիկ,  
 Դու կապել ես կարմիր գօտիկ,

Էրթանք բաղենք կանաչ խոտիկ,  
Տենանք վիր հարն է խօրօտիկ:

Քամին էկաւ էրան—էրան,  
Գնաց հասաւ Մշու բերան,  
Մշու հաւեր թեւաւորան,  
Քեալաշի տուն սեւաւորան:



### ԹՈՒԽ ՓՈՒՂՈՎ ԱՂՋԻԿ

Շարաֆով, թուխ փուշով աղջիկ, բոլոր յերեսք  
Ձեմ գինայ յմաստի գիգաս, դուն մոլորել ես:

Ախշի, քու գլուխն է դրած կամիր ջրայ,  
Հէրիք է, հեա վգնոցիդ մալուլ մը խնդայ,  
Ես ու դու արի եար էգնինք խօրօտ Սավգուլ,  
Քալալու աղջիկ իս դու, ես էլ խեղճ տղայ:

Իմ ու քու նանի մէջ՝ թող Աստուած դատէ,  
Սավգուլ ջան, մէ իրիշկելդ ձիկ շատ ու շատ է,  
Մօակցի, մի փախենայ, քու անուշ եարն իմ,  
Փաթաթուի, իմ վիզ գրկէ, մի ասի եատ է:

Քու խերանց դուռ ու յերդիս մենձ պար ու խաղէ,  
Էդ սիվտակ գոշիդ խամալ, իմ սիրան ի դաղ է:

Ձիմ սէֆիլ—բալալու բաշ խօրօտիկ Սավգուլ,  
Ձեմ գինայ յօրբ՝ ըդման սիրադ վրէս պաղ է:

Պատվական ու խօրօտիկ բճեր ես խաքէ,  
Լուսվընէ շուր իրիկուն ձրր դունն իմ չոքէ,  
Քու սէրսուփ խաթեր խամար յըմէն լուս ու մութ  
Վըր ծնկան ես չօքէչօք խօրդ ձեռն իմ պաքէ:

Աշխրբի դարդ—խասաւաթ քըզի՞ է տուած,  
Օրթէ գիս գետին կու տփիս, ախ անաստուած,  
Քու սէրն էփեց ու վառեց, շիվար մացի,  
Ձենք գինէ թը յիանէ յէր իր խոտված,

Քու ձեռնէն բրորաւ սիրաս. էդայ դարբէդար  
Քանդեցիր զիմ տուն ու աեղ, քցեցիր չոր քար,  
Հարի եք մնամ բրինդար, չէ քո խղաթն իմ,  
Մէդք արի խանէ քու քով, իմ բէֆալու եար:

Կող ու կուշտս կպաւ գետնէն ճամբախըդ իշելով,  
Մեռայ, ես շատ տըպայ քու փէշ քաշելով,  
Ձիս մոռացար աղբըսի պէս դունէ գուռ քըցիր,  
Թորկեցիր շիվար ու խեղճ, ան—վախ քաշելով:

Մընիմ քու սըռսուռ ծամին ու բարակ բաժին,  
Քու ծամերն ու թուխ աչեր աշխարք կու աժին,  
Իլլահի քու թելու բօյն ու կեռ-կեռ ունքեր...  
Ի՞նչ կեղնի էդ քու մասներ հեղմ գլօխս մաժին:

### ՀՕԴԱԼԼՕ ՋԱՆ

Հօ դալլօ, ջան, հօդալլօ, ջան, հօդալլօ,  
Աղջիկ սիրուն, անղջիկ անուշ, դալալլօ:

Կայնել ես աղբերակին,  
Հօդալլօ, ջան, հօդալլօ.

Շող կըտաս արեգակին.  
Դալալլօ ջան, դալալլօ.

Քո շող երեսին մեռնեմ,  
Հօդալլօ, ջան, հօդալլօ.

Անքերիդ աղեղնակին:  
Դալալլօ, ջան, դալալլօ:

Մազերդ ոլորել ա,  
Աչերըդ բոլորել ա.  
Երկ' օր ա, չեմ տեսել,  
Իմ սիրար մոլորել ա:

Փող ես ուզում, քեզ փող տամ,  
Ոսկի տամ. ոչ թէ հող տամ.  
Թէ դըրան էլ հաւան չես,  
Հողիս հանեմ, քեզ փոխ տամ:



### ԽՂՃՈՒԿԻ ԼԱՅԸ

Ի՛մալ պըտի էնինք, ես լէ չեմ գինա,  
Որ չըթորկինք քոչինք մըր տուն ու վաթան,  
Չունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,  
Հիմկուց յետև տեսնանք, փոխինք, զմեր բան:

Իդա խարիպութեն աւերեց զմըր տուն,  
Կը թորկինք հեռենանք ճըթերսի սիրուն,  
Լալով մընք հաց կուտինք չոլրի յիրիկուն,  
Էլ եր միտք կու բերինք մըր խեղճ Սայաստան:

Սէֆիլցեր՝ կըդողանք քրտերու առաջ,  
Տաճկին դանգատ կէնինք, չի էնէ ահանջ,  
Ծանարցուցեր է մըր վըէն խարջ-խարաջ,  
Խղճեցրեր պարտքնտէր, քեաֆիր խարկախան:

Թորկած խօրտ հանդերս, թորկած սիրելիս,  
Թորկած Չամալ եզս, թորկած Մարալիս,  
Ես Ստամբոլ կըրթանք, ես թէ չէ Թիֆլիս,  
Էնտեղ աչքներս առած ինք սև գերեզման:





Հ Ա Բ Ը Ր Բ Ա Ն

Տղայ. Հանրաբան:

Աղջիկ. Զանկ ջան:

Տղայ. Սիրել եմ սերն երեսին,  
Անթառամ թերն երեսին.  
Ով իմ սիրածն ինձ չի տայ,  
Ասարծու կերն երեսին:

Աղջիկ. Հանրաբան:

Տղայ. Զանկ ջան:

Աղջիկ. Սարի թըրթնջուկ թագա,  
Մեզը ու շաքար քեզ մագա,  
Ինձ պէս նազանի աղջիկ  
Քեզ պէս տըղին ո՞նց սաղայ:

Տղայ. Պըզտիկ աղջիկ, համ ունիս,  
Զորեքդիմաց ծամ ունիս.  
Խունջիկ-մունջիկ մի անի,  
Ինձ առնելու կամ ունիս:

Աղջիկ. Գութանըդ հոլա, հոլա,  
Գութանիդ տակը քոլ ա.  
Քանի գըժութիւն անես,  
Քեզի առնողը տոլ ա:

Տղայ. Ձեր տան տակին վար կանեմ,  
Ձար ագռաւին քար կանեմ.  
Թող իմ սիրածն ինձի տան,  
Գըժութիւնըս թարկ անեմ:

Աղջիկ. Զուրը իր ճամբով կերթայ,  
Յողածը վարդի թերթ ա.  
Ինձ սիրող կըտորի՞ն տղէն  
Հագարի մէջ մի բերդ ա:

Տղայ. Բուսել ես բաղի միջին,  
Շամամի թաղի միջին.  
Գիշեր ցերեկ միալար,  
Դու ես իմ խաղի միջին:

Աղջիկ. Աշուղի պէս խաղ ասա,  
Բըլբուլի պէս տաղ ասա.  
Ինչքան որ գովես՝ արժեմ,  
Իմ մօր գովական փեսայ:

Վ Ա Ր Գ. Կ Ո Ղ Ի Կ Ս

Վարդ կոշիկս, վարդ կոշիկս,  
Վարդից գեղեցիկ մաշիկս:

— Մեր տան մէջը քնող տղայ,  
Կարմիր խնձոր ծախող տղայ,  
Վարդ կօշիկս գտնող տղայ,  
Տղայ, զրկէ վարդ կօշիկս:

— Ձեր տան մէջը քնել չեմ ես,  
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,  
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,  
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

— Լաւ օրս եղաւ ան ու վախ.  
Կորցուցի կօշիկս, աւանդ,  
Հայ տղայ, հոգութ մատանդ.  
Տղայ, զրկէ վարդ կօշիկս:

— Որ մօտս չէ ուրտից ճարեմ,  
Ազնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,  
Եթէ գտնեմ յետ կուզարկեմ.  
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

— Մի՛ մնար ինձի պարտական,  
Աղջիկ եմ, տաս-չորս տարեկան,  
Ես կը լինիմ քեզ սիրական,  
Տղայ, զրկէ վարդ կօշիկս:

— Ինչո՞ւ, մնամ քեզ պարտական,  
Կամիս՝ տամ հազար դահեկան,  
Եթէ կըլնես ինձ սիրական՝  
Ես կ'ճարեմ վարդ կօշիկդ:

Ս Օ Խ Ա Կ.

Առաւօտուայ արշալուսին,  
Երգում եմ, անուշիկ սոխակ,  
Կարմիր վարդն է քոյ ամուսին,  
Դու խօսէ, քնքուշիկ սոխակ:

Դու վարդի սիրոյն ես տարուած,  
Նորա համար ես մոլորուած,  
Ինչո՞ւ ես այդքան զբաւված,  
Երբ չունիս նմուշիկ սոխակ:

Վարդի բացուելուն կարօտ ես,  
Քուն մի լինիլ, բացուելը տես,  
Որ տերեւներէն հոտոտես,  
Ման արի զգուշիկ սոխակ:

Ֆիզահն եմ, քեզ գովեմ ձրի,  
Աստուած խորհուրդդ կատարի,  
Զգոյշ կաց, որ քեզ չը խրի  
Վարդենու սուր փշիկ, սոխակ:

Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ

Աշխարհին եղիբ պատուական,  
Որ բեզ ասեմ մարդ բանական,  
Թշնամիք ցաւերդ իմացան,  
Վերբդ արին հարիւր հողագործ:

Քու թշնամիքդ շունին վարբ,  
Քեզ հետ միշտ խօսում են անկարգ,  
Պատարկ կուժդ լիք փարչին գարկ,  
Ուժովդ ամուր, հողագործ:

Մի բնիբ, գործդ կատարէ,  
Որ բեզ շասեն թէ անճար է,  
Ունեցած դաշտերդ վարէ,  
Թոռներուդ ձայն տուր, հողագործ:

Միշտ դու գործիդ արի կեցի,  
Միտ սու, բեզ այսբան գովեցի.  
Շատ պահէ հաց, ոշխար ու ձի,  
Չեռքդ սու թակ, դուր, հողագործ:

Խրատ արան ականջիդ օդ  
Աստուած է հարազատ ծնող,  
Ֆիլգահն եմ այլոց խրատող,  
Վարբովս տխուր, հողագործ:

Ղ Է Լ Է Ն Տ Է Ր Ի .

Ինձ մոռացել է սրտովը ազնիւ սիրականս,  
Երբ կամի կանէ ինձի հետ կուի սիրականս:  
Հնուց մնացած բարիքները թողեց ու գնաց,  
Սրանից յետ պահանջում է հաշիւ սիրականս:

Պեանրս որ նուիրեմ սիրոյն համար բիշ է ամեն ժամ,  
Պուտայ սիրովը ինձի միշտ պատիւ սիրական.  
Թէ որ սլանայ, երկնքի գաւառը կըհասնի,  
Այսպէս շնորհաց թուշուն է—արծիւ սիրականս:

Խելագարի պէս գօր ու գիշեր բեզի եմ կանչում,  
Ֆիլգահուս սրտի մէջ շրջող ազնիւ սիրականս:



Ղ Ո Ւ Ր Բ Ա Թ . Ի 3

Խուլ հառաչանք, բեկ-բեկ ձայներ են ամեն կողմ  
հնչում...  
Անցորդն է այս... ազօթք է նա արեօք, ջերմ-ջերմ մըմնջում.  
Թէ անէձք է գան սրտով կարգում պատած խաւարին,  
Կամ չլինի՞ շար ողին է բունել նրբան ու սանջում...

Սակայն ոգին իւր զօրութեամբ գուցէ գողար նըրանից,  
Գուցէ յըզին անիծելով՝ վիժէր պտուղն արգանդից,  
Եթէ անգամ միայն նայէր նրա գէմքին թիւնալից:

Տիեզերքի ամբողջ թոյնը նա ժողուել է երեսին,  
Կարծես մարտի է կոչելու չարախորհուրդ Իրիսին,  
Եւ կարծես թէ սև ամպերի բիւր սլաքներ կայծակի  
Նա ուզում է ողջ աշխարհի գլխին զարկել շեշտակի:

Շանթ ու կրրակ է դուրս ցայտում իւր աչքերից  
Եւ շլապինդ բոռնցքներ է երկնցընում երկընքին:  
Բօայի պէս գալարւելով հանած բերնից չար լեզուն,  
Նա ոռնում է և սուր ձայնը ձգձգում է շատ հեռուն...

«Ո՞վ զօրութիւն, որ ամենքը քեզ կոչում են Նստած,  
Որ աթոռդ եթերից վեր, երկնքումն ես հաստատած,  
Որ բիւրաւոր հրեշտակներ խոնարհւում են առաջիդ,  
Ասն, արդեօք, մեր հեկեկանք հասնում են քո ականջիդ:

Այդքան բարձրից տեսնում ես դու արիւնագարդ այս  
լճեր,

Կամ լրսում ես որդեկորոյս, սրտակոտոր մօր ճիչեր:  
Չկաս, չկաս, այո, չկաս, չեմ հաւատում, որ դու կաս  
Եւ յիմար են, որ ասում են, թէ զօրութիւնդ է անհաս:

Տանջեց, խաչեց դաժան քիւրդը բազմաշարչար Հայերին  
Սակայն անհաս զօրութեամբդ երբ օգնեցիր տըկարին:  
Հայի ձայնը դղրդալով՝ հասաւ մինչև բեռներ:

Կայծակի պէս՝ այրեց, շանթեց խղճահարւած շատ  
սրտեր,

Իսկ երբ սիրադ գէթ մազի չափ տեղից շարժւեց զայրոյթից.  
Ե՞րբ բոց ու հուր դաժան քրդին պատիժ տւիր երկնքից...

Իմ բազմանդամ ընտանիքից ինձ թողեցիր մի որդի.  
Թէ նրան էլ զո՞հ ես տալու կուսածարաւ լիբբ քրդի,  
Թո՞ղ սատանան զինէ՛ ինձ բիւր նիզակներով գժողքի,  
Որ կործանեմ ես դոները անարգար երկնքի:»

Արամայիս

Վ Ա Տ Ը Ն Կ Ե Ր

Վատ ընկերդ հեռանում է,  
Կուզէ էրթայ, թող տուր էրթայ,  
Լաւութիւնդ մոռանում է,  
Գնալու է թոյլ տուր էրթայ:

Նա որ յարգութիւնդ չը գիտէ,  
Էրած բարութիւնդ չը գիտէ:

Մարդ չէ մարդկութիւնդ չը գիտէ,  
Գնալու է թոյլ տուր էրթայ,

Որքան նրան քարոզեցի,  
Ասի գէշից հեռու կացիր,  
Վերջապէս չը համոզեցի,  
Եթէ կերթայ թող տուր էրթայ,

Ինքն իրան կարծում է դպիր,  
Խելք չունի գլխի մէջ ընտիր,  
Ֆիզահու պէս օտար երկիր,  
Նա որ կերթայ, թող տուր էրթայ:

### ԿՈՉ ՄԻՈՒԹԵԱՆ

Սպերախտ ենք մենք հայերըս,  
Քեզի մոռացանք հայրենիք.  
Մեր սերունդը մեր ետևից  
Պիտի կարգայ նախատինք:

Եղեմական դրախտ էիր  
Դու մեզ համար, Հայաստան.  
Միթէ հիմայ գժոխք դառար  
Դու, սիրելի բուրաստան:

Սեփական շահերի համար  
Մոռացել ենք ազգութիւն.  
Եղբայր եղբօր գէմ ենք կանգնել  
Այդպէս է արդարութիւն:

Գերութիւնը միթէ մեզի  
Վիճակած է անպայման.  
Մինչև երբ մենք ման պիտի գանք  
Այսպէս խեղճ, թափառական:

Երգիչ Միջազը խնդրում է,  
Կապեցէք սէր միութիւն,  
Միայն սիրով պիտի գանենք  
Խեղճ հայերըս փրկութիւն:

### ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ

(Ուսկաղարի եղանակով)

Մի պարտեզից անց կենալիս տեսայ մի ծաղիկ,  
Վարդ ծաղկի մօտն էր կանգնած մի հայ ազջիկ,  
Աչքն ու ունքն լուսով պատած շքեղ գեղեցիկ,  
Միբունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,  
Ով որ մեզ բամբասում է լեզուն անուի:

Լուս երեսը տեսնելու պէս սիրուն զարկուայ  
Երակներս շարժուեցան գոյնով ներկուայ,

Իւր նազելի դէմքը տեսայ կեանքիցս զրկուայ,  
Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի:  
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի:

Նրա սէրն իմ սրտիս մէջ անբաժան սէր է,  
Ինչպէս անմարելի կրակ իմ սիրաս կէրէ,  
Այսքան սիրով տանջուելս թող աստուած ներէ,  
Սիրունն իմս է, ես սիրունին, ով կը խառնուի:  
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի:

Ակնարկելով իւր պատկերին դառայ խելագար,  
Եթէ նրան ինձի շը տան մահուան եմ յօժար,  
Քաղցր համեղ բերան ունէր և լեզուն ճարտար,  
Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,  
Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի:



### Ի ՄԱՀ ԲԱՖՖԻԻ

Վրհասած հոգուս ցաւած խորքերից՝  
Աշխոյժ, արթնացիր, — կրկին ոգի առ,  
Տուր ինձ, արիւնոտ սրտիս թելերից  
Մի պսակ հիւսեմ անմահի համար:

Անմահ Բաֆֆիի սուրբ յիշատակին՝  
Իերում եմ անս ի ձօն այս հիւսած,

Ազգիս բազմաշխատ ազնիւ մըշակին՝  
Ես-էլ ուզում եմ տալ յարգանք յուզւած:

Գնւեցան, մի գուժիր, թէ Բաֆֆին մեռաւ,  
Նա անանց կեանքով միշտ կայ կենդանի, —  
Դարեր կըսանեն, նա դեռ անզրաւ  
Հայ սերնդոց մէջ երկար կեանք ունի:—

Նորա վեհ մըտքի վայլուն ծընունդներ —  
«Կայծեր», «Սամապի մելիքութիւններ»,  
«Սամուէր, Փընջեր, Խենթ, Դաւիթ-Ի՛եգեր»  
Կընծայեն Հային նոր կեանքի մտքեր...

Ճանապարհ տուէք, Բաֆֆին անցնում է,  
Ուսերին բարձած բէռն անմահութեան...  
Տեսէք հեաքերը որչափ հընձում է  
Համայն հայ ազգից զավնիք գոնութեան:

Թող Բաֆֆին երթայ, կայթէ այն կաճառ՝  
Ուր հանդիսացած կան մեր մեծ մարդիկ, —  
Բայց հայը ընդմիշտ նորա ձիրքն ու հանճար  
Կը յարգէ անկեղծ քնքոյշ զերթ վարդիկ:

Անցիր, պացիր դու երկնի խորան,  
Ով յաւերժացած լուսափայլ հոգի, —  
Բայց քո վաստակին կըտան նոր ոգի,  
Նոր շունչ Հայերին վերածնութեան...

Անցաւ և Բաֆֆին ինչպէս մի յաղթող:  
 Եւ պայծառ հետքը թողեց աշխարհում:  
 Սերնդից սերունդ նա կանգնեց կոթող,  
 Նըշան անմուաց հայոց սրտերում...:



Ղ Օ Շ Մ Ա Յ.

Երանի այն աւուր կուտամ յարաժամ,  
 Հայրենիքէս եթէ բարի լուր լսեմ,  
 Ողբամ ու կաղերսամ կենացը անգամ,  
 Վառուած բերանովս երգեր կսկսեմ:

Եթէ Տէրս տացցէ ինձ իմաստութիւն,  
 Այն բոպէին կունենամ ծանր բնութիւն,  
 Սրտիս մէջ չը ճարուի ոխ կամ դառնութիւն,  
 Ի՞նչ պէտքս է, որ ես այլոց բամբասեմ:

Որք Ֆիդահն եմ, պապիս հին արմատիցը,  
 Ծնուել եմ հայկական որբ աղքատիցը,  
 Մի քար է մնացել պապիս պատիցը,  
 Համբուրելով զոյգ աչքերիս կը քսեմ:



Բ Ո Ղ Ո Ք

Ծխում է խունկը աւեր տաճարում:  
 Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,  
 Տառապեալ հօտը հովիւն է կանչում  
 Արիւնաշաղաղ, մերկ, լալահառաչ:

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ  
 Գերեզմանատան նիրհը խանգարած,  
 Հողակոյտներն են արցունքով ծածկել  
 Եւ դարձեալ օրհնում քո կամքը, Աստուած:

Բայց ո՞ւր ես Աստուած, ինչո՞ւ չես լսում  
 Հալածեալ հօտիդ աղերսը արդար  
 Որ քո սուրբ անւան համար այս կեանքում  
 Արիւն արցունք է թափել, դարէդար:

Նա, որ ամէն բան զոհել քեզ համար  
 Վանքեր, տաճարներ կառուցել շքեղ.  
 Որ իր թանկ որդոց արիւնով արդար  
 Ներկել քո անւան կուրի դաշտն անեղ:

Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին  
 Երբ հալածում է անսիրտ, չարաչար,  
 Կրկին քո գութն է հայցում լալագին  
 Արհամարելով մարգիկ և աշխարհ:

Բայց զիտցիւր, Աստուած, որ քո ստեղծած  
 Ամենաանգութ ոճրագործը անգամ,

Գիտէ յետ առնել սուրբ չներկած  
Արտասուող զոհերի արիւնով անպարտ...

Բայց որոնց բայլը դու անիծել ես  
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում,  
Եւ որոնց համար տանջանքով պէս պէս  
Դժողք յարգարել անտի աշխարհում...

Իսկ թէ քո կուրծքը ծարաւի է գեռ  
Էծիդ տակ հեծող ստրկի արեան,  
Ահա պատրաստ եմ արձակիր փճիռ  
Եւ դատապարտիր ինձ անմահութեան:

Թաղիր ինձ ողջ ողջ գերեզմանի մէջ  
Եւ շրջապատիր անմահ սրգերով...  
Բորբոքիր խարոյկ գեհեհու անշէջ  
Ուր նետւիմ անվախ, այլւիմ դարերով:

Եւ կամ երկնքի բարձրում անկործան  
Խաչ տնկիր անեղ փշերից հիւսած,  
Ուր ես բեռուած անվերջ, անվախճան  
Քաւեմ մեղքերը հօտիդ... չգործած:

Կամ այլ տանջանքներ: որ ասուածային  
Միտքը կարող է երևակայել...  
Լոկ թէ դորանով հալածեալ հօտին  
Մի անկապտելի ազատ կեանք գնեմ:

Վասպանգի

### Յ Ա Ն Կ

	Երես
Երկու խօսք . . . . .	3
Խաղաղութիւն ձեզ Ա. Ծատուրեան . . . . .	5
Մեր մայրերուն Վտարանգի . . . . .	6
Ազատութեան զանգ Աւ. Իսահակեան . . . . .	7
Ազիզ մէրիկ Հայ Գուսան . . . . .	9
Գութանի երգը. Յ. Թումանեան . . . . .	10
Ընկերին . . . . .	11
Պատիւ . . . . .	12
Սագոյի երգը . . . . .	—
Պռունկին . . . . .	13
Վանեցի մօր երգը . . . . .	14
Յորդոր հային . . . . .	15
Երսկ. Ս. Շահազիզ . . . . .	16
Մենակի նուիրական ստուէրին Աւ. Իսահակեան . . . . .	17
Հայերին . . . . .	18
Մի վհատիւր ժիրայր . . . . .	19
Գէորգ Չաուշի յիշատակին . . . . .	20
Երզումն Գամառ-Քաթիպայ . . . . .	21
Մշեցու մօր ազաչանքը Չարխի-Փալար . . . . .	22
Ա. խ մեր սիրտը Աւ. Իսահակեան . . . . .	23
Խարրերը կռունկ 2. Փ. . . . .	24





Գէթ մի անգամ Չուշանիկ Կուրղինեան . . . . .	27
Բլբուլին Չուշանիկ Կուրղինեան . . . . .	28
Յաւանջ անվեհեր Չուշանիկ Կուրղինեան . . . . .	29
Մօր Սուգը . . . . .	30
Նպատակ . . . . .	—
Գէպի մարտ . . . . .	32
Որդու կտակը . . . . .	33
Գամառ-Քաթիպայի յիշատակին Ա. Ծատուրեան	34
Մենք պէտք է կուենք . . . . .	36
✓ Մենակի յիշատակին . . . . .	37
Փառք ի բարձունս Իշխան. Շ. Կուրղինեան	39
Եկան ու անցան . . . . .	40
Գարուն Զիւանի . . . . .	41
✓ Երկուսը մէկ են Զիւանի . . . . .	42
Հպարտ տիկին . . . . .	43
Թուրքը և հայը Զիւանի . . . . .	44
Հաշտութեան հրեշտակ . . . . .	45
Չար դեր Զիւանի . . . . .	46
Տրտունջ . . . . .	47
Մեր զրութիւնը Զիւանի . . . . .	48
Մէկ է Զիւանի . . . . .	49
Նախազգացում Զիւանի . . . . .	50
Ինչ ասին Զիւանի . . . . .	51
Միաբանութիւն Զիւանի . . . . .	52
Ըխալու մասին Զիւանի . . . . .	53
Ղազախեցի Սարգիսը . . . . .	54
Նոր կեանք Ջամալի . . . . .	55
Անկեղծ խորհուրդ ընկերիս Ջամալի . . . . .	56

2րի ազգասէրներին Ջամալի . . . . .	57
Միութիւն Ջամալի . . . . .	58
Ներկայ կեանքից Ջամալի . . . . .	—
59	59
Անփորձութիւն Ջամալի . . . . .	61
Որբի վիճակը Ջամալի . . . . .	—
Տաճկահայի թշուառութիւնը Ջամալի . . . . .	62
Անմեղ հալածանք Ջամալի . . . . .	63
Հայ աշուղ Ջամալի . . . . .	64
Հայերիս վերջին ուխտը . . . . .	65
Լաց մէրիկ ջան . Իսահակեան . . . . .	66
Կուի կարօտը Եղնիկ . . . . .	67
Երկրի ձայնը Եղնիկ . . . . .	68
Հոգ չէ թէ մեռնեմ Արփենիկ . . . . .	70
Չայն տուր ամենքին Արփենիկ . . . . .	71
Տապանագիր Ա. Ծատուրեան . . . . .	72
Անդրանիկին . . . . .	73
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր . . . . .	74
Վանեցոյ Չունուազը Գամառ-Քաթիպա . . . . .	75
Վերջալուսին Հ. Անուշեան . . . . .	76
Հայ զինուորի երդումը . . . . .	77
Հոգիս կուտամ . . . . .	78
Մահապարտի երգը Անոփրիոս Անոփեան . . . . .	79
Խղճուկի ձէն . . . . .	80
Ազատութեան մարտիկներին Արփենիկ . . . . .	81
Թշուառ ժողովուրդ Արփենիկ . . . . .	82
Կը հիւսեմ երգեր . . . . .	83
✓ Կեցցէն շարքերը Արփենիկ . . . . .	—

Թումանին և իւր ընկերներին . . . . .	84
Մենք անկեղծ զինուոր ենք. . . . .	85
Քաջ Անդրանիկին . . . . .	86
Դարդս լացէք Ա. Իսահակեան . . . . .	87
Ախ տւէք ինձ Յ. Յովհաննիսեան . . . . .	88
Օխտը սարով Ա. Իսահակեան . . . . .	89
Խաղաղ դաշտի որդիք . . . . .	90
Յասօի երգը Բաֆֆի. . . . .	91
Սասունայ սար Զիւանի . . . . .	92
Երգ զինուորի . . . . .	93
Նաւրոզի երգը . . . . .	94
Նոր կեանք Վէտա . . . . .	95
Արեն իջաւ Աւ. Իսահակեան . . . . .	96
Կարօի յիշատակին Ալօ . . . . .	97
Տաճկահայերի օրհաս Գամառ-Քաթիպայ . . . . .	99
Մայրիկիս . . . . .	100
Կովկասի երկինք Զիւանի . . . . .	101
Մօր սուգը Յար. Պետրոսեան . . . . .	102
Խրախոյս բաջերին . . . . .	103
Վանեցի մօր երգը . . . . .	104
Մեր այժմէութիւնը . . . . .	105
Յոյսեր . . . . .	106
Զինուորի երգ Ա. Ծատուրեան . . . . .	—
Պանդուխտ մշեցու երգը . . . . .	107
Աղասի Խ. Աբովեան . . . . .	109
Հայրենիք . . . . .	111
Տաճկահայաստանի 1896 թ. Կոտորածին . . . . .	112

1904 թ. Սասունում ընկած ընկերներին . . . . .	114
Կոչ Հայ երիտասարդաց . . . . .	115
Քայլերդ Դաշնակցութեան Տ. Պ. . . . .	116
Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում . . . . .	117
Խնամին . . . . .	118
Այսպէս եմ հասկանում . . . . .	119
Գեղջուկի տաղ. . . . .	120
Որդին . . . . .	121
Մայրական բնագոյ . . . . .	122
Մաղթանք . . . . .	123
Յոյս . . . . .	—
Մշեցու նոր սերունդ Ռ. Պատկանեան. . . . .	124
Մատաղը «Թումօ»-ից Արամայիս . . . . .	125
Յիշիր ժամը այն երջանիկ . . . . .	128
Թաղման բայլերդ . . . . .	129
Թող ես մշակ լինեմ Զիւանի . . . . .	131
✓ Արմէն Ղազարեանի յիշատակին . . . . .	—
Խրախոյս . . . . .	133
Ներկայի պահանջը Զամալի . . . . .	134
Նւէր Անդրանիկին Զամալի . . . . .	135
Անվերջ դաւեր Զամալի . . . . .	136
Մեր արշալոյսը Վտարանդի . . . . .	137
Մնաք բարով արև գարուն Յ. Յովհաննիսեան . . . . .	—
Զանկի Թորոս . . . . .	138
Երրորդութիւն Զամալի . . . . .	139
Թումանի երգը. . . . .	140
Բլբուլ ժիրայր . . . . .	141

Արագին . . . . .	142
Գէպի մարտ . . . . .	144
Ինձ մի խնդրի . . . . .	145
Ճակատագիր . . . . .	146
Ռ՛վ շի սիրել... . . . . .	147
Որսկան ախպէր Ա. Իսահակեան . . . . .	149
Յառաջ . . . . .	150
Ձէյթունի քայլերդ . . . . .	151
Չախորդ օրերը . . . . .	152
Հերոս դու անցար Ա. Ծատուրեան . . . . .	153
Ընձրեն եկաւ . . . . .	154
Անէծք Ս. Թ. . . . .	—
Էլ չունիմ Ջիւանի . . . . .	156
Յոյս . . . . .	157
Լաւ գուշակութիւն . . . . .	158
Բաւական է ըուն Տ. Պ. . . . .	—
Ոչ յոյս այլ գործ Տ. Պ . . . . .	159
Սիրականի գանգատը . . . . .	160
Քրդական մարշ . . . . .	162
Ազլուխս կորաւ . . . . .	163
Ախպէր ջան . . . . .	165
Հոյ նազան իմ , . . . . .	166
ձամբայ տուէք . . . . .	167
Ղարսեցոց երգ . . . . .	—
Արագն եկաւ լափին տալով . . . . .	168
Մարալօ ջան . . . . .	169
Էս գիշեր լուսնեակ զիշեր . . . . .	172

Շողեր ջան . . . . .	173
Ալագեազ . . . . .	174
Ծամթէլ . . . . .	176
Խանում էւա ջան . . . . .	179
Գնա եարօ ջան . . . . .	180
Հով արէք սարեր . . . . .	181
Լուսնակն անուշ . . . . .	182
Սևիկ աշեր . . . . .	183
Ալ ու ալւան . . . . .	184
Էլի եարիս եմ գովում . . . . .	186
Սիրոյ տաղերից . . . . .	187
Սոնա եար . . . . .	188
Շողեր ջան . . . . .	189
Խնկի ծառը . . . . .	191
Խանում եւա ջան . . . . .	192
Մանանի երգը . . . . .	193
Լորիկ . . . . .	194
Տուն արի տուն արի . . . . .	195
Եօթն օր եօթ գիշեր . . . . .	196
Էսօր բեզի ապով ինձ էնքան են զարկած . . . . .	197
Արի սիրուն գնա սիրուն . . . . .	199
Թուխ փուշով աղջիկ . . . . .	200
Հօգալլօ ջան . . . . .	202
Խղճուկի լացը . . . . .	203
Հաբբբան . . . . .	204
Վարդ կոշիկս . . . . .	205
Սոխակ . . . . .	207

Հողագործ . . . . .	208
Ղէլէնաէրի . . . . .	209
Ղուրբաթից . . . . .	—
Վատ ընկեր . . . . .	211
Կոչ միութեան . . . . .	212
Նրգ սիրահարութեան . . . . .	213
Ի մահ Րաֆֆիի . . . . .	214
Ղօշմայ . . . . .	216
Բողոք . . . . .	217



604.

h v k

	Арм.
	3-47662



Тифлиси Тифлиси, Дворянская ул. № 12 Степанъ  
 Мелик-Согомонянцъ иио Книжный маг. «Гуттенбергъ»  
 в Книжный магазинъ «Фаростъ» П. Матиняна и Тара-  
 яна  
 Баку Книжный Магазинъ Тараяна

24280

2013

